Վոլտեր

Բաբելոնի արքայադուստրը

Ռուսերենից թարգմանությունը Հասմիկ Ղազարյանի

«Դպիր» մանկավարժական հանդես

Բովանդակություն

1-ին գլուխ

2-րդ գլուխ

3-րդ գլուխ

4-րդ գլուխ

5-րդ գլուխ

6-րդ գլուխ

7-րդ գլուխ

8-րդ գլուխ

9-րդ գլուխ

10-րդ գլուխ

11-րդ գլուխ

1-ին գլուխ

Բաբելոնի տիրակալը՝ ծեր Բելը, իրեն մեծարում էր որպես մահկանացուների մեջ ընտրյալի, քանզի նրա բոլոր պալատականները միաբերան դա էին ասում, իսկ պատմաբաններն ամրապնդում էին փաստարկներով: Նրա փառասիրության արդարացում կարող էր լինել միայն այն, որ 30000 տարի առաջ, իրոք, նախնիներն էին հիմնել Բաբելոնը, իսկ ինքն անձամբ նպաստել էր քաղաքի բարեկարգմանը: Հայտնի է, որ նրա պալատն ու զբոսայգին տեղավորված էին Բաբելոնից մի քանի փաղանգի վրա, փռված էին Եփրատ ու Տիգրիս գետերի արանքում, որոնց ջրերը ողողում էին այդ չքնաղ ափերը: Լայնարձակ պալատը՝ ճակատային մասով՝ երեք հազար քայլ, հասնում էր մինչև ամպերը: Հարթ տանիքը շրջափակված էր 50 ֆուտ բարձրության սպիտակ մարմարյա կողաքարերով, իսկ վրան տեղադրված էին բոլոր արքաների և պետության մեծ այրերի հսկայական անդրիները: Աղյուսի երկու շերտից շարված այդ հարթ տանիքի վրա, որ ծայրից ծայր ծածկված էր արճճի խիտ շերտով, լցված էր հողի տասներկուֆուտանոց շերտ: Այդ հողի վրա աճում էին ձիթապտղի, նարնջի, արմավենու, մեխակի, կոկոսի և դարչինի ծառերի՝ ծառուղիներ կազմող ամբողջ անտառներ, որոնք անթափանց էին արևի ճառագայթների համար: Եփրատի ջրերը, որ պոմպով մղվում էին հարյուրավոր դատարկ սյուներով դեպի վեր, հոսում էին այդ ծառերի արանքով՝ լցնելով ընդարձակ մարմարյա լողավազանները և հետո թափվում ներքև ուրիշ ջրանցքներով ու ձևավորում զբոսայգում 6000 ֆուտ երկարությամբ ջրվեժներ և 100000 շատրվաններ, որոնք խփում էին այնքան բարձր, որ ջրի շիթերի կատարները հազիվ էին նշմարվում. հետո ջրերը նորից դառնում էին Եփրատի հունը:

Մի քանի հարյուրամյակ անց Շամիրամի՝ Ասիան շլացնող կախովի այգիները ընդամենը այս հին հրաշալիքների համեստ նմանակումն էին, քանի որ Շամիրամի օրոք սկսվել էր ինչպես արական, այնպես էլ իգական սեռերի անկումը:

Սակայն Բաբելոնում ամենաչքնաղը, որ ստվեր էր նետում մնացած ամեն ինչի վրա, թագավորի դուստրն էր՝ Ֆարմազանտան:

Դարեր անց նրա նկարների և քանդակների հիման վրա Պրակսիտելը քանդակեց Աֆրոդիտեին, որը հայտնի է Կալիպիգոսյան Վեներա անվանումով: Բայց, տեր Աստված, որքա՜ն մեծ է տարբերությունը բնօրինակի և կրկնօրինակի միջև: Եվ Բելը, հիրավի, իր դստերով ավելի էր հպարտանում, քան թագավորությամբ:

Աղջիկն արդեն տասնութ տարեկան էր: Ժամանակն էր արժանի ամուսին գտնելու: Բայց որտե՞ղ փնտրեին նրան: Շատ ծեր Գուշակը կանխորոշել էր, որ Ֆարմազանտան կպատկանի նրան, ով կարողանա Նեմրութի աղեղի լարը ձգել: Նեմրութը՝ աստծու ամենամեծ որսորդը, իրենից հետո յոթ ֆուտ երկարությամբ սև փայտից մի բաբելոնական նետ էր թողել, որը ավելի ամուր էր, քան Կովկասյան

լեռների երկաթը, որ կոփում են Դերբենտի դարբնոցներում: Ոչ մի մահկանացու Նեմրութի ժամանակներից ի վեր չէր կարողացել ճգել այդ կախարդական աղեղի լարը:

Կանխագուշակված էր նաև, որ այն ձեռքը, որ կճգի այդ աղեղը, կսատկացնի ամենասարսափելի, ամենադաժան առյուծին, ինչպիսիք լինում են միայն բաբելոնյան կրկեսի ասպարեզում: Բայց դա դեռ բոլորը չէր: Նետահարը՝ առյուծին հաղթողը, պետք է գերազանցեր իր բոլոր մրցակիցներին և, ամենագլխավորը, պետք է ունենար սուր միտք, լիներ ամենաուժեղն ու ամենաբարեգործը մարդկանց մեջ և տերը լիներ ամենահազվագյուտ գանձի, որ երբևէ գոյություն է ունեցել երկրի վրա:

Երեք տիրակալներ՝ եգիպտական փարավոնը, Հնդկաստանի շահը և սկյութների մեծ խանը, համարձակվեցին վիճարկել Ֆարմազանտայի ձեռքը:

Բելը նշանակեց մենամարտի օրը և դրա համար տեղ ընտրեց զբոսայգու հեռավոր անկյունում մի լայն դաշտ, որի ափերը ողողվում էին Եփրատի և Տիգրիսի միախառնված ջրերով: Մարտադաշտի շուրջը կանգնեցրին մարմարյա ամֆիթատրոն, որը կտեղավորեր հինգ հարյուր հազար հանդիսատես: Ամֆիթատրոնի դիմաց տեղադրեցին գահը արքայի, ով պիտի դուրս գար Ֆարմազանտայի հետ՝ իր պալատականների ուղեկցությամբ: Աջից ու ձախից՝ գահի ու ամֆիթատրոնի միջև, տեղ էր հատկացված երեք հավակնորդների և այն բոլոր թագավորների համար, ովքեր կցանկանային ներկա լինել այդ օգոստափառ տոնախմբությանը:

Առաջինը ներկայացավ Եգիպտոսի փարավոնը: Նա գալիս էր Սուրբ Ապիս ցուլի վրա, ձեռքին՝ աստվածուհի Իզիդայի սիստրը (քնարը): Նրան ուղեկցում էին 2000 ներքինի, 2000 մոգ և 2000 ռազմիկ: Նրանից հետո շուտով հայտնվեց Հնդկաստանի արքան՝ 12 փիղ լծած կառքով: Նա շրջապատված էր ավելի ճոխ ու բազմանդամ շքախմբով, քան Եգիպտոսի փարավոնը:

Վերջինը սկյութների արքան էր: Նրա հետ միայն ընտրյալ մարտիկներ էին՝ նետ ու աղեղով զինված: Արքան հեծել էր վարժեցրած հոյակապ մի վագր, որը նույնքան հաղթանդամ էր, որքան պարսկական ամենահրաշալի նժույգը: Իր փառահեղ կեցվածքով արքան ստվերում էր մրցակիցներին:

Նրա սպիտակ, մերկ մկանուտ ձեռքերը, թվում էր, արդեն ճգել են Նևրոդի աղեղը:

Տիրակալները փռվեցին հատակին՝ Բելի և Ֆարմազանտայի ոտքերի տակ: Եգիպտական փարավոնը ընծայեց արքայադստերը նեղոսյան երկու շատ գեղեցիկ կոկորդիլոս, երկու գետաձի, երկու վագերաձի, երկու եգիպտական առնետ, երկու

մումիա և Մեծ Հերմեսի գրքերը, որոնք, ինչպես ինքն էր կարծում, երկրային ամենահազվագյուտ գանձերն էին:

Հնդկաստանի արքան ընծայեց 100 փիղ, որոնց մեջքներին վեր էին ձգվում փայտե ոսկեզօծ աշտարակիկներ, և նրա ոտքերի տակ դրեց անձամբ Քսակեսի ձեռքով գրված «Վեդաները»:

Սկյութների արքան, որ գրել ու կարդալ չգիտեր, նվիրեց նրան 100 մարտական ձի՝ սևաթույր աղվեսների մորթուց կարած թամբատակով:

Արքայադուստրը գլուխ տվեց իր երկրպագուներին և վեհ, արժանապատվորեն խոնարհվեց նրանց:

Բելը հրամայեց տեղավորել թագավորներին նրանց համար նախատեսված տեղերում:

- Ինչո՞ւ ես երեք դուստր չունեմ,- բացականչեց նա,- այսօր ես վեց հոգու կերջանկացնեի:

Հետո նա հրամայեց վիճակ գցել, թե ով պետք է առաջինը ձգի Նեմրութի աղեղը: Երեք հավակնորդների անունները գցեցին ոսկե սաղավարտի մեջ: Առաջին վիճակն ընկավ Եգիպտոսի փարավոնին, երկրորդը՝ Հնդկաստանի թագավորին: Սկյութների արքան, նայելով աղեղին և իր մրցակիցներին, նույնիսկ վատ չզգաց, որ վերջինն է:

Մինչև նախապատրաստվում էին փայլուն փորձություններին, 20 000 մանկլավիկներ և 20 000 երիտասարդ աղջիկներ ճարպկորեն սահում էին հանդիսականների շարքերով՝ առաջարկելով զովացուցիչ ըմպելիքներ:

Բոլորը միաձայն որոշեցին, որ աստվածներն ստեղծել են թագավորներին սոսկ նրա համար, որ ամեն օր տոնախմբություն կազմակերպեն, և որ կյանքը շատ կարճ է ինչ-որ այլ բանով լցնելու համար, որ փոխադարձ ամբաստանությունները, դավադրությունները, պատերազմները ու աստվածաբանական բանավեճերը՝ ամբողջը, որ կարճում է մարդու կյանքը, անմիտ է և զզվելի, որ մարդը ծնվել է երջանկության համար, որ նա այդքան կրքոտ ու հաստատուն չէր սիրի հաճույքը, եթե ստեղծված չլիներ դրանց համար, և որ մարդկային բնույթն է բավականություն ստանալը. իսկ մնացածն ունայնություն է: Այս հոյակապ բարոյականությունը երբեք ոչնչով չի ժխտվել, բացի փաստերից:

Երբ ամեն բան պատրաստ էր մրցմանը, որ պիտի Ֆարմազանտայի ճակատագիրը որոշեր, ինչ-որ երիտասարդ անծանոթ, միաեղջյուր հեծած, ծառայի ուղեկցությամբ, որը նույնպես միաեղջյուր էր հեծել, մոտեցավ անջրպետին՝ ձեռքին մի մեծ թռչուն:

Պահակախումբն ապշել էր այդքան աստվածակերպ մարդու հայտնվելով, որը միաեղջյուր էր հեծել: Նա, հետո ասում էին, մարմնով նման էր Հերակլեսին, իսկ դեմքով՝ Ադոնիսին: Փառահեղությունը և նրբագեղությունը միասին էին: Նրա սև հոնքերը, երկար ոսկեգանգուր մազերը (գեղեցկության ներդաշնակում, որ մինչ այդ Բաբելոնում տեսնված չէր), գերեցին հավաքվածներին: Ամբողջ ամֆիթատրոնը ոտքի կանգնեց, որ ավելի լավ տեսնի երիտասարդին: Պալատական տիկնայք տարակուսած նայում էին նրան: Ինքը՝ Ֆարմազանտան, որ անընդհատ նստած էր՝ աչքերը գետին հառած, նայեց նրան ու կարմրեց: Երեք արքաները գունատվեցին: Հանդիսականները, համեմատելով Ֆարմազանտային անծանոթի հետ, բացականչեցին. «Ողջ աշխարհում ոչ ոք գեղեցկությամբ չի կարող համեմատվել արքայադստեր հետ, բացի այս երիտասարդից»:

Պահակախումբը, զարմանքից քարացած, հարցրեց նրան, թե արքա չէ՞ արդյոք: Օտարականը պատասխանեց, որ ճակատագիրն իրեն չի արժանացրել այդ պատվին, բայց ինքը եկել է հեռվից, որովհետև հետաքրքիր էր տեսնել՝ կա՞ն արդյոք երկրի վրա արքաներ, որ արժանի լինեն Ֆարմազանտային:

Նրան իր ծառայի, միաեղջյուրների ու թռչունի հետ տարան ամֆիթատրոնի առաջին շարքը: Նա միչև գետին խոնարհվեց Բելի և նրա դստեր, երեք արքաների ու ամբողջ ժողովրդի առաջ և համեստորեն զբաղեցրեց իր տեղը: Միաեղջյուները մեկնվեցին նրա ոտքերի տակ, թռչունը թևածեց ու նստեց նրա ուսին, իսկ ծառան, որ բռնել էր մի ոչ մեծ պարկ, նստեց կողքին:

Մրցությունն սկսվեց: Ոսկե պատյանից դուրս բերվեց Նեվրոդի աղեղը: Գլխավոր արարողապետը՝ 50 մանկլավիկների ուղեկցությամբ և 20 փողհարների առաջնորդությամբ աղեղը մատուցեց եգիպտական փարավոնին, ով իր մոգերին հրամայեց օրհնել այն: Հետո դրեց սուրբ Ապիս ցլի գլխին: Հիմա նա հաստատ համոզված էր, որ այս առաջին փորձությունից հաղթող դուրս կգա: Նա դուրս եկավ կենտրոն, փորձեց ձգել աղեղը, լարեց բոլոր ուժերը, ցնցվող շարժումներ արեց՝ առաջացնելով հանդիսատեսների ծիծաղը, անգամ ստիպելով ժպտալ Ֆարմազանտային:

Ահա նրա գլխավոր մոգը մոտենում է նրան.

- Թող Ձերդ մեծությունը,- ասաց նա,- հրաժարվի այս դատարկ պատվից, որի համար հարկավոր են միայն նյարդեր ու մկաններ: Դուք կփառաբանվեք մնացած բաներում: Դուք կհաղթեք առյուծին, քանզի ձեզ է պատկանում Օսիրիսի թուրը: Բաբելոնի արքայադուստրը պետք է պատկանի այն տիրակալին, որ բոլորից իմաստուն է: Իսկ դուք բացահայտել եք գաղտնիքներ: Պետք է նրա կինը դառնա, ով բոլորից բարեգործ է, իսկ դուք այդպիսին եք, քանի որ դաստիարակված եք Եգիպտոսի մոգերի կողմից: Նրան իրենը կարող է կոչել ամենաառատաձեռնը: Իսկ

դուք նրան եք նվիրել երկու ամենագեղեցիկ կոկորդիլոսներին և ամբողջ դելտայում 2 ամենագեղեցիկ առնետներին: Ձեզ է պատկանում սուրբ Ապիս ցուլը և Հերմեսի գրքերը, որոնք աշխարհի ամենահազվագյուտ գանձերն են: Ոչ ոք ավելի արժանի չէ Ֆարմազանտային:

- Դուք ճիշտ եք,- պատասխանեց փարավոնը և վերադարձավ իր տեղը:

Աղեղը մատուցեցին Հնդկաստանի արքային: Սրա ձեռքերից կոշտուկները մրցույթից տասնհինգ օր հետո էլ չէին անցել, և ինքն իրեն մխիթարում էր նրանով, որ սկյութների արքան ավելի երջանիկ չի լինելու, քան ինքը: Եվ ահա սկյութների արքան ձգեց լարը: Նա թե՛ ճարպկություն, թե՛ ուժ ցուցաբերեց: Թվաց՝ աղեղը նրա ձեռքում որոշակի ճկունություն է ձեռք բերել. նրան հաջողվեց մի քիչ կորացնել այն, բայց լարը ձգել այդպես էլ չկարողացավ: Հանդիսականները, որոնց արքայի հաճելի դեմքը նրա նկատմամբ բարյացակամություն էր ներշնչել, հիասթափության հոգոց արձակեցին այդ անհաջողությունից և մտածեցին, որ գեղեցկուհի արքայադուստր Ֆարմազանտային վիճակված չէ ամուսնանալ:

Այդ ժամանակ երիտասարդ անծանոթը մի ցատկով հայտնվեց ասպարեզում:

- Մի՛ զարմացեք, Ձե՛րդ մեծություն,- ասաց նա սկյութների արքային,- որ դուք մինչև վերջ չհասաք հաջողության: Սև փայտից այս աղեղներն արտադրում են իմ հայրենիքում, այստեղ հարկ է իմանալ, թե ինչպես բռնել: Ձեզ համար սա թեթև կորացնելն ավելի մեծ պատիվ է, քան ինձ համար՝ լարելը:

Արագ վերցնելով նետը՝ նա ձգեց Նեմրութի աղեղը, և նետը սլացավ հեռու՝ մրցասպարեզի սահմաններից դուրս: Ծափահարությունների փոթորիկը ողջունեց այդ սխրանքը: Բաբելոնը որոտում էր ողջույնի գոչյուններից: Իսկ կանայք բացականչում էին.

- Ի՛նչ երջանկություն է, որ այսպիսի երիտասարդն այսպիսի ուժի տեր է:

Հետո գրպանից հանելով փղոսկրյա փոքրիկ սկավառակ՝ նա ոսկե ասեղով վրան մի բան փորագրեց, ամրացրեց աղեղին և հանդիսատեսին գերող նրբագեղությամբ մատուցեց այն արքայադստերը: Հետո համեստորեն վերադարձավ իր տեղն ու նստեց ծառայի ու թռչունի միջև: Բոլոր բաբելոնցիներն ապշած էին: Երեք տիրակալները շփոթված էին: Անծանոթը, թվում էր, ոչինչ չի նկատում:

Ֆարմազանտան ավելի զարմացավ՝ կարդալով փղոսկրյա սկավառակի վրա հետևյալ տողերը՝ գրված հոյակապ խալդի լեզվով.

Նեմրութի աղեղը մարտական զենք է,
Իսկ Ամուրի աղեղը՝ սիրո գործիք:
Այն հիմա Ձերն է՝ կարող եք պարգևել
Վերերկրային բավականություն՝
Բորբոքելով արյան մեջ կրակ:
Երեք հզոր արքա մրցության մեջ մտավ,
Եվ Ձեր մի հայացքն է հիմա օրենքը:
Հաղթողին՝ բախտավոր պսակ,
Իսկ ամենից դժբախտը պարտվողն է:

Այս նրբաճաշակ ոտանավորը բոլորովին չբարկացրեց արքայադստերը: Մի քանի ծեր պալատականներ քննադատեցին այն՝ ասելով, որ կար ժամանակ, երբ Բելին համեմատում էին արևի հետ, իսկ Ֆարմազանտային՝ Լուսնի, նրա պարանոցը՝ աշտարակի, իսկ կուրծքը՝ քառատված ցորենի: Նրանք պնդում էին, որ օտարականը չունի երևակայություն, և նա նահանջել է իսկական պոեզիայի օրենքներից, բայց տիկնայք բանաստեղծությունը համարեցին նրբաոճ: Նրանք հիանում էին, որ այդքան ճարպկորեն աղեղի լարը ձգող մարդը նաև այդքան խելացի է: Արքայադստեր շքախմբի գլխավոր տիկինն ասաց.

- Ձերդ մեծություն, ահա իսկական տաղանդներ, որ կորչում են ունայնության մեջ: Ի՞նչ կտան այս երիտասարդին իր խելքն ու Նեմրութի աղեղը:

- Համընդհանուր հիացում,- պատասխանեց Ֆարմազանտան:

- Ահա թե ինչ,- ատամների տակից մրթմրթաց գլխավոր տիկինը:- Եվս մեկ ոտանավոր, և նրան կսիրեն:

Այդ ընթացքում Բելը, խորհրդակցելով իր մոգերի հետ, հայտարարեց, որ չնայած երեք արքաներից ոչ մեկը չձգեց Նեմրութի աղեղի լարը, այնուամենայնիվ իր դուստրը պետք է ամուսնանա և կպսակվի նրա հետ, ով կսպանի ահռելի առյուծին, որ գազանանոցում հատուկ բտել էին սրա համար: Եգիպտոսի փարավոնը՝ դաստիարակված իր հայրենիքի իմաստության բոլոր կանոններով, որոշեց, որ վերին աստիճանի անհեթեթ է արքային վայրի գազանի կողմից պատառոտվելու վտանգին ենթարկելը միայն նրա համար, որ ամուսնանա: Նա չէր հերքում, որ Ֆարմազանտային տիրանալը մեծ պարգև է, բայց կարծում էր, որ եթե առյուծն իրեն պատառոտի, ինքը մեկընդմիշտ կզրկվի գեղեցկուհի բաբելոնուհու ամուսինը դառնալուց:

Հնդկաստանի թագավորը համամիտ էր եգիպտացու հետ: Նրանք որոշեցին, որ Բաբելոնի արքան իրենց ծաղրում է, և պետք է զորքերը կանչել ու նրան պատժել, իրենք բավականին հպատակներ ունեն, ովքեր պատիվ կհամարեն իրենց

տիրակալների հրամանով մեռնելը: Իսկ իրենց գլխից մազ անգամ չի պակասի: Իրենք հեշտությամբ կարող են գահընկեց անել Բաբելոնի արքային և վիճակ գցել, թե իրենցից ով տիրանա գեղեցկուհի Ֆարմազանտային:

Այսպիսի համաձայնության գալով՝ երկու արքաներն իրենց երկիր սուրհանդակ ուղարկեցին՝ հրամայելով հավաքել 300000-անոց բանակ, որ Ֆարմազանտային առևանգեն:

Միայն սկյութների արքան ելավ ասպարեզ՝ կեռ թրով զինված: Նա անհունորեն սիրահարված չէր չքնաղ Ֆարմազանտային: Մինչ այս պահը նրա կիրքը միայն փառքն էր, որն էլ նրան Բաբելոն էր բերել: Նա ուզում էր ապացուցել, որ եթե Հնդկաստանի և Եգիպտոսի տիրակալներն այնքան խելամիտ էին, որ չցանկացան գլուխ դնել առյուծի հետ, ապա ինքն այնքան խիզախություն ունի, որ կընդունի մարտը և կվերականգնի արքայական պսակի պատիվը: Նրա հազվագյուտ քաջությունը թույլ չտվեց նրան անգամ իր վագրի օգնությանը դիմել: Նա դուրս եկավ առյուծի հետ մենամարտի թեթև զինված, գլուխը ծածկած ոսկե վրադիրով պողպատյա սաղավարտով, որի մեջ խրած ծածանվում էր ձիու երեք ձյունաճերմակ պոչ:

Նրա դեմ բաց թողեցին ամենահսկայական առյուծը, որը երբևէ սնուցվել էր Անտիլիբանանի սարերում: Թվում էր՝ առյուծի հրեշավոր ճանկերը ընդունակ են պատառոտելու միանգամից բոլոր երեք թագավորներին, իսկ հսկայական երախը՝ կուլ տալու նրանց: Կրակոտ մռնչոց տարածվեց ողջ ամֆիթատրոնով: Երկու քաջ մարտիկները նպատակային ցատկով նետվեցին միմյանց ընդառաջ: Քաջ սկյութը խոր խրեց թուրը առյուծի լայն բացված երախը, բայց շեղբը, դիպչելով անխոցելի ամրության ժանիքներից մեկին, փշրվեց, և հրեշը, վերքից կատաղած, արդեն արյունոտ ճանկերը մխրճում էր արքայի մարմնի մեջ:

Երիտասարդ օտարականը, հուզված այն վտանգից, որ սպառնում էր այդքան քաջ արքային, ակնթարթորեն նետվեց ասպարեզ ու այնպես ճարպկորեն կտրեց առյուծի գլուխը, ինչպիսի ճարպկությամբ մեր երիտասարդ ասպետները ավելի ուշ կարուսելի վրայից թռցնում էին մավրի գլուխը կամ օղակը:

Հետո հանեց փոքրիկ մի տուփ, մատուցեց սկյութների արքային և ասաց.
-Ձերդ մեծություն, դուք այստեղ իսկական բալասան կգտնեք, որը ստեղծվում է իմ հայրենիքում: Դրանով ակնթարթորեն կբուժվեն Ձերդ մեծության վերքերը: Միայն պատահականությունը խանգարեց Ձեզ սպանել առյուծին, բայց դա չի նվազեցնում Ձեր արիությունը:

Սկյութների արքան, որ ավելի հակված էր երախտապարտության, քան նախանձի, շնորհակալություն հայտնեց իր փրկիչին, նրան քնքուշ գրկեց և հեռացավ դեպի իր

սենյակները, որ բալասանը վերքերին դնի:

Օտարականը առյուծի գլուխը տվեց իր ծառային, սա լվաց այն ջրամբարում, որ ամֆիթատրոնից ներքև էր, մաքրեց արյունը և պարկից հանելով աքցանը՝ դուրս քաշեց առյուծի երախի բոլոր 40 ժանիքները, դրանց փոխարեն տեղադրեց 40 տարբեր չափերի ալմաստ:

Նրա տերը, իրեն հատուկ համեստությամբ վերադարձավ իր տեղը: Նա առյուծի գլուխը տվեց թռչունին:
- Չքնա՛ղ թռչուն,- ասաց նա,- իմ հիացումի այս չնչին նշանը տար Ֆարմազանտայի ոտքերի տակ դիր:

Թռչունը թռավ՝ ճանկերում ահեղ ավարը: Նա դրեց այն արքայադստեր ոտքերի տակ՝ հարգալից գլուխը խոնարհելով ու թևերը լայն բացելով՝ պառկեց նրա ոտքերի առջև: Հավաքվածների աչքերը ալմաստից կուրացել էին: Դա հարուստ Բաբելոնում մինչ այդ չտեսնված շքեղություն էր: Այնտեղ համարում էին, որ զմրուխտը, տոպազը, սուտակը և կարբունկուլը ամենաթանկ զարդերն են: Բելն ու բոլոր պալատականները հիացած էին: Թռչունը, որ մատուցեց այդ ընծան, նրանց ավելի շատ շլացրեց: Մեծությամբ նա հավասար էր արծվին, բայց աչքերը նույնքան խոնարհ ու քնքուշ էին, որքան հպարտ ու ահեղ են արծվի աչքերը: Նրա կտուրը վարդագույն էր և ինչ-որ անբացատրելի մի բանով հիշեցնում էր Ֆարմազանտայի հիասքանչ շուրթերը: Թռչունի պարանոցը շողում էր ծիածանի բոլոր գույներով, բայց՝ ավելի պայծառ ու ավելի շլացնող, քան ծիածանինն են: Փետրազարդումը խտղտում էր հազարարավոր ոսկերանգ գույներով: Թաթերը կարծես արծաթի ու ծիրանու խառնուրդ լինեին, իսկ պոչի առաջ նսեմանում էին նույնիսկ այն կախարդական թռչունների պոչերը, որոնք հետագայում տանում էին Յունոնայի երկանիվը:

Բոլոր պալատականների ուշադրությունը, հետաքրքրությունը, հիացմունքը, հրճվանքը ուղղվում էր մեկ 40 ալմաստներին, մեկ թռչունին: Թռչունը տեղավորվեց Բելի ու նրա դստեր արանքում: Ֆարմազանտան շոյում, փայփայում, համբուրում էր նրան: Թվում էր՝ թռչունը ընդունում է նրա գգվանքը արժանապատիվ հաճույքով: Երբ արքայադուստրը նրան համբուրում էր, նա փոխադարձում էր համբույրները, իսկ հետո նայում էր արքայադստերը հուզառատ հայացքով: Նա արքայադստեր ձեռքից իր արծաթածիրանագույն թաթով վերցնում էր բլիթն ու գետնանուշը և աննկարագրելի շնորհալիությամբ մոտեցնում կտուցին:

Բելը, որ ուշադիր ուսումնասիրում էր ալմաստները, մտածեց, որ հազիվ թե իր երկրի տարածքներից որևէ մեկը կարողանար փոխհատուցել այսքան հարուստ ընծայի արժեքը: Նա հրամայեց օտարականի համար ավելի ճոխ նվերներ պատրաստել, քան երեք տիրակալների համար էր նախատեսված:

- Այս երիտասարդը,- պնդում էր արքան,- անկասկած չինական կայսեր որդին է, կամ երկրագնդի այն հատվածի թագավորը, որ Եվրոպա է կոչվում, և որի մասին ինձ լուրեր են հասել: Կամ էլ՝ նա աֆրիկյան արքայի որդին է, ում տիրույթները, ասում են, սահմանակից են Եգիպտոսին:

Արքան շտապ ուղարկեց իր արարողապետին՝ ողջունելու օտարականին և հարցնելու, թե նա արդյոք վերոհիշյալ պետություններից մեկի թագավորը կամ թագաժառանգը չէ՞: Եվ ինչո՞ւ, տիրապետելով այդպիսի շլացուցիչ գանձերի, եկել է մի ծառայի ուղեկցությամբ և փոքրիկ պարկով:

Այն ժամանակ, երբ արարողապետը մոտեցավ ամֆիթատրոնին, որ կատարի հրամանը, երևաց մի ուրիշ ծառա՝ միաեղջյուրին հեծած: Նա դիմեց երիտասարդին հետևյալ բառերով.
- Օրմա՛ր, Ձեր հայրը լքում է այս աշխարհը, և ես եկել եմ Ձեզ դա հայտնելու:

Օտարականը նայեց երկնքին, լաց եղավ և բացականչեց.
- Գնացինք:

Արարողապետը, հաղորդելով Բելի ողջույնը առյուծին հաղթող, քառասուն ալմաստներ նվիրող, հրաշալի թռչունի տեր օտարականին, հարցրեց նրա ծառային, թե որ թագավորության տիրակալն է այս երիտասարդ հերոսի հայրը:

- Նրա հայրն իր շրջապատում ջերմորեն սիրված ծեր հովիվ էր,- պատասխանեց ծառան:

Մինչև այս կարճ զրույցն ընթանում էր, օտարականը հասցրեց հեծնել միաեղջյուրը:

- Տեա՛ր,- ասաց նա արարողապետին,- բարի եղեք փոխանցելու իմ խորին հավատարմության հավաստիքը Բելին և նրա դստերը և ասեք Ֆարմազանտային, որ ես աղերսում եմ նրան՝ իր հովանավորության տակ վերցնել թռչունը, որին թողնում եմ: Այս թռչունը նման է իրեն՝ արքայադստերը. նա անկրկնելի է:

Այս ասելով՝ նա կայծակնորեն սլացավ: Երկու ծառաները սլացան նրա ետևից ու շուտով տեսադաշտից անհետացան:

Թռչունը, շրջվելով դեպի ամֆիթատրոն, ուր նստած էր իր տերը և նրան չտեսնելով, տխուր կծկվեց: Հետո ուշադիր նայեց արքայադստերը, կտուցով քնքուշ քսվեց նրա գեղեցիկ ձեռքին: Նա, թվաց, նվիրում է իրեն աղջկան՝ ի ծառայություն:

Արքան միանգամայն ապշած էր՝ իմանալով, որ արտասովոր երիտասարդը հովվի

որդի է, և չհավատաց դրան: Նա հրամայեց հետևել օտարականին, բայց շուտով զեկուցեցին, որ միաեղջյուրներին, որոնց վրա սլացան երեք հեծյալները, անհնար է հասնել, քանզի այդպիսի վարգով, ինչպես սլացան, նրանք երևի անում են օրական հարյուր լյո:

2-րդ գլուխ

Բոլորը խոսում էին այդ տարօրինակ իրադարձության մասին և իզուր գլուխ էին կոտրում՝ տարբեր բացատրություններ հորինելով: Որտեղի՞ց կարողացավ հովվի որդին քառասուն խոշոր ալմաստ մատուցել: Ինչո՞ւ է նա շրջում միաեղջյուր հեծած: Այս հարցերը բոլորին փակուղի էին տանում, իսկ Ֆարմազանտան, շոյելով թռչունին, խոր մտքերի մեջ էր սուզված:
Իշխանադուստր Ալեյան՝ նրա զարմուհին, համարյա նույնքան նրբագեղ, որքան Ֆարմազանտան, ասաց.

- Չգիտեմ, զարմուհի՛ս, արդյոք իսկապե՞ս այդ երիտասարդ կիսաստվածը հովվի որդի է, բայց ինձ թվում է, որ նա կատարեց Ձեզ հետ ամուսնանալու իրավունքի բոլոր պայմանները: Նա ձգեց Նեմրութի աղեղը, հաղթեց առյուծին, շատ խելացի է, քանի որ Ձեզ ծոնեց բավականին նրբաճաշակ էքսպրոմտ: Նրանից ստանալով 40 մեծ ալմաստները՝ չե՞ք ժխտի, չէ՞, որ նա ամենաառատաձեռն մարդն է: Նրա բարեգթությունը սահման չունի, քանի որ Ձեզ հետ մնալու հնարավորությունը կորցնելով՝ նա առանց տատանվելու ճանապարհ ընկավ՝ լսելով, որ հայրը հիվանդ է: Գուշակի բոլոր պահանջները նա կատարել է, բացի մեկից՝ հաղթել մրցակիցներին: Բայց նա ավելի ազնվաբարո վարվեց. նա փրկեց այն միակ մրցակցի կյանքը, որից ինքը պիտի զգուշանար: Ինչ վերաբերում է մյուս երկուսին, հուսով եմ՝ չեք կասկածում, որ հեշտությամբ կհաղթեր, եթե անհրաժեշտություն լիներ:

- Այդ ամենը զուտ ճշմարտություն է,- պատասխանեց Ֆարմազանտան,- բայց հնարավո՞ր է, որ մարդկանցից ամենամեծը, իսկ գուցե նաև ամենաբարեհամբույրը, հովվի որդի լինի:

Զրույցին խառնված ավագ տիկինը հայտարարեց, որ հաճախ «հովիվ» բառով նկատի են ունենում «արքա». և նրանց հովիվ են կոչում, որովհետև բարեխղճորեն հոգ են տանում իրենց «հոտին», որ դա, հավանական է, ոչ վայել կատակ էր ծառայի կողմից, և որ այդ երիտասարդ հերոսը միայն այն պատճառով էր ներկայացել այդքան համեստ շքախմբի ուղեկցությամբ, որ ուզում էր ընդգծել, թե որքան են իր անձնական արժանիքները գերազանցում թագավորների փայլին, և ուզում էր միայն իրեն պարտական լինել Ֆարմազանտային նվաճելու գործում: Այս բառերին ի պատասխան արքայադուստրը միայն ողողեց թռչունին քնքուշ շոյանքներով:

Մինչ այդ՝ երեք արքաների և տոնախմբության եկած բոլոր տիրակալների պատվին տրված ճոխ խնջույքն էր ընթանում: Արքայի դուստրն ու զարմուհին պետք է

պատվեին խնջույքն իրենց ներկայությամբ: Արքաներին Բաբելոնի փառքին արժանի նվերներ մատուցեցին: Բելը, մինչ կմատուցեին ուտեստները, խորհուրդ հրավիրեց, որ չքնաղ Ֆարմազանտայի ամուսնության խնդիրը լուծի: Լինելով նրբազգաց քաղաքագետ՝ նա հայտարարեց.

- Ես ծեր եմ: Չեմ հասկանում՝ ինչ անեմ, ում հետ ամուսնացնեմ իմ դստերը: Նրան արժանացողը չնչին հովիվն է: Հնդկաստանի արքան և Եգիպտոսի փարավոնը վախկոտներ են: Սկյութների արքան մյուսներինց հարմար է, բայց նա էլ պահաջված պայմաններից ոչ մեկը չկատարեց: Ես մի անգամ էլ կհարցնեմ Գուշակին, իսկ այդ ընթացքում դուք խորհրդակցեք, և Գուշակի պատասխանից ելնելով՝ կորոշենք՝ ինչ անել, քանզի արքան պարտավոր է վարվել անմահ աստվածների սուրբ կամքին համաձայն:

Բելը գնաց իր աղոթարանը: Գուշակը, ինչպես միշտ, համառոտ պատասխան տվեց. «Քո դուստրը չի ամուսնանա, մինչև չճամփորդի աշխարհով մեկ»: Ապշած Բելը վերադարձավ ու պատասխանը հայտնեց հավաքվածներին :

Բոլոր նախարարները խորին հարգանք էին տածում գուշակների նկատմամբ:

Բոլորն ընդունում էին կամ ձևացնում էին, թե ընդունում են, որ նրանք կրոնի հիմքն են, որ բանականությունը պետք է պապանձվի նրանց առջև, և որ արքաները նրանց օժանդակությամբ առաջնորդում են ժողովուրդներին, իսկ մոգերը՝ արքաներին, և եթե չլինեին գուշակները, երկրիս երեսին չէր լինի ո՛չ բարեգթություն, ո՛չ հանգիստ: Ի վերջո՝ գուշակի նկատմամբ ցուցաբերելով խորին ակնածանք՝ նախարարները համարյա միաձայն որոշեցին, որ այս անգամ գուշակի ասածը հանդուգն դուրս եկավ, որ չարժե նրան ենթարկվել, որ վայել չէ օրիորդին, այն էլ Բաբելոնի հզոր արքայի դստերը, դուրս գալ աննպատակ ճանապարհորդության, որ դա երբեք չամուսնանալու կամ գաղտնի, արժանապատվությունից զուրկ, անվայել ամուսնանալու ամենահարմար միջոցն է, մի խոսքով՝ այս գուշակը խելքը թռցրել է: Օնադաս անունով նախարարը, որ ամենաերիտասարդն էր ու ամենախելացին, ասաց, որ գուշակն անկասկած ի նկատի է ունեցել ինչ-որ ուխտագնացություն դեպի սրբավայրեր և առաջարկեց ուղեկցել առքայադստերը: Խորհուրդը համաձայնեց նրա հետ, բայց ամեն մեկն իրեն էր առաջարկում ուղեկցողի դերում: Արքան որոշեց, որ արքայադուստրը կարող է ուղևորվել քաղաքից 300 փարսախ հեռու գտնվող տաճարը, ճանապարհին՝ Արմավիա՝ խոնարհվելու երջանիկ ամուսնությունների հովանավոր սրբին: Եվ նրան կուղեկցի Խորհրդի ավագը: Որոշումը կայացնելով՝ բոլորը գնացին ընթրելու:

3-րդ գլուխ

Այգիների մեջ՝ երկու կասկադների արանքում, խոյանում էր օվալաձև վրանը՝ 300 ֆունտ տրամագծով: Դրա երկնագույն կամարը՝ զարդարված ոսկե աստղերով, վերարտադրում էր մոլորակների և համաստեղությունների ճիշտ դիրքը: Նա պտտվում էր՝ ինչպես երկնակամարը, որը ղեկավարվում է նույնպիսի անտեսանելի մեխանիզմով, որը ղեկավարում է վերերկրային շարժումը: 100000 լուսատուներ լեռնային բյուրեղապակե գլանակներում լուսավորում էին ճաշասրահը և՛ ներսից, և՛ դրսից: Ամֆիթատրոնի տեսք ունեցող բուֆետում կային 20000 ոսկե սկահակներ ու ափսեներ: Դիմացի աստիճանները զբաղեցրել էին երաժիշտները: Մյուս երկու ամֆիթատրոնները լի էին՝ մեկը՝ տարվա բոլոր եղանակների պտուղներով, երկրորդը՝ բյուրեղապակյա սափորներով, որոնց մեջ առկայծում էին երկրի վրա եղած ամեն տեսակի գինիներ:

Հյուրերը տեղ զբաղեցրին խնջույքի սեղանի շուրջը, որը զարդարված էր թանկարժեք քարերից պատրաստված ծաղիկներով ու մրգերով: Չքնաղ Ֆարմազանտան նստել էր Հնդկաստանի տիրակալի և Եգիպտոսի փարավոնի մեջտեղը, իսկ հիասքանչ Ալդեան՝ սկյութների թագավորի կողքին:

Ներկա էին ուրիշ երկրների ևս երեսուն արքաներ, որոնցից յուրաքանչյուրի կողքին նստած էր մի չնաշխարհիկ պալատական տիկին: Բաբելոնի տիրակալը, որ բազմել էր կենտրոնում՝ դստեր դիմաց, կարծես սգում էր, որ նրա համար արժանի ամուսին չէր գտել, և միաժամանակ ուրախ էր, որ նա դեռ իր կողքին է: Ֆարմազանտան նրանից թույլտվություն խնդրեց թռչունին իր կողքին՝ սեղանի մոտ նստեցնելու: Արքան սիրով համաձայնեց:

Երաժշտության հնչյունների տակ ամեն արքա կարող էր ազատ զրուցել իր հարևանուհու հետ, և խնջույքն անցնում էր ուրախ ու շքեղ:

Ֆարմազանտային մատուցեցին նրա հոր սիրելի կերակուրը՝ ռագու: Նա ասաց, որ այդ ուտեստը հարկավոր էր մատուցել նորին մեծությանը: Թռչունը անկրկնելի ճարպկությամբ նույն պահին վերցրեց ուտեստը և մատուցեց արքային: Բոլորը զարմացան: Բելը դստեր պես շոյեց թռչունին, և սա, օդ բարձրանալով, նորից թռավ դեպի Ֆարմազանտան: Ճախրելիս թռչունը բացեց իր հեքիաթային պոչը, նրա լայն բացած թևերը փայլատակեցին այնպիսի հրաշալի գույներով, փետուրների ոսկին այնպիսի շլացուցիչ շողք էր գցում, որ ոչ ոք նրանից աչքը չէր կտրում: Երաժիշտները դադարեցին նվագել և անշարժ քարացան: Ոչ ոք չէր ուտում: Զրույցը լռեց, միայն լսվում էին հիացումի շշուկներ: Ընթրիքի ողջ ընթացքում արքայադուստրը, մոռացած աշխարհի բոլոր արքաներին, շոյում էր թռչունին: Իսկ Հնդկաստանի ու Եգիպտոսի արքաներն զգում էին, թե ինչպես են աճում իրենց սրտեղությունն ու հուզումը: Եվ ամեն մեկն իրեն խոստացավ արագացնել իր 300000-անոց բանակի ժամանումը, որ

վրեժ լուծեն:

Ինչ վերաբերում է սկյութների արքային, ապա նա տարված էր Ալդեայի հետ զրույցով: Նրա հպարտ սիրտը արհամարհում էր Ֆարմազանտայի սառնությունն առանց նեղսրտելու, և նրա նկատմամբ ավելի շուտ անտարբերություն էր զգում, քան զայրույթ:

- Նա գեղեցիկ է, խոսք չկա,- ասում էր արքան,- բայց երևի պատկանում է այն կանանց թվին, որոնք տարված են միայն իրենց գեղեցկությամբ և ենթադրում են, թե մարդկությունն իրենց պետք է անչափ շնորհակալ լինի, որ արժանացնում են իրենց տեսքին: Իմ երկրում կուռքերին չեն խոնարհվում: Ես բարեհամբույր և հարմարվող մի ոչ գեղեցիկ կնոջ կգերադասերի այս հոյակապ արձանից: Դուք, Ձերդ գերազանցություն, պակաս թովիչ չեք, բայց պատվից ցածր չեք համարում օտարականի հետ զրուցելը: Սկյութի անկեղծությամբ խոստովանում եմ, որ Ձեզ գերդասում եմ Ձեր զարմուհուց:

Այս արքան, սակայն, սխալվում էր Ֆարմազանտայի բնավորության հարցում: Նա այնքան էլ մեծամիտ չէր, ինչքան թվում էր: Բայց նրա հաճոյախոսությունը միանգամայն երախտագիտությամբ ընդունվեց իշխանադուստր Ալդեայի կողմից: Նրանց զրույցը գնալով ավելի հետաքրքիր էր դառնում: Նրանք միմյանցից շատ գոհ մնացին և նախքան խնջույքի ավարտն արդեն լրիվ համաձայնության եկան: Ընթրիքից հետո բոլորը գնացին այգի՝ զբոսնելու: Սկյութների արքան և Ալդեան արագ գտան մի թաքուն տաղավար:

Ալդեան, որ բնույթով շատ անկեղծ էր, ասաց արքային.
- Ես իմ զարմուհու հանդեպ ատելություն չեմ տածում, չնայած նա ինձնից գեղեցիկ է, և նրան է պատկանում Բաբելոնի գահը: Ձեզ դուր գալու պատիվն ունենալով՝ չեմ զգում իմ գեղեցկության պակասը: Ես Սկյության Ձեզ հետ նախընտրում եմ Բաբելոնից՝ առանց Ձեզ: Բայց օրենքով, եթե ընդհանրապես աշխարհում օրենք կա, Բաբելոնի թագն ինձ է պատկանում, քանի որ ես ծագում եմ Նեմրութի հետնորդների ավագ ճյուղից, իսկ Ֆարմազանտան՝ կրտսեր: Նրա պապը գահը խլել է իմ պապից և սպանել նրան:

- Ահա թե ինչպես են հարգում արյունակցությունը Բաբելոնի արքաները,- բացականչեց սկյութը:- Ի՞նչ էր Ձեր պապի անունը:

- Նրա անունը, ինչպես իմն է, Ալդեոս էր: Իմ հայրը նույն անունն ուներ: Նա մորս հետ աքսորվել է երկրի խորքերը, և Բելը նրանց մահից հետո, այլևս չանհանգստանալով, ցանկացավ ինձ դաստիարակել իր դստեր հետ, բայց որոշել է երբեք չամուսնացնել:

- Ես Ձեր հոր, Ձեր պապի և Ձեր վրեժը կլուծեմ,- բացականչեց սկյութների արքան,- խոստանում եմ, որ դուք կամուսնանաք: Վաղը չէ մյուս օրը՝ արշալույսին ես Ձեզ կտանեմ, որովհետև վաղը պետք է ներկա լինեմ Բաբելոնի արքայի՝ մեր պատվին տալիք ճաշին: Հետո կվերադառնամ 300000-անոց բանակով, որ վերականգնեմ Ձեր ոտնահարված իրավունքները:

- Ես կսպասեմ Ձեզ,- պատասխանեց չքնաղ Ալդեան, և միմյանց հավատարմության խոստում տալով՝ նրանք բաժանվեցին:

Արդեն վաղուց անզուգական Ֆարմազանտան հեռացել էր իր ննջասենյակը: Նա հրամայեց իր մահճի կողքին դնել արծաթյա մի արկղ՝ մեջը նարնջի ծառ, որ թռչունը կարողանա նիրհել դրա վրա: Առագաստը փակված էր, բայց Ֆարմազանտան քնած չէր. նրա սիրտն ու երևակայությունը չափից դուրս հուզված էին: Նրա երևակայության մեջ շողում էր գեղեցիկ օտարականի կերպարը: Մեկ տեսնում էր՝ ինչպես է նա ձգում Նեմրութի աղեղը, մեկ հետևում էր՝ ինչպես թրի մի հարվածով կտրեց առյուծի գլուխը: Նա կրկնում էր մադրիգալը, որ ստացել էր տղայից, և վերջապես, նա տեսնում էր, թե ինչպես, առանձնանալով ամբոխից, նա սլանում է իր միաեղջյուրի վրա: Այդ ժամանակ նա բարձրաձայն հեկեկում էր և դառնությամբ բացականչում.

- Օ՛, նրան էլ երբեք չեմ տեսնի: Նա երբեք չի վերադառնա:

- Նա կվերադառնա, Ձե՛րդ մեծություն,- վստահեցրեց նրան թռչունը՝ նարնջի ծառի կատարից:- Մի՞թե Ձեզ մեկ անգամ տեսնելուց հետո հնարավոր է չցանկանալ նորից տեսնել:

- Օ՛, երկինք, օ՛, երկնային ուժեր, իմ թռչունը խոսում է մաքուր խալդի լեզվով,- բացականչեց արքայադուստրը և առագաստը մի կողմ նետելով՝ ձեռքերը մեկնեց դեպի թռչունն ու ծնկեց մահճի մեջ:- Արդյոք աստվածությո՞ւն չեք Դուք՝ երկնքից իջած, արդյոք այս չքնաղ փետուրների տակ թաքնված չէ՞ ինքը՝ մեծն Արամազդը: Եթե դուք աստվածություն եք, վերադարձրեք, խնդրում եմ, գեղեցիկ երիտասարդին:

- Ես ընդամենը թռչուն եմ,- պատասխանեց նա,- բայց ծնվել եմ դեռ այն ժամանակ, երբ կենդանիները խոսել գիտեին, և թռչունները, օձերը, ավանակները, ձիերը, գիշանգղերը հեշտ ու հանգիստ զրուցում էին մարդկանց հետ: Ես չէի ուզում խոսել մարդկանց մոտ՝ վախենալով, որ Ձեր պալատական տիկնայք ինձ կախարդի տեղ կդնեն: Միայն Ձեզ մոտ եմ ինձ բացահայտում:
Ցնցված, ապշած, հմայված այդքան շատ հրաշքներից՝ Ֆարմազանտան հուզված պահանջում էր միանգամից հարյուրավոր հարցերի պատասխաններ: Ամենասկզբից նա հարցրեց, թե թռչունը քանի տարեկան է:

- Քսանյոթ հազար ինը հարյուր տարի և վեց ամիս, Ձերդ մեծություն, - պատասխանեց նա:- Ես այնքան տարեկան եմ, որքան մոլորակը հարկ ունի, որ ավարտի իր ուղեծրով լրիվ մի պտույտը, ինչը ձեր հոգևորականները անվանում են օրահավասարի նախադուռ, իսկ սա ձգվում է շուրջ քսանյոթ հազար տարի՝ ըստ ձեր տարեցույցի: Կան մոլորակներ, որ իրենց պտույտը կատարում են ավելի երկար ժամանակամիջոցում, և մեզանում կան արարածներ, որ ավելի վաղնջական են, քան ես: Ահա արդեն քսաներկու հազար տարի է, ինչ ես իմ ուղևորություններից մեկի ընթացքում սովորել եմ խոսել խալդերեն: Միշտ ինձ դուր է եկել այդ լեզուն, բայց իմ եղբայրակից մյուս արարածները չցանկացան խոսել ձեր կողմերում:

- Արդյոք ինչո՞ ւ, իմ աստվածայի՛ն թռչուն:

- Ցավոք, որովհետև մարդիկ վերջնականապես յուրացրին մեր մսով կերակրվելը, փոխանակ զրուցեին մեզ հետ և սովորեին մեզնից: Բարբարոսնե՛ր: Նրանք պետք է իմանային, որ մենք, ունենալով նույն օրգանները, նույն զգացմունքները, նույն պահանջմունքներն ու նույն ձգտումները, ինչ իրենք, մենք էլ, այսպես ասած, հոգի ունենք, որ իրենց եղբայրներն ենք, և եփել, ուտել կարելի էր միայն չար կենդանիներին: Մենք ձեզ այնքան հարազատ էինք, որ Մեծ Ստեղծողը՝ անմահ հիմնադիրը, մարդկանց հետ պայմանագիր (տե՛ս Ծննդոցի 9-րդ գլուխը և Էքլեզիաստեսի 3-րդ,18-րդ, 19-րդ գլուխները. - ծանոթագրությունը՝ Վոլտերի) կապելով՝ գիտակցաբար հիշատակել է մեր մասին այնտեղ: Նա արգելել է ձեզ սնվել մեր արյամբ, իսկ մեզ՝ ծծել ձերը: Ձեր հին Լոքմանի առակները, որ թարգմանվել են մի շարք լեզուներով, կմնան որպես անխախտ վկայություն այն երջանիկ շփումների մասին, որ մի ժամանակ ունեիք մեզ հետ: Դրանք բոլորը սկսվում են «Այն ժամանակ, երբ թռչունները կարողանում էին խոսել…» բառերով: Ճիշտ է, ձեր մեջ կան շատ կանայք, ովքեր շարունակում են խոսել իրենց շների հետ, բայց վերջիններս որոշել են երբեք չպատասխանել այն պահից, երբ նրանց մտրակի հարվածի ուժով ստիպեցին որս անել և դառնալ նախկինում մեր ընդհանուր բարեկամների՝ եղնիկների, այծյամների, նապաստակների և կաքավների սպանության հանցակիցը:

Դուք դեռ պահպանում եք հին վիպերգեր, ուր խոսում են ձիերը, իսկ ձեր կառապանները ամեն օր զրուցում են նրանց հետ, բայց այնքան կոպիտ և այնքան ստոր բառերով, որ ձիերը, որոնք մի ժամանակ շատ էին սիրում ձեզ, հիմա ձեզ տանել չեն կարող:

Այն երկիրը, ուր ապրում է ձեր սքանչելի օտարականը, մարդկանց բնակավայրերի մեջ ամենակատարյալն է, միակը, ուր դեռ ձեր ցեղատեսակը կարողանում է սիրել մեր տեսակին, զրուցել մեզ հետ: Եվ դա երկրի վրա միակ տերությունն է, ուր մարդիկ արդարամիտ են:

- Որտե՞ղ է իմ թանկագին օտարականի տերությունը: Ի՞նչ է այդ հերոսի անունը: Ինչպե՞ս է կոչվում պետությունը, որ նա ղեկավարում է: Ինձ համար նույնքան դժվար է հավատալ, որ նա հովիվ է, որքան որ դուք չղջիկ եք:

- Նրա երկիրը, Ձերդ մեծություն, գանգարիդների երկիրն է՝ բարեգութ ու աննկուն ժողովրդի, որ բնակեցված է Գանգեսի արևելյան ափին: Իմ ընկերոջ անունը Ամազան է: Նա արքա չէ, և խիստ կասկածում եմ, թե կցանկանար իր համար մինչ այդ աստիճանի ստորացում: Նա իր հայրենակիցներին չափազանց շատ է սիրում. ինքն էլ նույնպիսի հովիվ է, ինչպիսին նրանք են: Բայց չկարծեք, թե այս հովիվները նման են ձեր՝ հազիվ ցնցոտիապատ հովիվներին, որ իրենցից անհամեմատ ավելի տաք հագնված ոչխարն են արածեցնում և աղքատության լծի տակ հեծելով՝ տիրոջից ստացած խղճուկ աշխատավարձի կեսը վճարում են հարկահավաքին: Գանգարիդական հովիվները միմյանց հավասար են, իրենք են անհամար հոտի տերը, որ արածում է մշտադալար հարթավայրում: Այդ ոչխարներին երբեք չեն սպանում, քանի որ Գանգեսում մեծագույն վիրավորանք է համարվում քեզնմանին սպանելն ու ուտելը: Այդ ոչխարների բուրդը, որ ավելի բարակ ու փայլուն է, քան ամենաբարձրորակ մետաքսը, Արևելքի հետ առևտրի գլխավոր առարկան է: Դրա հետ մեկտեղ գանգարիդների հողում աճում է այն ամենը, ինչ կարող է մարդը ցանկանալ: Այդ խոշոր ալմաստները, որ Ամազանը պատիվ ունեցավ մատուցելու Ձեզ, հանված են իրեն պատկանող հանքից: Բոլոր գանգարիդները, ինչպես որ նա, միաեղջյուր են հեծնում: Դա ամենագեղեցիկ, ամենահպարտ, ամենաահեղ և ամենաքնքուշ կենդանին է բոլոր նրանցից, որ զարդարում են երկիրը: Անհամար զորքը ցրելու համար բավական կլիներ մեկ հարյուրյակ գանգարիդ և մեկ հարյուրյակ միաեղջյուր: Շուրջ երկու հարյուր տարի առաջ հնդկական մի արքա գանգարիդների երկիրը գրավելու մի խելառ քայլ ձեռնարկեց: Նա հայտնվեց տասը հազար փղերի և միլիոնավոր զորքի ուղեկցությամբ: Միաեղջյուրները խողխողեցին փղերին ոսկե փոքրիկ շամփուրներին շարված դաշտային այն ճնճղուկների նման, որոնց ես տեսա Ձեր սեղանին՝ խնջույքի ժամանակ:

Գանգարիդների թրերի հարվածներից թշնամիներն ընկնում էին, ինչպես բրնձի ցողունը, որ հնձվում է Արևելքի բնակիչների մանգաղով: Արքային և ավելի քան վեց հարյուր հազար զինվորների գերի վերցրին: Նրան լողացրին Գանգեսի բուժիչ ջրերում և հարկադրեցին ենթարկվել սնվելու տեղական ավանդույթին, այսինքն՝ սնվել բույսերով, ինչ ինքը բնությունն է սահմանել բոլոր ապրողների համար որպես կերակուր: Լեշ ուտող ու թունդ գինիներով իրենց թունավորող մարդկանց մեջ հոսում է թթված ու բորբոսնած արյուն: Դա նրանց լրիվ խելքից հանում է, և նրանց հիմնական խելագրությունը հետո գերեզմաններին իշխելու համար մերձավորների արյունը թափելու ու բարեբեր հողը ամայացնելու կիրքն է: Հնդկաստանի արքայի բուժման համար վեց ամիս պետք եղավ: Երբ վերջապես բժիշկները համոզվեցին, որ նրա սրտի զարկերն ավելի համաչափ են, և միտքը պայծառացել է, գանգարիդների Խորհրդին ներկայացրին նրա առողջության վկայականը: Այդ Խորհուրդը, լսելով նաև միաեղջյուրների կարծիքը, մեծահոգաբար թույլ տվեց Հնկաստանի արքային,

գոռոզամիտ պալատականներին և անկիրթ զինվորներին վերադառնալ իրենց հայրենիք: Դա լավ դաս եղավ նրանց համար, և այդ օրվանից Հնդկաստանի ժողովուրդը հարգում է գանգարիդներին այնպես, ինչպես ձեզանում գիտության կարոտ անկիրթներն են հարգում խալդական փիլիսոփաներին, ում հետ իրենք չափվել չեն կարող:

- Ի դեպ, իմ թանկագի՛ն թռչուն,- հարցրեց արքայադուստրը,- գանգարիդները կրոն ունե՞ն:

- Իհարկե, Ձե՛րդ մեծություն: Ամեն լիալուսնի ժամանակ մենք հավաքվում ենք, որ շնորհակալություն հայտնենք Աստծուն. տղամարդիկ հավաքվում են մայրիներից կառուցված ընդարձակ տաճարում, իսկ կանայք՝ ուրիշ տաճարում, որ չշեղվեն: Բոլոր թռչունները թևածում են դեպի պուրակ, չորքոտանիները հավաքվում են հրաշալի մարգագետնում: Մենք շնորհակալություն ենք հայտնում Աստծուն մեզ առաքած բոլոր բարիքների համար: Իսկ ամենալավ քարոզը արտասանում են թութակները: Այդպիսին է իմ թանկագին Ամազանի հայրենիքը: Ես այնտեղ եմ ապրում: Նրա նկատմամբ իմ ընկերական զգացմունքները նույնքան ջերմ են, որքան սերը, որ նա ներշնչել է Ձեզ: Հավատացեք ինձ և եկեք գնանք այնտեղ. դուք նրան կայցելեք:

- Իրոք որ, թանկագի՛ն թռչուն, Դուք գերազանց արհեստով եք զբաղվել,- ժպտալով ասաց արքայադուստրը, որ վառվում էր ճանապարհ ընկնելու ցանկությամբ, բայց չէր համարձակվում այդ մասին ասել:

- Ես ծառայում եմ իմ ընկերոջը,- պատասխանեց թռչունը,- և մեծագույն բարիքը, Ձեզ սիրելու երջանկությունից հետո, Ձեր սիրուն սատարելն է:

Ֆարմազանտան ոչ մի կերպ ուշքի չէր գալիս. նրան թվում էր՝ ճախրում է երկրից վեր: Այն ամենը, ինչին նա վկա եղավ օրվա ընթացքում, այն, ինչ տեսավ հիմա, այն, ինչ լսեց և կարևորը՝ ինչ զգաց իր սրտում, նրան սուզում էր մի զմայլանքի մեջ, որը բազմակի անգամ գերազանցում էր այն զգացումին, որ ունենում են ժամանակակից մուսուլմանները, երբ, ազատված երկրային կապերից, տեսնում են իրենց իններորդ երկնքում՝ գուրուների գրկում փառքով արբեցած ու երկնային արքայությամբ զովացած:

4-րդ գլուխ

Արքայադուստրն ամբողջ գիշերն անցկացրեց Ամազանի մասին հարցուփորձով: Հիմա նա տղային անվանում էր ոչ այլ կերպ, քան «իմ սիրելի հովիվ»՝ մականուն, որ շատ ժողովուրդների մոտ ի վերջո դարձավ «սիրեկան» բառի հոմանիշը: Նա ուզում էր իմանալ, թե Ամազանն արդյո՞ք ուրիշ սիրելի չունի: Թռչունը պատասխանեց՝ ոչ , և Ֆարմազանտան զգաց իրեն երջանկության գագաթնակետին: Հետո

հետաքրքրվում էր, թե ինչ կենսաձև է նա վարում, և ցնծությամբ իմացավ, որ տղան զբաղվում է բարենորոգությամբ, նպաստում է արվեստների զարգացմանը, թափանցում է բնության գաղտնիքների մեջ, ձգտում է ինքնակատարելագործման: Մեկ էլ հարցնում էր՝ հարազա՞տ են արդյոք թռչունի և իր սիրելիի հոգիները, ինչպե՞ս է, որ թռչունն ապրել է քսանութ հազար տարի, իսկ իր սիրելին՝ ընդամենը տասնութ- տասնինը: Նա հարյուրավոր այսպիսի հարցեր էր տալիս, որոնց թռչունը պատասխանում էր զուսպ, ինչով ավելի էր գրգռում աղջկա հետաքրքրասիրությունը: Վերջապես քունը փակեց նրանց աչքերը և հանձնեց Ֆարմազանտային աստծուց առաքված քաղցր երազներին, որոնք գերազանցում են երբեմն նույնիսկ իրականությունը, և որոնց բացատրությունը ոչ միշտ է կարողանում տալ ինքը՝ խալդական փիլիսոփայությանը:

Ֆարմազանտան շատ շուտ արթնացավ: Նրա ննջարանում դեռ մթնշաղն էր տիրում, երբ հայրը մտավ ներս: Թռչունը նորին մեծությանը դիմավորեց նրբագույն բարեկրթությամբ. նրա դեմ ելավ, թափահարեց թևերը, ձգեց վիզը և հետ թռավ՝ դեպի իր նարնջի ծառը: Արքան նստեց աղջկա մահճակալին, որի դեմքը երազներից ավելի էր գեղեցկացել: Երկար մորուքով դիպչելով նրա գեղեցիկ դեմքին՝ արքան ասաց.

- Սիրելի՛դ իմ դուստր, երեկ դու չկարողացար քեզ, ինչպես ես հույս ունեի, ամուսին ընտրել: Բայց դու պետք է ամուսնանաս. այդ է պահանջում իմ երկրի բարեկեցությունը: Ես խորհրդակցեցի գուշակի հետ, որը, ինչպես գիտես, երբեք չի ստում և ղեկավարում է իմ բոլոր արաքները: Նա կարգադրեց ինձ՝ քեզ ուղարկել օտար երկրներ: Դու պետք է ճանապարհորդես:

- Ա՛խ,- բացականչեց արքայադուստրը,- իհարկե, գանգարիդների մոտ:- Եվ անգիտակցաբար դուրս թռած այս բառերն արտաբերելով՝ նա զգաց, որ ավելորդ բան ասաց: Արքան, որ ոչ մի պատկերացում չուներ աշխարհագրությունից, հարցրեց, թե ովքեր են գանգարիդները: Ֆարմազանտան հեշտությամբ տակից դուրս եկավ: Արքան հայտնեց, որ նա պետք է ուխտագնացություն կատարի, որ ինքն արդեն նրա շքախմբի մարդկանց նշանակել է: Պետական Խորհրդի ավագն է, Գերագույն հոգևորականը, պալատական մի տիկին, մի բժիշկ, դեղագործ և աղջկա թռչունը, ինչպես նաև անհրաժեշտ քանակի ծառաներ: Ֆարմազանտան, որ մինչ երեք արքաների և Ամազանի պատվին տրված այդ տոնախմբությունը երբեք իր արքա հոր պալատից դուրս չէր եկել ու վարել էր շատ ձանձրալի կյանք՝ պալատական շարժուձևի ճոռոմության և խաբուսիկ ուրախության մեջ, ցնծում էր սպասվելիք ուխտագնացության մտքից: «Ո՛վ գիտի,- մտածեց նա,- հնարավոր է՝ աստվածներն իմ թանկագին գանգարիդին նույնպես ներշնչեն ուխտագնացության միտքը դեպի նույն տաճարը, և բախտն ինձ ժպտա ու տեսնեմ ուխտավորին»: Նա քնքշորեն շնորհակալություն հայտնեց հորը՝ հավատացնելով, որ միշտ գաղտնի հակում է ունեցել աստվածայինի նկատմամբ, որին խոնարհվելու են հիմա իրեն

ուղարկում:

Արքան հյուրերի պատվին ընտիր ճաշ տվեց, որին ներկա էին միայն տղամարդիկ: Հրավիրյալների ընտրությունը, պարզվեց, հաջող չէր. արքաներ, իշխաններ, նախարարներ, հոգևորականներ՝ բոլորն էլ միմյանց նախանձում էին, բոլորն էլ ծանրութեթև էին անում իրենց ամեն մի բառը, բոլորն էլ իրենց հարևանի և հենց իրենց համար բեռ էին: Ճաշկերույթը ձանձրալի էր անցնում, չնայած որ խմիչքն անպակաս էր: Երկու արքայադուստրերն էլ, զբաղված առաջիկա ճամփորդության պատրաստությամբ, դուրս չեկան իրենց սենյակներից: Յուրաքանչյուրը ճաշեց համեստ միայնության մեջ: Հետո Ֆարմազանտան գնաց պալատական զբոսայգում զբոսնելու՝ հետը տանելով իր թանկագին թռչունին: Սա, որպեսզի զբաղեցնի տիրուհուն, ծառից ծառ էր թռչում՝ ցուցադրելով իր հրաշալի պոչն ու աստվածային փետրավորումը:

Եգիպտական փարավոնը, գինուց տաքացած, եթե չասենք՝ հարբած, իր մանկլավիկին հրամայեց տալ նետ ու աղեղը: Ճիշտն ասած՝ այս տիրակալն իր տերության ամենավատ նետաձիգն էր. երբ նա նշան էր բռնում, ամենաապահով տեղը հենց նշան բռնածն էր: Բայց հմայագեղ թռչունը՝ նույնքան արագաթռիչ, որքան նետը, խոցվեց նետի հարվածից ու ընկավ՝ արյունաքամ լինելով Ֆարմազանտայի ձեռքերի վրա: Հիմարաբար ծիծաղելով՝ փարավոնը հեռացավ իր սենյակը: Արքայադուստրը սուր ճչաց, հեծկլտաց, սկսեց ճանկռոտել իր երեսն ու կուրծքը: Թռչունը վերջին շնչում շշնջաց.

- Այրեք ինձ և մոխիրն անմիջապես տարեք երջանիկ Արաբիա՝ Ադեմ թե Եդեմ *(ճիշտ ձևը՝ Եդեմ՝ երկրային դրախտ, ուր ապրել են առաջին մարդիկ՝ Ադամն ու Եվան (ծանոթագրությունը՝ հրատարակչի))* քաղաքից արևելք: Այնտեղ դրեք արևի տակ՝ դարչինի ու մեխակի փայտերից արած փոքրիկ խարույկի վրա:

Այս ասելով՝ թռչունը հոգին ավանդեց:
Ֆարմազանտան երկար պառկած էր անգիտակից: Երբ ուշքի եկավ, նորից արցունք թափեց:

Հայրը վշտակից էր նրան և անիծում էր փարավոնին՝ չկասկածելով անգամ, որ այդ պատահարը գուշակում է մռայլ ապագա: Արքան անմիջապես գնաց գուշակի մոտ՝ նրա կարծիքն իմանալու: Գուշակը պատասխանեց. «Ամեն ինչ խառնվել է՝ կյանքն ու մահը, դավաճանությունն ու հավատարմությունը, կորուստն ու շահումը, դժբախտությունն ու երջանկությունը»: Ո՛չ արքան, ո՛չ Խորհրդի անդամները ոչինչ չկարողացան հասկանալ, բայց արքան գոհ էր, որ կատարել է բարեկրթության ծեսը:

Մինչ նա հարցուփորձ էր անում, վշտահար դուստրը հրամայեց կատարել թռչունի

վերջին ցանկությունը և որոշեց նրա մոխիրը հետը տանել Արաբիա՝ թեկուզ կյանքի գնով: Թռչնին այրեցին լեռնային հրակայուն վուշի վրա՝ նարնջի ծառի հետ միասին, որի վրա գիշերում էր: Արքայադուստրը մոխիրը հավաքեց առյուծի երախից հանած ալմաստներով ու նռնաքարով զարդարված ոսկե ամանի մեջ: Ախ, եթե նա կարողանար այս սգո արարողության փոխարեն կենդանի այրել Եգիպտոսի ատելի փարավոնին: Դա նրա միակ ցանկությունն էր: Զայրույթի պահին նա հրամայեց սպանել փարավոնի նվիրած երկու կոկորդիլոսներին, զույգ գետաձիերին, զույգ վագերաձիերին և զույգ առնետներին և Եփրատը նետել երկու մումիաներն էլ: Եթե Ապիս ցուլը ձեռքն ընկներ, նրան էլ չէր խնայի:

Եգիպտական փարավոնն այսպիսի վիրավորանքից իրեն կորցրեց: Անմիջապես լքեց երկիրը՝ մտադրված արագացնելու իր երեքհարյուրհազարանոց բանակի ժամանումը: Հնդկաստանի թագավորը, տեսնելով, որ իր դաշնակիցը մեկնեց, ինքն էլ նույն օրը գնաց իր երկիր՝ հաստատ որոշելով միացնել եգիպտական զինվորներին իր մարտիկներից երեք հարյուր հազար հոգի: Սկյութների արքան Ալդեայի հետ գիշերը գաղտնի փախավ՝ անխախտ որոշում կայացնելով վերադառնալ երեքհարյուրհազարանոց բանակի գլուխն անցած, որ ինքնակոչից վերանվաճի որպես ավագ ճյուղի ժառանգորդի՝ Ալդեային պատկանող բաբելոնական գահը: Իր հերթին գեղեցկուհի Ֆարմազանտան առավոտյան ժամը երեքին շքախմբի ուղեկցությամբ ճանապարհ ընկավ՝ մխիթարվելով այն մտքից, որ գնում է Արաբիա՝ կատարելու իր թռչունի վերջին ցանկությունը, և միգուցե անմահ աստվածների բարեհաճությունը վերադարձնի իրեն թանկագին Ամազանին, առանց որի կյանքն այժմ անիմաստ էր թվում:

Այսպիսով՝ Բաբելոնի արքան արթնացավ միայնության մեջ:

- Վերջ տոնակատարություններին,- բացականչեց նա,- բայց այս ի՞նչ դատարկություն է հոգումս այս ամբողջ աղմուկից հետո:

Սակայն նա իսկական արքայական ցասում ապրեց, երբ իմացավ Ալդեայի առևանգման մասին: Նա հրամայեց արթնացնել բոլոր նախարարներին և Խորհուրդը հավաքեց: Մինչ նրանք կգային, չհապաղեց դիմելու գուշակին, բայց այն ժամանակից ի վեր աշխարհով մեկ հռչակված «Եթե աղջկան չես ամուսնացնում, ինքն է իր համար ամուսին գտնում» ասույթից բացի ուրիշ բան չլսեց:
Շտապ հրաման տրվեց երեքհարյուրհազարանոց բանակն ուղղել սկյութների արքայի դեմ: Այդ ժամանակ էլ պայթեց ամենասարսափելի պատերազմներից մեկը, որ հետևանքն էր աշխարհիս երեսին կատարված ամենահրաշալի տոնախմբության:

Չորս բանակներ՝ յուրաքանչյուրը երեք հարյուր հազար մարդուց, դատապարտել էին Ասիան ամայանալու: Բոլորին էլ պարզ է, որ մի քանի հարյուրամյակ հետո ողջ

աշխարհը զարմացրած Տրոյական պատերազմը ընդամենը մանկական խաղ էր՝ այս պատերազմի հետ համեմատած, թեպետ պետք է նաև հաշվի առնել, որ Տրոյական պատերազմն սկսվեց արդեն ոչ երիտասարդ և միանգամայն անառակ կնոջ պատճառով, ով երկու անգամ թույլ էր տվել իրեն փախցնել, իսկ այստեղ խոսքը երկու երիտասարդ աղջիկների և մի թռչունի մասին է:

Հնդկաստանի արքան գնաց դիմավորելու իր բանակը մեծ, հոյակապ ճանապարհի վրա, որն այն ժամանակ ձգվում էր Բաբելոնից Քաշմիր: Սկյութների արքան Ալդեայի հետ սլանում էր գեղատեսիլ ճանապարհով, որը տանում էր դեպի Իմուս լեռը: Հետագայում այս բոլոր ճանապարհները անհետացել են վատ վերաբերմունքից: Եգիպտոսի փարավոնն ուղղվեց դեպի արևմուտք և շաժվեց Միջերկրական կոչվող ոչ մեծ ծովի ափով, որն անգրագետ հրեաները հետո «Մեծ ծով» են կոչել:

Իսկ չքնաղ Ֆարմազանտան ընթանում էր բասորական ճանապարհով՝ երիզված բարձր արմավենիներով, որ մշտական ստվեր էին անում և տարին բոլոր պտուղ էին տալիս: Տաճարը, դեպի ուր նա գնում էր ուխտի, գտնվում էր հենց Բասորում: Այն սուրբը, ում պատվին կառուցվել էր այդ տաճարը, նման էր նրան, որին հետագայում պաշտում էին Լամպսակում *(Հունական Լամպսակ քաղաքում երկրպագում էին Պրիամոսին՝ քաղցր կրքի ու զգացմունքային հաճույքների աստծուն: Ծանոթությունը՝ հրատարակչի)*: Նա ոչ միայն աղջիկներին ամուսին էր տրամադրում, այլև հաճախ ինքն էր նրան փոխարինում: Սա Ասիայում ամենապաշտելի սուրբն էր:

Ֆարմազանտային բոլորովին չուներ բասորական սրբի կարիքը: Նրան հետաքրքրում էր միայն գանգարիդյան իր սիրելի հովիվը՝ իր գեղեցիկ Ամազանը: Նա մտադրվել էր Բասորում նավ նստել և նավարկել դեպի Երջանիկ Արաբիա՝ կատարելու թռչունի վերջին կամքը:

Երրորդ գիշերակացին, դեռ հյուրանոց չմտած, ուր սպասավորները նրա համար սենյակ էին պատրաստել, նրան զեկուցեցին, որ այդ նույն տեղն է ժամանել նաև Եգիպտոսի փարավոնը: Իր լրտեսների միջոցով արքայադստեր ճանապարհի մասին տեղեկություն ստանալով՝ նա մեծաքանակ թիկնազորի ուղեկցությամբ տեղնուտեղը փոխեց իր՝ նախապես որոշված երթուղին:

Նա գալիս է հյուրանոց, բոլոր ելքերի մոտ պահակ է կանգնեցնում, բարձրանում է չքնաղ Ֆարմազանտայի սենյակը ու նրան ասում.

- Ձե՛րդ մեծություն, հենց Ձեզ էի փնտրում: Դուք Բաբելոնում ինձ վրա քիչ էիք ուշադրություն դարձնում: Արդարությունը պահանջում է, որ գոռոզությունն ու թեթևամտությունը պատժվեն: Բարի եղեք, ընթրեք այսօր ինձ հետ, հետո կկիսեք անկողինս, իսկ հետագայում Ձեզ հետ կվարվեմ կախված այն բանից, թե գոհ կլինե՞մ արդյոք ձեզնից, թե ոչ:

Ֆարմազանտան միանգամից գլխի ընկավ, որ ինքը շահեկան վիճակում չէ: Նա հրաշալի հասկանում էր, որ խելամտությունը պահանջում է հարմարվել հանգամանքներին, և որոշեց ազատվել փարավոնից՝ օգտագործելով ինչ- որ մի անմեղ խորամանկություն: Նրան աչքերի տակից նայելով, ինչը դարեր անց կոչվեց «աչք- ունքով անել», ահա թե ինչ բարբառեց նա այնպիսի համեստությամբ, գեղանիությամբ, ներդրումով, հուզականությամբ և այլ հմայող հնարքներով, որոնք կարող էին խելքահան անել ամենախելամիտ տղամարդուն ու կուրացնել ամենասրատեսին.

- Խոստովանում եմ, Ձե՛րդ գերազանցություն, որ ես ոչ մի անգամ չեմ համարձակվել նայել Ձեզ, երբ դուք իմ արքա հորը նրան այցելելու պատվին էիք արժանացրել: Ես չէի կարողանում զսպել իմ սիրտը, ամաչում էի իմ միամիտ անմիջականությունից: Ես վախենում էի, որ իմ հայրն ու Ձեր մրցակիցները կնկատեն իմ նախընտրանքը, որ ես ցուցաբերում եմ Ձեզ, և որին դուք, անկասկած, արժանի եք: Հիմա արդեն ես կարող եմ ազատորեն տրվել իմ զգացմունքներին: Երդվում եմ Ապիս ցլով, որին Ձեզնից հետո ամենաշատն եմ պաշտում երկրիս երեսին, որ Ձեր առաջարկը ցնծում պարգևեց ինձ: Ես արդեն պատիվ եմ ունեցել ընթրելու Ձեզ հետ արքայի՝ իմ հոր մոտ և մեկ անգամ էլ հաճույքով կընթրեմ Ձեզ հետ այստեղ՝ առանց քաշվելու նրա ներկայությունից: Միակ բանը, որ խնդրում եմ, թող Ձեր գլխավոր քուրմն էլ խմի մեզ հետ: Բաբելոնում նա իրեն դրսևորեց որպես հաճելի սեղանակից: Ես Շիրազի հրաշալի գինի ունեմ, ուզում եմ, որ երկուսդ էլ համտեսեք այն: Ինչ վերաբերում է Ձեր երկրորդ առաջարկին, ապա այն շատ գայթակղիչ է, բայց վայել չէ ազնվական օրիորդին խոսել այդ մասին: Բավարարվեք նրանով, որ ես համարում եմ Ձեզ ամենահզոր տիրակալն ու ամենահմայիչ տղամարդը:

Այս բառերը փարավոնի գլուխը պտտեցրին: Նա սիրով համաձայնեց ընթրիքին կանչել նաև գլխավոր քուրմին:

- Ուզում եմ Ձեզ մի բան էլ խնդրել,- ասաց արքայադուստրը,- իմ դեղագործին թույլ տվեք ինձ մոտ գա: Երիտասարդ աղջիկները հաճախ տառապում են թեթև վատառողջությամբ: Մեկ տեսար՝ գլխապտույտ ունենք, մեկ՝ սրտխփոց, մեկ՝ ծակոցներ, մեկ էլ՝ խեղդուկ. հիվանդություններ, որ պահանջում են որոշկի պայմաններ և որոշակի ռեժիմ: Մի խոսքով՝ ինձ շտապ պետք է իմ դեղագործը, և հույս ունեմ, որ սիրո այդ համեստ ապացույցը չեք խնայի ինձ համար:

- Ձերդ գերազանցություն,- պատասխանեց փարավոնը,- թեպետ ես ու դեղագործը միանգամայն հակադիր տեսակետներ ունենք, և նրա արհեստի զենքերը չեն համընկնում իմերին, բայց ես չափազանց լավ եմ դաստիարակված, որ մերժեմ Ձեր այդքան օրինական խնդրանքը: Ես կկարգադրեմ, որ նա ներկայանա Ձեզ ընթրիքից առաջ: Անկասկած՝ ճանապարհորդությունը մի քիչ հոգնեցրել է Ձեզ: Դուք, իհարկե, աղախնի կարիք ունեք: Հրամայեք կանչել նրան, ով Ձեզ համար ամենահաճելին է,

որից հետո ես կսպասեմ Ձեր հրամաններին և Ձեր բարեհաճությանը:

Նա հեռացավ: Մտան դեղագործն ու Իրլա անունով աղախինը: Արքայադուստրը նրան միանգամայն վստահում էր: Նա կարգադրեց աղախնին ընթրիքի համար բերել վեց շիշ շիրազյան գինի և այդ նույն գինով արբեցնել պահակախումբը, որ հսկում էր բաբելոնյան ձերբակալված սպաներին: Հետո նա հրամայեց դեղագործին շշերի մեջ քնաբեր լցնել, որից մարդիկ քնում են քսանչորս ժամ, և որը դեղագործը միշտ իր հետ համենայնդեպս ուներ: Նրա հրամանները ճշգրտությամբ կատարվեցին: Կես ժամից փարավոնը գլխավոր մոգի ուղեկցությամբ ներկայացավ: Ընթրիքն աշխույժ անցավ: Փարավոնն ու մոգը ցմրուր դատարկեցին վեց շիշն էլ ու խոստովանեցին, որ այդպիսի գինի Եգիպտոսում հնարավոր չէ գտնել: Աղախինը ջանում էր հարբեցնել ծառաներին, որոնք սպասարկում էին սեղանը: Ինքը՝ Ֆարմազանտան, ոչ մի կաթիլ չխմեց՝ բացատրելով նրանով, որ բժիշկն իրեն սննդակարգ է նշանակել: Շուտով բոլորը քնեցին:

Եգիպտական փարավոնի գերագույն քուրմն այնպիսի փառահեղ մորուք ուներ, որ կարող էր ունենալ միայն իր դասի ներկայացուցիչը: Ֆարմազանտան ճարպկորեն խուզեց այն, հրամայեց փոքրիկ ժապավեն ամրացնել և կապեց իր ծնոտին: Նա հագավ մոգի զգեստը և իր վրա ամրացրեց նրա բոլոր տարբերանշանները, իսկ աղախնուն հագցրեց որպես Իզիդա աստվածուհու մոգ: Ամանն ու ոսկեղենը վերցնելով՝ նա դուրս եկավ հյուրանոցից և անցավ իրենց տիրոջ ու պահակների նման քնածների վրայով: Նրան ուղեկցող աղախինը հոգաց, որ դարպասի մոտ իրենց սպասեն երկու թամբած ձիեր: Արքայադուստրն իր շքախմբից ոչ մեկին չկարողացավ իր հետ տանել, հակառակ դեպքում նրանց կբռներ դրսի պահակախումբը:

Ֆարմազանտան ու Իրլան անցան զինվորների կրկնակի շարքի միջով, որը նրան գլխավոր մոգի տեղն ընդունեց՝ մեծարելով «պայծառափայլ սուրբ հայր» և օրհնություն խնդրելով: Քսանչորս ժամվա ընթացքում՝ մինչ փարավոնը քնած էր, փախստականները հասար Բասար: Այստեղ նրանք, որ կասկած չհարուցեն, փոխեցին իրենց քողարկող հագուստը: Շտապ մի բեռնատար նավ վարձեցին, որը նրանց տարավ Օրմուզդկան նեղուցով դեպի Եդեմի չքնաղ ափը՝ Երջանիկ Արաբիա: Դա այն նույն Եդեմն էր, որի այգիները այնքան էին հռչակված, որ հետագայում դրանք կոչեցին սրբերի բնակատեղի: Դրանք Ելիսեյան դաշտերի *(հուն. դիցաբանության մեջ՝ անդրշիրիմյանաշխարհում երանելիների դաշտեր)*, Հեսպերիսների այգիների*(ոսկեպտուղ խնձորենիների այգի, որը հսկում էին Հեսպերուհիները)* և Երջանկության կղզու այգիների նախատիպն էին, քանի որ այդ շոգ երկրներում մարդիկ այլ արքայություն չեն պարտկերացնում, քան թավուտների ստվերն ու առվի կարկաչը: Հավերժ կյանքով ապրել երկնքում՝ շփվելով աստվածության հետ կամ թափառել դրախտային այգիներում՝ միևնույն էր մարդկանց համար, ովքեր զրուցում

են՝ առանց իրար հասկանալու և դեռ չեն կարողանում մտածել ու ճշգրիտ արտահայտվել:

Հենց արքայադուստրը հասավ այս երկիրը, նախ և առաջ շտապեց իր թռչնի հուղարկավորության հանդեսն անել, ինչպես որ վերջինս իրեն պատվիրել էր: Իր գեղեցիկ ձեռքերով նա ոչ մեծ մի խարույկ սարքեց մեխակի ու դարչինի ոստերից: Ի՜նչ զարմանք նա ապրեց, երբ թռչունի աճյունը այդ ոստերի վրա թափվելով՝ ինքնիրեն բոց բռնկվեց: Ամբողջն արագ այրվեց: Մոխրի փոխարեն հայտնվեց մի մեծ ձու, որից դուրս եկավ իր թռչունը՝ ավելի շլացուցիչ, քան առաջ էր: Դա արքայադստեր՝ երբևէ ապրած ամենահրաշալի ակնթարթն էր: Դրանից հրաշալի միայն մի բան կարող էր լինել. նա կրքոտ դա էր երազում, բայց չէր համարձակվում հուսալ:

- Հիմա ես տեսնում եմ,- ասաց նա,- որ Դուք Փյունիկ թռչունն եք, որի մասին ինձ այնքան շատ են պատմել: Ես հիմա ուրախությունից ու զարմանքից կմեռնեմ: Ես երբեք չէի հավատում մեռյալների հարությանը, բայց իմ երջանկությունն ինձ համոզեց:

- Ձե՛րդ գերազանցություն, հարություն առնելն ամենահասարակ երևույթն է աշխարհում,- պատասխանեց Փյունիկը,- երկու անգամ ծնվելը նույնքան բնական է, որքան մեկ անգամը: Աշխարհում բոլորն էլ վերածնվում են: Թրթուրը վերածնվում է թիթեռի, գետնին ընկած ընկույզը՝ ծառի: Հողում թաղված բոլոր կենդանիները վերածնվում են որպես խոտ, որպես բույս և կերակրում են ուրիշ կենդանիների, ինչի հետևանքով դառնում են նրանց մասը: Երբևէ կենդանի էակ եղածի բոլոր բաղկացուցիչ մասերը վերածնվել են որպես ուրիշ արարածներ: Ճիշտ է, ես միակ արարածն եմ, որին ամենակարող Արամազդը շնորհել է իր իսկ կերպարով վերածնվելու բարեհաճությունը:

Ֆարմազանտան, որ Ամազանին ու Փյունիկին տեսնելու պահից չէր դադարում ամեն վայրկյան զարմանալուց, ասաց.

- Ես հասկանում եմ, որ հզոր աստվածությունը կարողացել է Ձեր աճյունից Ձեզ նմանվող թռչուն վերածնել, բայց, խոստովանեմ, չեմ հասկանում, թե ինչպես Դուք կարող եք լինել այն նույն արարածը և ունենաք նույն հոգին, որ ունեիք: Որտե՞ղ էր Ձեր հոգին, երբ Ձեր մահից հետո ես Ձեզ պահում էի գրպանումս:

- Տեր աստված, տիրուհի՛, մի՞թե հզոր Արամազդի համար ավելի դժվար է իր իշխանությունն արտահայտել իմ էության փոքրիկ կայծի վրա, քան նորից այն ստեղծելը: Մի անգամ նա արդեն ինձ շնորհել է ենթագիտակցություն, հիշողություն, մտածելու կարողություն և հիմա նորից ու նորից է շնորհում: Չէ՞ որ նրանից, որ այդ բարեհաճությամբ նա օժտել է իմ մեջ հալչող նախնական կրակի միայն մի մասնիկը,

ոչ թե ամբողջ օրգանիզմս, ըստ էության, ոչինչ չի փոխվում: Ո՛չ Փյունիկ թռչունը, ո՛չ մարդիկ երբեք չեն իմանա, թե դա ինչպես է լինում: Բայց գերագույն բարեհաճությունը, որով ինձ օժտել է աստվածությունը, այն է, որ նա ինձ հարություն է տվել Ձեզ համար: Ինչո՞ւ ես չեմ կարող այն քսանութ հազար տարին, որ վիճակված է ինձ ապրելու մինչև իմ նոր վերամարմնավորումը, անցկացնել Ձեզ և իմ թանկագին Ամազանի հետ:

- Իմ սիրելի Փյունիկ, հիշեք, որ Բաբելոնում ինձ ասած Ձեր առաջին բառերը, որոնք ես երբեք չեմ մոռանա, իմ մեջ հույս ներշնչեցին նորից տեսնելու իմ թանկագին հովվին: Մենք պետք է անհապաղ միասին ուղևորվենք գանգարիդների մոտ և նրան բերենք Բաբելոն:

- Իմ մտադրությունն էլ է դա,- ասաց Փյունիկը,- ոչ մի վայրկյան չի կարելի կորցնել: Հարկավոր է հետևել Ամազանին ամենակարճ ճանապարհով, այսինքն՝ օդով: Երջանիկ Արաբիայում՝ ընդամենը հարյուր հիսուն մղոնի վրա, ապրում են երկու գրիֆներ*(առասպելական հրեշ՝ առյուծի գլխով ևարծվի թևերով)*՝ իմ մտերիմ ընկերները: Ես նրանց աղավնու փոստով նամակ կուղարկեմ, և մինչ մութն ընկնի, նրանք այստեղ կլինեն: Մենք կհասցնենք Ձեզ համար պատվիրել ոչ մեծ, հարմարավետ մի բազմոց՝ անհրաժեշտ սննդի համար դարակներով: Ձեզ և Ձեր աղախնի համար շատ հարմար կլինի այդ կառքում: Այդ գրիֆներն ամենաուժեղներն են իրենց ցեղատեսակի մեջ: Նրանցից յուրաքանչյուրը ճանկերով կբռնի բազմոցի բռնիչներից մեկը: Բայց կրկնում եմ՝ թանկ է ամեն ակնթարթը:

Թռչունը նույն պահին Ֆարմազանտայի հետ գնաց ծանոթ կահույքագործի մոտ՝ բազմոց պատվիրելու: Չորս ժամ անց բազմոցը պատրաստ էր: Նրա դարակներում դրված էին կաթնահունց հաց, բլիթ, որ որակով գերազանցում էին բաբելոնականին, կիտրոններ, անանասներ, կոկոսներ, գետնանուշեր և եդեմական գինի, որը նույնքան համեղ է շիրազականից, որքան որ վերջինը գերազանցում է սյուրենականը:

Բազմոցը և՛ հարմար էր, և՛ թեթև, և՛ ամուր: Գրիֆները եկել էին նշանակված ժամին: Ֆարմազանտան և Իրլան նստեցին կառքը: Գրիֆները փետուրի նման այն օդ բարձրացրին: Փյունիկը մեկ թռչում էր կողքից, մեկ նստում էր բազմոցի թիկնակին: Գրիֆները ձգվում էին դեպի Գանգես՝ օդը ճեղքող նետի արագությամբ: Կանգառները երկարատև չէին, միայն գիշերը՝ սնվելու և թևավոր կառապաններին ջուր տալու համար:

Վերջապես նրանք ժամանեցին գանգարիդների երկիրը: Արքայադստեր սիրտը թպրտում էր ակնկալիքից, սիրուց, ուրախությունից: Փյունիկը պատվիրեց վայրէջք կատարել Ամազանի տան մոտ: Նա ցանկացավ խոսել տղայի հետ, բայց պարզեց, որ երեք ժամ առաջ Ամազանը դուրս էեկել տնից և ուղևորվել անհայտ

ճանապարհով:

Նույնիսկ գանգարիդների լեզվով չկա մի բառ, որ բացատրի Ֆարմազանտային համակած հիասթափությունը:

- Ցավոք, հենց սրանից էլ ես վախենում էի,- ասաց Փյունիկը: - Այն երեք ժամը, որ անցկացրիք հյուրանոցում՝ Բոսորի ճանապարհին, Եգիպտոսի այդ չարաբաստիկ փարավոնի հետ, միգուցե ընդմիշտ Ձեզնից խլեց Ձեր կյանքի երջանկությունը: Վախենամ թե անվերադարձ կորցրիք Ամազանին:

Փյունիկը հարցրեց ծառաներին՝ իրենց թույլ կտա՞ն արդյոք ողջունելու Ամազանի մորը, բայց սրանք պատասխանեցին, որ նրա ամուսինը երկու օր առաջ վախճանվել է, և նա ոչ ոքի չի ընդունում:

Փյունիկը, որ հեշտությամբ էր տուն մտնում, տարավ Բաբելոնի արքայադստերը մի ննջարան, ուր պատերը զարդարված էին փղոսկրի շերտերի վրա գործած նարնջի ծառերով: Հոտաղ տղաներն ու հոտաղ աղջիկները՝ վառ նարնջագույն ժապավենով գոտևորված երկար, ձյունասպիտակ հագուստով հարյուր սովորական հախճապակե զամբյուղներով նրան էին մատուցում հարյուր ամենաընտիր ու համադամ կերակուրներ, որոնցում չկար մսեղեն: Այստեղ կային բրինձ, սագո, սպիտակածավար, վերմիշել, մակարոն, ձվածեղ, կաթի մեջ հարած ձու, սերուցքային պանրիկներ, ամեն տեսակի թխվածքներ, բանջարեղեն, մրգեր, անքան բուրավետ ու այնքան համեղ, որոնց մասին ուրիշ երկրներում պատկերացում անգամ չունեին: Նաև լիուլի մատուցվեցին զովացուցիչ ըմպելիքներ, որոնք որակով գերազանցում էին լավագույն գինիներին:

Այն ժամանակ, երբ արքայադուստրը վայելում էր ուտելիքը՝ վարդերից հյուսված բազմոցին հենված, իրենց բախտից համր չորս սիրամարգեր թե սիրամարգուհիներ, պարուրում էին նրան իրենց փայլուն փետուրներով: Երկու հարյուր թռչունից, հարյուր հովվից և հարյուր հովվուհուց բաղկացած երգչախումբը համերգ էր տալիս: Սոխակները, դեղձանիկները, շիկահավերը, սերինոսները հովվուհիների հետ միաժամանակ երգում էին դիկտանտով *(բարակ ձայն):* Հովիվները երգում էին ալտ ու բաս ձայներով, իսկ ամբողջը միասին հիանալի և բնական էր, ինչպես ինքը՝ բնությունը: Արքայադուստրը խոստովանեց, որ եթե Բաբելոնը շողում էր մեծ ճոխությունից, ապա գանգարիդների բնությունը հազար անգամ ավելի գերող է: Բայց մինչ հնչում էր մխիթարող և ականջը շոյող երաժշտությունը, արքայադուստրը լաց էր լինում:

- Հովիվներն ու հովվուհիները, սոխակներն ու դեղձանիկները վայելում են սերը, իսկ ես զրկված եմ գանգարիդ- հերոսից, որ արժանի է իմ ամենաքնքուշ ու կրքոտ երազանքներին,- ասում էր նա իր աղախին Իրլային:

Այն պահին, երբ նա ընթրում էր և մեկ հիանում էր, մեկ՝ լաց լինում, Փյունիկն Ամազանի մորն ասում էր.

- Իմ տիրուհի, Դուք չեք կարող Բաբելոնի արքայադստերը չընդունել: Դուք գիտեք…

- Ես ամեն ինչ գիտեմ, ընդհուպ մինչև Բասսարի ճանապարհին՝ հյուրանոցում նրա արկածը: Այսօր առավոտյան ինձ ամեն ինչ պատմեց սև կեռնեխը: Այդ դաժան կեռնեխը մեղավոր է նրանում, որ որդիս հուսահատությունից խելքը թռցրել է ու լքել հայրենի տունը:

- Ուրեմն՝ Դուք չգիտեի՞ք, որ արքայադուստրն ինձ վերակենդանացրել է:

- Ո՛չ, թանկագինս, ես կեռնեխից իմացա, որ Դուք մեռել եք, և անմխիթար էի: Ես այնքան էի վշտացած Ձեր մահից, իմ ամուսնու վախճանից, որդուս անհապաղ մեկնումից, որ բոլորի համար փակել եմ իմ տան դռները: Բայց քանի որ Բաբելոնի արքայադուստրն ինձ պատիվ է արել և այցելել է, ուրեմն շուտ հրավիրեք նրան այստեղ: Ես պետք է նրան շատ կարևոր լուր հայտնեմ, խնդրում եմ՝ Դուք էլ ներկա լինեք այդ հանդիպմանը:

Եվ նա նույն պահին գնաց հարևան սենյակը՝ դիմավորելու արքայադստերը:

Նա դժվարությամբ էր քայլում. այդ կինն արդեն շուրջ երեք հարյուր տարեկան էր, բայց նա դեռ չէր կորցրել իր գեղեցկությունը: Երևում էր, որ երկու հարյուր երեսուն-երկու հարյուր քառասուն տարեկանում նա չքնաղ է եղել:

Նա ընդունեց Ֆարմազանտային հարգալից և արժանապատվորեն, և նրա կարեկցանքն ու տխրությունը խիստ ազդեցություն ունեցան արքայադստեր վրա:

Ֆարմազանտան նախ և առաջ ցավակցություն հայտնեց նրան՝ ամուսնու մահվան կապակցությամբ:

- Ցավոք,- պատասխանեց Ամազանի մայրը,- նրա մահը Ձեզ ավելի է վերաբերում, քան Դուք կարծում եք:

- Իհարկե, ես շատ վշտացած եմ,- պատասխանեց Ֆարմազանտան,- չէ՞ որ նա հայրն էր…

Այս ասելով՝ նա սկսեց լաց լինել:

- Չէ՞ որ միայն հանուն նրա էի ես, ենթարկվելով բազմաթիվ վտանգների, շտապում այստեղ: Հանուն նրա ես լքեցի հորս և աշխարհի ամենափայլուն պալատը: Եգիպտոսի արքան, որին ես ատում եմ, ինձ առևանգեց: Այդ անտաշ մարդուց փախչելով՝ ես թռել- եկել եմ հսկայական տարածություն, որ հանդիպեմ նրան, ում սիրում եմ: Ես այստեղ եմ, և ի՞նչ: Նա փախչում է ինձնից:

Հեծկլտոցն ու արցունքներն ընդհատեցին նրա խոսքը:

Բայց ահա խոսեց տղայի մայրը.

- Ձերդ մեծություն, երբ Եգիպտոսի արքան Ձեզ պահեց, և դուք ընթրում էիք նրա հետ Բասսարի ճանապարհին, երբ Դուք Ձեր չքնաղ ձեռքերով նրա համար Շիրազի գինի էիք լցնում, չնկատեցի՞ք արդյոք սենյակով թևածող մի սև կեռնեխի:

- Ինչպե՞ս չէ: Ես այն ժամանակ նրա վրա ուշադրություն չդարձրի, բայց հիմա հստակ հիշում եմ, որ երբ փարավոնը վեր կացավ սեղանի մոտից, որ համբուրի ինձ, կեռնեխը սուր ձայնով չկչկացնելով պատուհանից դուրս թռավ և էլ չվերադարձավ:

- Ցավոք, տիրուհի,- ասաց Ամազանի մայրը,- հենց դա եղավ Ձեր բոլոր դժբախտությունների պատճառը: Իմ որդին ուղարկել էր այդ կեռնեխին, որ նա իմանա, թե ինչպես եք Դուք Ձեզ զգում, և ի՞նչ է կատարվում Բաբելոնում՝ հուսալով շուտով վերադառնալ այնտեղ, ընկնել ձեր ոտքերը և Ձեզ նվիրել իր ողջ կյանքը: Բոլոր գանգարիդները կարողանում են սիրել ու հավատարմություն պահպանել, բայց իմ որդին նրանցից ամենակրքոտն ու ամենահավատարիմն է: Կեռնեխը ձեզ տեսել է հյուրանոցում: Դուք ուրախ զվարճանում էիք փարավոնի և ինչ- որ մի հոտած հոգևորականի հետ: Նա, վերջապես նկատել է, թե դուք ինչ քնքշությամբ եք համբուրում այն նույն արքային, որ սպանել է Փյունիկին և որի նկատմամբ իմ որդին անհաղթահարելի ատելություն է տածում: Այդ տեսնելով՝ կեռնեխն արդարացի վրդովմունք է ապրել և թռել հեռացել է՝ անիծելով Ձեր չարաբաստիկ սերը: Այսօր նա վերադարձավ այստեղ: Նա ամեն ինչ պատմեց, բայց, տեր աստված, նա եկավ այն պահին, երբ մենք որդուս հետ ողբում էինք նրա հոր մահը, Փյունիկի մահը, և այն պահին, երբ նա ինձնից իմացավ, որ քեզ հեռու ազգական է գալիս:

- Տեր աստված, իմ հեռու ազգականը… Հնարավո՞ր բան է: Ինչպե՞ս: Մի՞թե ես այդքան երջանիկ կլինեմ և միաժամանակ այդքան դժբախտ այն բանից, որ վիրավորել եմ նրան:

- Իմ որդին Ձեր հեռավոր ազգականն է, ասում եմ,- շարունակեց մայրը,- և ես Ձեզ դա կապացուցեմ: Բայց գտնելով ազգականուհուս՝ ես կորցնում եմ որդուս: Նա չի տանի Եգիպտոսի արքային նվիրած Ձեր համբույրի տված վիշտը:

- Ա՛խ, մորաքույր,- բացականչեց չքնաղ Ֆարմազանտան,- երդվում եմ Ձեր որդու և հզոր Արամազդի անուններով, այդ տխրահռչակ համբույրն ամենևին էլ դավաճանություն չէր: Դա սիրո ամենաանհերքելի ապացույցն էր, որ ես կարող էի տալ Ձեր որդուն: Հանուն նրա ես չլսեցի հորս, հանուն նրա ես ուղևորվեցի Եփրատից Գանգես: Գերվելով Եգիպտոսի անարժան արքայից, ես նրան խաբելով միայն կարողացա փախչել: Վկայակոչում եմ Փյունիկին՝ իր աճյունով ու հոգով, որ այն ժամանակ իմ գրպանում էին: Նա կարող է հաստատել, որ ես անմեղ եմ: Բայց այդ ինչպե՞ս Ձեր որդին, որ ծնվել է Գանգեսի ափերին, կարող է իմ ազգականը դուրս գալ, եթե մեր ազգն ահա քանի դար է իշխում է Եփրատի ափերին:

- Գիտե՞ք արդյոք,- ասաց հարգարժան գանգարիդուհին,- որ Ձեր պապի զարմիկ Ալդեյը Բաբելոնի արքա էր և գահընկեց է արվել Բելի հոր կողմից:

- Այո՛, ես դա գիտեմ:

- Դուք գիտեք, որ նրա որդին օրինական ամուսնությունից դուստր ուներ՝ արքայադուստր Ալդեան, որ դաստիարակվում էր Ձեր պալատում: Ահա այդ արքան, հետապնդվելով Ձեր հորից, փախավ դեպի մեր օրհնյալ երկիրը, ուր թաքնվեց որիշի անվան տակ: Նա ամուսնացավ ինձ հետ, և ծնվեց մեր Ալդեյ-Ամազան որդին՝ ամենագեղեցիկը, ամենաուժեղը, ամենաանվախը, ամենաբարեգործը մահկանացուների մեջ, իսկ հիմա՝ նաև ամենախելահեղը: Նա ուղևորվեց Բաբելոնի տոնախմբությանը՝ լսած լինելով Ձեր գեղեցկության մասին: Այն պահից նա պաշտում է Ձեզ, և, հնարավոր է, ես այլևս երբեք չեմ տեսնի իմ որդուն:

Նա արքայադստեր առաջ փռեց բոլոր պատվոգրերը, որ ապացուցում էին Ալդեյների տոհմի ազնվականությունը: Ֆարմազանտան աչքի պոչով դրանց արժանացրեց իր հայացքին:

- Ախ,- ասաց նա,- մի՞թե կարելի է անկողմնակալ ուսումնասիրել այն, ինչ սիրում ես: Իմ սիրտը հավատում է Ձեզ: Բայց ո՞ւր է Ալդեյ- Ամազանը: Ո՞ւր է իմ ազգականը, իմ սիրելին, իմ արքան: Ո՞ւ ր է իմ կյանքը: Ո՞ւր է ուղղել նա իր քայլերը: Ես նրան կփնտրեմ տիեզերքի բոլոր մոլորակներում, որոնց ամենաչքնաղ զարդն է նա: Ես նրան կփնտրեմ Կանոն աստղի, Շիտ ու Ալդեբարան աստղերի վրա: Ես նրան կապացուցեմ իմ սերն ու իմ ատելությունը:

Փյունիկը հաստատեց արքայադստեր անմեղությունն այն հանցանքում, որը նրան վերագրում էր կեռնեխը, այսինքն նրանում, որ Ֆարմազանտան համբուրել է փարավոնին, բայց հարկավոր էր համոզել Ամազանին և նրան վերադարձնել տուն:

Փյունիկը թռչուններ և միաեղջյուրներ ուղարկեց բոլոր ծայրերը, և, վերաջապես, նրան տեղեկացրին, որ Ամազանը ուղևորվել է Չինաստան:

- Այդ դեպքում՝ գնանք Չինաստան,- բացականչեց արքայադուստրը,- ճանապարհը հեռու չէ… Ոչ ուշ, քան տասնհինգ օրից ես կվերադարձնեմ Ձեզ Ձեր որդուն:

Ինչպե՞ս էին լաց լինում բաժանվելիս գանգարիդի մայրն ու Բաբելոնի արքայադուստրը, որքա՞ն համբույրներ, որքա՞ն սրտառուչ խոսքեր…

Փյունիկը տեղնուտեղը հրամայեց կառքում տեղավորել վեց միաեղջյուր: Ամազանի մայրը իր ազգական արքայադստերը երկու հարյուր ձիավորից թիկնազոր տրամադրեց և նվիրեց նրան մի քանի հազար տեղական ալմաստներ: Փյունիկը, վշտացած չարիքից, որ կեռնեխի բացբերանության հետևանքով էր, հրամայեց վտարել երկրից բոլոր սև կեռնեխներին, և այդ օրից Գանգեսի ափերին երբեք կեռնեխ չես տեսնի:

5-րդ գլուխ

Միաեղջյուրները ութ օրից էլ քիչ ժամանակում Ֆարմազանտային, Իրլային և Փյունիկին հասցրին Կամբալա՝ Չինաստանի մայրաքաղաք: Այդ քաղաքը Բաբելոնից ընդարձակ էր, և նրա հոյակապությունն այլ տեսակի էր: Իրերի և բարոյականության ինքնատիպությունը կհետաքրքրեին Ֆարմազանտային, եթե նրա միտքն այդքան սաստիկ զբաղված չլիներ իր Ամազանով:

Հենց որ չինական կայսրն իմացավ Բաբելոնի արքայադստեր՝ մայրաքաղաքի դարպասներին մոտենալու մասին, տեղնուտեղը նրան ընդառաջ ուղարկեց տոնական հագնված չորս հազար
մանդարին *(բարձր պաշտոնյա հին Չինաստանում)*: Նրանք բոլորը երեսնիվար փռվեցին, և յուրաքանչյուրը մատուցեց կարմիր մետաքսի շերտի վրա ոսկե տառերով գրված ողջույնը: Ֆարմազանտան նրանց ասաց, որ եթե ունենար չորս հազար լեզու, բոլորին կպատասխաներ առանձին-առանձին, բայց քանի որ ունի միայն մեկը, խնդրում է բոլոր մանդարիններին ներել իրեն, որ շնորհակալություն է հայտնում բոլորին միասին:

Մանդարինները նրան մեծամեծ պատիվներով ուղեկցեցին կայսեր մոտ: Դա ամենաարդարամիտ, ամենաբարեկիրթ, ամենաիմաստուն տիրակալն էր աշխարհի երեսին: Նա էր, որ առաջինը իր արքայական ձեռքերով մշակեց մի փոքրիկ դաշտ, որ իր ժողովրդի մեջ հարգալից վերաբերմունք սերմանի հողագործության նկատմամբ: Նա առաջինը մտցրեց բարեգործության համար պարգևատրումները, երբ մյուս երկրներում անարժան օրենքները բավարարվում էին միայն հանցագործությունը պատժելով: Այդ նույն կայսրը հենց նոր վռնդել էր իր տարածքներից օտարերկրացի քուրմերի *(նկատի ունի ճիզվիտների վտարումը)* ավազակախումբը, որ եկել էր արևմուտքից այն խելագար հույսով, որ կստիպի

ամբողջ Չինաստանին մտածել իրենց պես, և որ արդեն հասցրել էր ճշմարտության ավետման քողի տակ հարստություն ու հեղինակություն ձեռք բերել:

Նրանց վտարելով՝ կայսրն արտաբերել էր երկրի տարեգրության մեջ հավերժացած հետևյալ ճշմարտությունը. «Դուք այնքան չարիք կարող էինք այստեղ սերմանել, որքան սերմանել եք ուրիշ տեղեր: Դուք եկել եք աշխարհի ամենահանդուրժող ժողովրդին քարոզելու անհանդուրժողության դոգմաներ: Ես ձեզ վտարում եմ, որ ստիպված չլինեմ ինչ-որ ժամանակ ձեզ պատժել: Ձեզ պատիվներով կտանեն մինչև իմ տերության սահմանները: Ձեզ կմատակարարեն ամենայն անհրաժեշտը, որ կարողանաք հասնել այն կիսագնդի սահմաններին, որտեղից ժամանել եք: Գնացե՛ք խաղաղությամբ, եթե կարող եք խաղաղ ապրել, և այլևս չվերադառնաք այստեղ»:

Բաբելոնի արքայադուստրն ուրախությամբ տեղեկացավ այս որոշման ու այս բառերի մասին: Նա հիմա ավելի համոզված էր, որ պալատը բարեկամական ընդունելություն կցուցաբերի, քանի որ ինքն անձամբ աչքի էր ընկնում արտակարգ կրոնահանդուրժողականությամբ: Չինաստանի կայսրը, միայն նրա հետ ճաշելով, այնքան նրբանկատ էր, որ չեղյալ համարեց իրենց նիստուկացի բոլոր նվաստացուցիչ արարողությունները: Արքայադուստրը ներկայացրեց նրան Փյունիկին, որին կայսրը շոյեց: Թռչունը նստեց նրա բազկաթոռի թիկնակին: Ճաշի ավարտին Ֆարմազանտան նրան վստահաբար տեղեկացրեց իր ճանապարհորդության պատճառի մասին և խնդրեց հրաման արձակել Կամբալայում գտնելու գեղեցիկ Ամազանին, որի մասին պատմել էր՝ չթաքցնելով նաև իր ճակատագրական կիրքը երիտասարդ հերոսի նկատմամբ:

- Դուք ո՞ւմ եք պատմում այդ բոլորը,- բացականչեց չինական կայսրը,- նա ինձ հաճույք է պատճառել՝ իմ մայրաքաղաքը գալով: Նա գերել է ինձ իր հաստատակամությամբ: Ճիշտ է, նա շատ տխուր է, բայց նրա հմայքը դրանից ավելի սրտառուչ է: Իմ շրջապատից ոչ ոք չի կարող նրա հետ չափվել խելքով: Դատավորների միաբանության ոչ մի մանդարին չի տիրապետում այդքան ծավալուն ճանաչողությամբ, ռազմական կոչում ունեցող ոչ մի մանդարին չունի այդքան առնական ու հերոսական արտաքին, ինչպես նա: Նրա անչափ երիտասարդ լինելը միայն սաստկացնում է նրա տաղանդների գինը: Եթե ես այնքան դժբախտ ու այնքան լքված լինեի Տիենի և Չանգտիի կողմից, որ ինձ պատեր տարածքներ գրավելու կիրքը, ես կխնդրեի Ամազանին գլխավորել իմ զորքերը և համոզված կլինեի, որ կգրավեմ ամբողջ աշխարհը: Շատ եմ ցավում, որ վիշտը երբեմն պղտորում է նրա բանականությունը:

- Ախ, Ձերդ մեծություն,- խոր վշտով, հոգեկան հուզումով ու կշտամբալից բացականչեց Ֆարմազանտան,- ինչո՞ւ Դուք Ամազանին չհրավիրեցիք ճաշին: Ես վշտից կմեռնեմ, կանչեք նրան որքան հնարավոր է շուտ:

- Ձերդ մեծություն, նա այսօր առավոտյան մեկնել է և նույնիսկ չի էլ ասել, թե դեպի ուր է ուղևորվել:

Ֆարմազանտան դիմեց Փյունիկին.

- Ո՛վ Փյունիկ, Դուք երբևէ ինձնից դժբախտ աղջիկ տեսե՞լ եք: Բայց, Ձերդ մեծություն,- շարունակեց արքայադուստրը,- ինչո՞ւ նա որոշեց այդպես անսպասելի լքել այսքան հյուրասեր մի պալատ, ինչպիսին ձերն է, որտեղ, ինչպես ինձ թվում է, ամեն ոք կցանկանար մնալ ամբողջ կյանքում:

- Տեղի ունեցավ հետևյալը, Ձերդ մեծություն. այստեղի ամենահարաշագեղ արքայադուստրերից մեկը սիրահարվել էր նրան ու ժամադրություն նշանակել կեսօրին: Իսկ նա մեկնել է արշալույսին՝ իմ ազգականուհուն մի նամակ թողնելով, որի վրա աղջիկը շատ արցունք է թափել. «Չինական չքնաղ արքայադուստր, Դուք արժանի եք մի սրտի, որը Ձեզնից առաջ երբեք ոչ ոքի չի սիրել: Իսկ ես անմահ աստվածներին երդում եմ տվել հավերժ սիրել միայն Ֆարմազանտային՝ Բաբելոնի արքայադստերը, և նրան սովորեցնել, թե ինչպես պետք է սանձել սեփական կրքերը ճանապարհորդությունների ժամանակ: Նա դժբախտություն է ունեցել հրապուրվելու Եգիպտոսի անարժան փարավոնով: Ես մարդկանց մեջ ամենադժբախտն եմ: Ես կորցրել եմ և՛ հորս, և՛ Փյունիկին, և՛ Ֆարմազնտայի կողմից սիրված լինելու հույսս: Ես լքել եմ վշտից ճնշված մորս, իմ հայրենիքը, որովհետև չէի կարող մնալ այնտեղ, որտեղ իմացա, որ Ֆարմազանտան սիրում է ուրիշի: Ես երդվել եմ ոտքի տակ տալ ողջ աշխարհը և հավատարիմ մնալ իմ սիրուն: Դուք իմ հանդեպ ատելություն կտածեիք, և աստվածներն ինձ կպատժեին, եթե ես խախտեի իմ երդումը: Ձեզ համար ուրիշ սիրեկան ընտրեք, Ձերդ մեծություն, և նույնքան հավատարիմ եղեք, որքան ես եմ»:

- Ախ, ինձ տվեք այդ զարմանքի արժանի նամակը. դա ինձ համր մխիթարանք կլինի,-բացականչեց չքնաղ Ֆարմազանտան:- Իմ դժբախտության մեջ ես այնուամենայնիվ երջանիկ եմ: Ամազանը սիրում է ինձ: Հանուն ինձ Ամազանը մերժում է չինական արքայադուստրերի սերը: Ամբողջ երկրագնդի վրա միայն նա է ընդունակ իր նկատմամբ այդպիսի հաղթանակ տանելու: Նա ինձ հավատարմության մեծ օրինակ է ցույց տալիս, բայց, Փյունիկը գիտի, ես օրինակի կարիք չունեմ: Ի՞նչ դաժան է՝ զրկվել սիրած մարդուց ինչ-որ ամենաանմեղ մի համբույրի պատճառով, որը ես տվել եմ՝ ելնելով միմիայն հավատարմության զգացումից: Եվ այնուամենայնիվ՝ նա ո՞ւր գնաց: Ի՞նչ ճանապարհ ընտրեց: Բարի եղեք, պարզեք ինձ համար դա, և ես անմիջապես ճանապարհ կընկնեմ:
Չինաստանի կայսրը պատասխանեց, որ, դատելով ստացված տեղեկություններից, նրա սիրելին ճանապարհվել է դեպի սկյութների երկիրը: Հենց նույն պահին թամբեցին միաեղջյուրները, և արքայադուստրը, սրտառուչ հրաժեշտ տալով կայսերը, Փյունիկի, իր աղախին Իրմայի և ամբողջ շքախմբի ուղեկցությամբ

ճանապարհ ընկավ:

Սկյութիա ժամանելով՝ նա ավելի պարզ, քան երբևէ տեսավ, որ որոշ մարդիկ և իշխանությունը առանձնանում են և տարբերվելու են իրարից, քանի դեռ ինչ-որ ժողովուրդ, ավելի լուսավորյալ, քան մյուսները, ձեռքից ձեռք չի փոխանցել գիտության լույսը դարերի անկրթությունից հետո, և բարբարոս երկրներում կհայտնվեն հերոսական հոգիներ, որոնք իրենց մեջ ուժ ու համառություն կգտնեն բարբարոսներից լուսավորյալ մարդիկ կերտելու համար: Սկյութիայում քաղաքներ չկային, հետևաբար չկար և ոչ մի նրբաճաշակ արվեստ: Շուրջը փռված էին միայն լայնարձակ դաշտերը, և ժողովուրդն ապրում էր վրաններում կամ սայլերում: Այս տեսարանը սարսափազդու էր: Ֆարմազանտան հարցրեց, թե որ վրանում կամ սայլում է կենում արքան: Նրան պատասխանեցին, որ ութ օր առաջ նա, երեքհարյուրհազարանոց բանակի գլուխն անցած, արշավանք է սկսել Բաբելոնի արքայի դեմ, որից փախցրել է նրա ազգականուհուն՝ չքնաղագեղ արքայադուստր Ալդեային:

- Նա փախցրել է իմ զարմուհուն,- բացականչեց Ֆարմազանտան:- Այ քեզ անսպասելի նորություն: Ինչպե՞ս: Իմ զարմուհին, ով երջանկություն էր համարում ինձ ծառայելը, հիմա թագուհի է, իսկ ես դեռ ամուսնացած չեմ:

Եվ նա անմիջապես հրամայեց իրեն տանել թագուհու վրանը:
Այդ հեռավոր երկրում անսպասելի հանդիպումը, անսովոր նորությունները, որոնք նրանք փոխանակեցին, նրանց հանդիպմանը անկեղծություն հաղորդեցին, որն ստիպեց նրանց մոռանալ, որ իրենք երբեք միմյանց չեն սիրել: Նրանք ուրախ հանդիպեցին: Ճշմարիտ գորովանքին փոխարինեց քաղցր թվացողությունը: Նրանք, արցունքն աչքերին, գրկեցին միմյանց, և նրանց մեջ տիրեց նույնիսկ բարեկամական անբռնազբոսիկությունն ու անկեղծությունը, քանի որ հանդիպումը պալատում չէր:

Ալդեան ճանաչեց Փյունիկին և վստահելի աղախին Իրլային: Նա սամույրի մորթի նվիրեց զարմուհուն, սա էլ նրան՝ ալմաստներ: Խոսում էին երկու արքաների նախաձեռնած պատերազմի մասին, ողբացին այն մարդկանց ճակատագիրը, որոնք ինքնակալների կողմից ու նրանց կամքով միմյանց ոչնչացնելու են ուղարկվել մի դատարկ բանի համար, որը երկու կարգին մարդ կկարողանար մի ժամում լուծել: Բայց գլխավորապես խոսում էին գեղեցկատես օտարականի մասին, ով հաղթեց առյուծին, նվիրեց աշխարհի ամենամեծ ալմաստները, մադրիգալի հեղինակի մասին, Փյունիկ թռչունի տիրոջ մասին, որ սև կեռնեխի պատճառով դարձել է մարդկանցից ամենադժբախտը:

- Դա իմ թանկագին եղբայրն է,- ասաց Ալդեան:

- Դա իմ սիրելին է,- բացականչեց Ֆարմազանտան:- Դուք, իհարկե, տեսել եք նրան:

Գուցե նա դեռ այստե՞ղ է: Այսինքն՝ չէ՞ որ նա գիտի, զարմուհի՛, որ Ձեր եղբայրն է: Եվ նա չի լքի Ձեզ այնպես անսպասելի, ինչպես լքեց չինական կայսերը:

- Ո՛ վ աստվածներ. տեսե՞լ եմ արդյոք ես նրան,- բացականչեց Ալդեան:- Նա ինձ մոտ մնաց չորս օր: Ա՛խ, զարմուհիս, ինչքա՛ն դժբախտ է իմ եղբայրը: Սուտ լուրը նրան լրիվ խելքահան է արել: Նա կուրորեն թափառում է: Պատկերացրե՛ք. խելահեղությունն այնպես է նրան համակել, որ նա մերժեց Սկյութիայի ամենահիասքանչ կնոջ սերը: Նա երեկ է գնացել՝ նրան մի նամակ ուղարկելով, որից աղջիկը հուսահատության մեջ է ընկել: Նա ուղևորվեց դեպի կիմմերոսները (նկատի ունի ռուսներին):

- Փառք աստծո,- բացականչեց Ֆարմազանտան,- ևս մեկ հրաժարում հանուն ինձ: Իմ երջանկությունը գերազանցեց իմ բոլոր սպասելիքները, ինչպես իմ դժբախտությունը՝ բոլոր մտահոգություններս: Ինձ տվեք ադ հրաշք նամակը, որ ես գնամ, որ հետևեմ նրան՝ ձեռքիս ունենալով նրա հավատարմության ապացույցները: Մնաք բարով, զարմուհի՛ս, Ամազանը կիմերոսների մոտ է: Թռչում եմ այնտեղ: Ալդեան համարեց, որ արքայադուստր Ֆարմազանտան ավելի խելագար է, քան իր եղբայր Ամազանը, բայց քանի որ նույն հիվանդության նոպան մի ժամանակ ինքն էլ էր ունեցել՝ հրաժարվելով բաբելոնական պալատի ուրախություններից ու փայլից հանուն սկյութների արքայի, և քանի որ կանայք միշտ էլ աջակցում են սիրո պատճառած խելահեղությանը, անկեղծ զգացվեց, բարի ճանապարհ մաղթեց Ֆարմազանտային և խոստացավ սատարել նրա սիրուն, եթե երբևէ բախտ ունենա նորից տեսնելու եղբորը:

6-րդ գլուխ

Շուտով Բաբելոնի արքայադուստրն ու Փյունիկը ժամանեցին կիմերոսների երկիր, որը, ճիշտ է, զգալիորեն քիչ էր բնակեցված, քան Չինաստանը, բայց տարածքով երկու անգամ գերազանցում էր նրան: Սա մի ժամանակ ոչնչով չէր տարբերվում Սկյութիայից, բայց որոշ ժամանակից ի վեր դարձել է նույնքան ծաղկուն, որքան այն պետությունները, որոնք պարծենում էին, թե լուսավորում են ուրիշ պետությունների:

Մի քանի օրվա ճանապարհորդությունից հետո Ֆարմազանտան ժամանեց մի մեծ քաղաք, որի բարեկարգությանը հետևում էր ինքը՝ կայսրուհին: Նա քաղաքում չէր. այդ ժամանակ այցելում էր իր տերության տարածքները՝ Եվրոպայի սահմաններից սկսած մինչև Ասիայի սահմանները՝ ցանկանալով սեփական աչքերով տեսնել դրանք, իմանալ դրանց կարիքների մասին, նրանց օգնելու միջոցներ գտնել, բազմապատկել բարեկեցությունը, տարածել լուսավորություն:

Այդ հին մայրաքաղաքի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը, որ տեղեկացել էր բաբելոնուհու և Փյունիկի ժամանման մասին, շտապեց հանդիսավոր ընդունելություն կազմակերպել արքայադստեր համար՝ համոզված լինելով, որ իր տիրուհին՝

ամենասիրալիրն ու ամենափայլունը կայսրուհիներից, իրեն շնորհակալ կլինի, որ այսքան բարձրաստիճան անձին դիմավորելիս ցուցաբերել է այն պատիվները, որ կցուցաբերեր նա ինքը:

Ֆարմազանտային տարան պալատի սենյակներից մեկը, որի մոտից ցրեցին խմբված ամբոխը: Նրա պատվին կազմակերպեցին զարմանահնար տոնախմբություններ: Կիմմերական ազնվազարմ տեարը՝ բնական գիտությունների մեծ գիտակ, երկար զրուցում էր Փյունիկի հետ, երբ արքայադուստրը հեռացավ իր սենյակը: Փյունիկը տեղեկացրեց նրան, որ ինքը մի ժամանակ եղել է կիմմերոսների երկրում, և հիմա դժվարությամբ է այն ճանաչում:

- Ինչպե՞ս եք այս կարճ ժամանակում,- զարմանում էր նա,- կարողացել հասնել այսքան բարեկարգիչ փոփոխությունների: Դեռ երեք հարյուր տարի էլ չի անցել այն ժամանակից, երբ այստեղ տիրում էր վայրի բնությունն իր ողջ վայրագությամբ, իսկ հիմա իշխում է արվեստը, հոյակապությունը, փառքը և նրբագեղությունը:

- Տղամարդը սկիզբ դրեց այս մեծ գործին,-պատասխանեց կիմմերոսը,- կինը շարունակեց այն (*նկատի ունի Պետրոս Առաջինին և Եկատերինա Երկրորդին*): Այս կինը ավելի լավ օրենսդիր դուրս եկավ, քան եգիպտացիների Իզիդան ու հույների Ցերերան: Օրենսդիրների մեծ մասը սահմանափակ ու բռնակալական միտք ունեին, որ նրանց աշխարհայացքը սահմանափակում էր այն երկրի սահմաններում, որի ղեկավարն էին իրենք: Ամեն մեկն իր ժողովրդին դիտում էր որպես միակը աշխարհիս երեսին կամ որպես մի ժողովուրդ, որը դատապարտված է ապրելու մյուս ժողովուրդների հետ թշնամանքի պայմաններում: Այդ օրենսդիրները հիմնարկներ էին ստեղծում միայն իրենց ժողովրդի համար, սովորույթներ էին մտցնում միայն նրանց համար, միայն նրանց համար ստեղծում էին կրոն: Ահա թե ինչու եգիպտացիք, որ այդքան հռչակված են քարակույտեր անելով, իջել են մինչև անասնական մակարդակի և հռչակել են իրենց բարբարոսական սնահավատությամբ: Նրանք մյուս ժողովուրդներին դիտում են որպես անկիրթների, նրանք չեն շփվում, և, բացի արքայական պալատից, որ երբեմն արհամարհում է ստորակարգ նախապաշարումները, դուք չեք հանդիպի որևէ եգիպտացու, որ համաձայնի ուտել նույն ամանից, որից օգտվել է մի օտարերկրացի: Նրանց մոգերը դաժան են ու բութ: Ավելի լավ է՝ բոլորովին օրենքներ չունենալ և հետևել միայն բնության պահանջին, որը մեր սրտերում բարու և չարի հասկացությունն է ամրապնդել, քան ենթարկվել այդքան վայրի օրենքներին:

Մեր կայսրուհին միանգամայն ուրիշ նպատակներ է հետապնդում: Նա բոլոր միջօրեականներն ընդգրկող իր անծայրածիր պետությունը դիտում է որպես այդ միջօրեականների վրա ապրող բոլոր ժողովուրդների համար գոյություն ունեցող: Առաջին օրենքը, որ նա ընդունեց, դավանանքի ազատության և ամեն տեսակի մոլորությունների նկատմամբ հանդուրժողականության օրենքն էր: Իրեն հատուկ

հանճարեղությամբ նա հասկացավ, որ եթե դավանանքները տարբեր են, բարոյականության օրենքներն ամենուր նույնն են: Այս համոզմունքով առաջնորդվելով՝ նա հարազատացրել է իր ժողովրդին աշխարհի բոլոր ժողովուրդների հետ և կիմերոսները կարող են վերաբերվել սկանդինավցիներին կամ չինացիներին որպես եղբայրների: Նա ավելին է արել: Նա ցանկացել է, որ այդ թանկարժեք դավանանքի նկատմամբ հանդուրժողականությունը, այդ հիմնական օղակը, որ միացնում է մարդկանց, օգտագործվի նաև իր հարևանների կողմից: Այս կերպ՝ նա վաստակել է իր հայրենիքի մայրը կոչվելու և կվաստակի մարդկային ցեղի բարեգործը կոչվելու իրավունքը, եթե հաստատակամորեն շարունակի հետապնդել իր նպատակը:

Նրանից առաջ մարդիկ, որոնք, ցավոք, իշխանություն ունեին, մարդասպանների հորդաներ են ուղարկել՝ կողոպտելու անհայտ ցեղերին և նրանց արյունով ներկելու նրանց պապերի հողը: Այդ մարդասպաններին անվանում էին հերոսներ: Ավազակությունը համարում էին փառք: Մեր տիրուհին այլ կերպ է փառաբանված: Նա ուղարկում է իր զորքերը, որ խաղաղություն հաստատի, որ խանգարի մարդկանց իրար չարիք պատճառելում, որ ստիպի նրանց միմյանց նկատմամբ հանդուրժող լինել, և նրա դրոշները համատարած խաղաղության հաստատման խորհրդանշաններ են:

Իր լսածից հիացած՝ Փյունիկն ասաց.

- Տեա՛ր, քսանյոթ հազար իննսուն տարի և յոթ ամիս է, ինչ ապրում եմ աշխարհիս երեսին, բայց երբեք չի հաջողվել տեսնել նման մի բան, ինչի մասին Դուք եք պատմում:

Նա հարցրեց, թե պաշտոնյային հայտնի չէ՞ արդյոք որևէ բան իր ընկեր Ամազանի մասին: Կիմմերոսը պատմեց նրան նույնը, ինչ պատմել էին արքայադստերը սկյութների երկրում և Չինաստանում: Ամազանը, վախենալով տեղի տալ կանանց հետամտումներին՝ լքել է կայսերական պալատը, հենց որ ինչ-որ պալատական տիկին նրան հանդիպում է նշանակել: Փյունիկը շտապեց տեղեկացնել Ֆարմազանտային նրա սիրելիի հավատարմության այս նոր ապացույցի մասին, հավատարմությունն ավելի նշանակալից է նրանով, որ տղան չէր կարող ենթադրել, որ արքայադուստրն այդ մասին երբևէ կիմանա:

Նա մեկնել էր Սկանդինավիա: Այդ երկրում նրան ապշեցրին մինչ այդ ոչ մի տեղ չտեսած նկարները: Այստեղ թագավորական իշխանությունն ու ազատությունը միմյանց նկատմամբ թշնամություն չէին տածում: Դա մի դաշինք էր, որ ուրիշ պետությունների համար աներևակայելի էր: Հողագործները մասնակցում էին օրենսդրությանը բարձրաստիճանների հետ հավասար: Իսկ երիտասարդ իշխանավորը ազատ երկրի արժանավոր գլխավորողը դառնալու հույս էր ներշնչում

(նկատի ունի Շվեդիայի արքայազն, հետագայում արքա Գուստավ 3-րդին, որը հավակնում էր դառնալ լուսավորյալ միապետ՝ «թագակիր փիլիսոփա», բայց փաստորեն վերականգնեց թագավորական անսահմանափակ իշխանություն): Բայց ավելի զարմանալի էր այն, որ միակ թագավորը, որ իր ժողովրդի հետ պայմանագրի ուժով հանդիսանում էր ամենաանսահմանափակ տիրակալն աշխարհում, միաժամանակ և՛ ամենաերիտասարդն էր, և՛ ամենաարդարամիտը:

Սարմատների մոտ Ամազանը գահի վրա փիլիսոփայի տեսավ: Նրան կարելի էր կոչել «անարխիայի արքա», քանի որ նա գլխավորն էր հարյուր մանր իշխանավորների, որոնցից յուրաքանչյուրը կարող էր մի բառով չեղյալ համարել մյուսների որոշումները: Էոլայի համար ավելի հեշտ էր ղեկավարել իրար մեջ անընդհատ վիճող քամիներին, քան այս միապետի համար՝ հարթել բոլոր հակասությունները: Նա կարծես նավավար էր անընդհատ փոթորիկների մեջ, իսկ այդ ընթացքում նավը չի խորտակվում: Նավը մնում է կայուն՝ որպես գերազանց նավավարի ձեռքում:

Անցնելով իր հայրենիքից այնքան տարբեր այս բոլոր երկրներով՝ Ամազանը համառորեն խուսափում էր իր ճանապարհին հանդիպած ամեն մի գայթակղությունից, քանի որ նա միշտ հիշում էր այն համբույրը, որ Ֆարմազանտան նվիրել էր փարավոնին և ավելի վճռականորեն էր հաստատվում իր՝ Ֆարմազանտային միակ ու աներեր հավատարմության օրինակ ցույց տալու անհասանելի նպատակում:

Արքայադուստրն ու Փյունիկը կրնկակոխ հետևում էին նրան՝ հետ մնալով մի երկու օրով: Նա չէր հոգնում առաջ գնալով, աղջիկը՝ ձգտելով հասնել նրան:

Այսպես նրանք անցան ամբողջ Գերմանիան՝ հիանալով հյուսիսում մտքի ու փիլիսոփայության հաջողություններով: Այնտեղի բոլոր տիրակալները լուսավորյալ մարդիկ էին, բոլորը խրախուսում էին ազատամտությունը: Նրանց դաստիարակությունը այլևս չէր վստահվում այնպիսի մարդկանց, ովքեր դրա մեջ շահ ունեն կամ ովքեր իրենք մոլորված են: Նրանք դաստիարակվում էին բարոյական օրենքների նկատմամբ հարգալից վերաբերմունքով և սնահավատության նկատմամբ արհամարանքով: Այդ բոլոր երկրներում վերացվել էր այն անիմաստ ավանդույթը, որ թուլացնում ու հասցնում էր կործանման շատ հարավային երկրների. դա կենդանի թաղումն էր ընդարձակ հավաքատեղիներում երկու սեռի անհամար մարդկանց, որոնց հավերժ բաժանում էին միմյանցից և ստիպում երդվել, որ երբեք միմյանց հետ չեն շփվի: Դա ծայրահեղ անմտություն էր, որ մնացել էր դարերով՝ ամայացնելով երկիրը ոչ պակաս քան ամենադաժան պատերազմները:

Հյուսիսային տիրակալները վերջապես հասկացան, որ եթե կա ձիաբուծարան, չի

կարելի առանձնացնել ամենաուժեղ որձերին զամբիկներից: Նրանք վերացրին ոչ պակաս տարօրինակ և ոչ պակաս վնասակար մոլորություններ: Վերջապես այդ անծայրածիր տարածությունների մարդիկ համարձակվեցին խելամիտ լինել, այն դեպքում, երբ ուրիշ երկրներում դեռ շարունակում էին հավատալ, թե մարդկանց կարելի է ղեկավարել միայն այնքան ժամանակ, քանի դեռ նրանք հիմար են:

7-րդ գլուխ

Ամազանը հասավ Բատավիա: Սրտում վիշտը պահած՝ նա այնուամենայնիվ քաղցր բավականություն էր վայելում, երբ տեսավ մի երկիր, որ գանգարիդների երջանիկ երկրի հետ հեռավոր նմանություն ուներ՝ ազատություն, հավասարություն, ազնվականություն, բավականություն, հանդուրժողականություն: Բայց այդ երկրի կանայք այնքան սառն էին, որ նրանցից ոչ մեկը չփորձեց, ինչպես ամեն տեղ լինում էր, նրան գրավել: Նա հարկ չուներ կայունություն ցուցաբերելու: Եթե ուշադրություն դարձներ այդ կանանց, ապա հեշտությամբ կգրավեր նրանց մեկը մյուսի հետևից՝ ոչ մեկի կողմից սիրված չլինելով: Բայց նա հեռու էր այն մտքից, որ պիտի սրտեր նվաճի: Ֆարմազանտան համարյա հասավ նրան այդ անգույն երկրում: Նա միայն մի ակնթարթ ուշացավ:

Բատավիայում Ամազանի մոտ այնքան գովեցին Ալբիոն կղզին *(Անգլիայի հին անվանումը)*, որ նա որոշեց իր միաեղջյուրով նավ բարձրանալ, որը համընթաց արևելյան քամու օգնությամբ չորս ժամում հասավ Տիրից ու Ատլանտիդա կղզուց ավելի հռչակված այդ երկրի ափերը:

Չքնաղ Ֆարմազանտան, նրան հետևելով Դվինեայի, Վիսլայի, Էլբայի և Վեզերայի ափով, վերջապես հասավ Ռեյնի գետաբերանը, որն այն ժամանակ իր վարար ջրերը մղում էր դեպի Գերմանական ծովը:
Նա տեղեկացավ, որ իր թանկագին սիրեցյալը նավարկել է դեպի Ալբիոնի ափերը: Թվաց, թե հեռվում մի պահ երևաց նրա նավը: Նա ուժ չուներ զսպելու ուրախության ճիչը, որ զարմացրեց Բատավիայի բոլոր կանանց, ովքեր չեն պատկերացնում, որ երիտասարդը կարող է պատճառ դառնալ այդպիսի հիացմունքի: Ինչ վերաբերում է Փյունիկին, ապա նրա վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում՝ համարելով, որ նրա փետուրները վաճառքի համար ավելի քիչ են պիտանի, քան սագերի կամ ճահճային թռչունների փետուրները: Բաբելոնի արքայադուստրը վարձեց երկու նավ, որոնք պետք է նրան իր շքախմբով տեղափոխեին այն երջանիկ կղզին, որի հյուրը շուտով պիտի դառնար իր երազանքների միակ առարկան, իր կյանքի շունչը, իր սրտի պաշտամունքը:

Այդ նույն պահին, երբ հավատարիմ ու դժբախտ Ամազանն արդեն ոտք դրեց Ալբիոնի ափին, հանկարծ փչեց արևմտյան տաք քամին: Բաբելոնյան արքայադստեր նավերը չկարողացան նավարկել: Դառը թախիծը, ծանր ողբը, խորը տրտմությունը պաշարեցին Ֆարմազանտային: Նա կսկծալով մտավ անկողին՝ սպասելով, թե երբ

կփոխվի քամին: Բայց ութ օր նա փչում էր անսպառ եռանդով: Ութ օր, որ նրան դարեր էին թվում, Իրլան արքայադստեր համար բարձրաձայն սիրավեպեր էր կարդում: Դա չի նշանակում, թե բատավցիները կարողանում էին սիրավեպ գրել, բայց քանի որ նրանք համաշխարհային միջնորդներ էին, վաճառում էին ուրիշ ժողովրդների մտքերն այնպես, ինչպես իրենց ապրանքները: Արքայադուստրը հրամայեց Մարկ-Միշել-Ռեյից *(հոլանդացի հրատարակիչ, որ հրատարակել է Վոլտերի՝ Ֆրանսիայում արգելված գրքերը)* գնել ավզոնյան և մոգերի երկրներում *(Իտալիան և Ֆրանսիան)* գրված բոլոր հեքիաթները, ուր այդ հեքիաթների տարածումը խելամտորեն թույլատրված էր՝ Բատավիան հարստացնելու նպատակով: Արքայադուստրը հույս ուներ այդ հեքիաթներում գտնելու իր արկածներին նման ինչ-որ բան և դրանով քնեցնելու իր վիշտը: Իրլան կարդում էր, Փյունիկն իր կարծիքն էր ասում, իսկ արքայադուստրը ո՛չ «Դուրսպրծուկ գյուղացու» *(Մարիվոյի վեպը)*, ո՛չ «Տանզայի», ո՛չ «Սոֆիայի» *(Կրեբիյոն Կրտսերի վեպերը: Սրանք բոլորը 18-րդ դարում մեծ համարում ուներին ֆրանսիական բարձր հասարակության շրջանում)* չգտավ գեթ մի բան, որ գոնե հեռավոր կերպով հիշեցներ իր արկածները: Նա ամեն րոպե ընդհատում էր ընթերցանությունը, որ հարցնի, թե որ կողմից է փչում քամին:

8-րդ գլուխ

Այդ ժամանակ Ամազանը վեց միաեղջյուրի լծած կառքում արդեն մոտենում էր Ալբիոնի մայրաքաղաքին՝ երազելով արքայադստեր մասին: Հանկարծ նա նկատեց մի կառք, որ ընկել էր ջրանցքը: Ծառաները գնացել էին օգնություն փնտրելու, իսկ ինքը՝ տերը հանգիստ նստել էր կառքում՝ առանց դույզն-ինչ անհանգստության, և ծխախոտ էր վայելում, քանի որ այն ժամանակ արդեն ծխում էին: Նրա անունը Mylord What-then էր, որ այն լեզվով, որով թարգմանում եմ այս պատմությունը, մոտավորապես նշանակում է «Դե ինչ, միլորդ»:

Ամազանը շտապեց նրան օգնության: Նա առանց կողմնակի օժանդակողների բարձրացրեց կառքը. նրա ուժն այդքան գերազանցում էր ուրիշ մարդկանց ուժը: «Դե, ինչ» միլորդը բավարարվեց ասելով՝ «Ա՛յ քեզ ուժ»:

Վազեցին եկան հարևան գյուղացիները և զայրանալով, որ իրենց իզուր տեղը անհանգստացրել են, հարձակվեցին օտարականի վրա: Նախ հայհոյեցին՝ անվանելով նրան «օտարական շուն», հետո փորձեցին ծեծել:

Ամազանն ամեն ձեռքով երկու հոգու բռնեց և մի քսան քայլ հեռու նետեց: Մյուսներն սկսեցին հարգանքով վերաբերվել, խոնարհվել և օղու փող մուրալ: Նա ավելի շատ փող տվեց, քան գյուղացիները երբևէ տեսել էին: «Դե, ինչ» միլորդն ասաց.

- Ես Ձեզ հարգում եմ: Գնանք այստեղից երեք մղոնի վրա գտնվող իմ ամառանոցը՝ ճաշելու:

Նա նստեց Ամազանի կառքը, քանի որ իր սեփականն ընկնելիս ջարդվել էր:

Քառորդ ժամ լռելուց հետո միլորդը նայեց Ամազանին և հարցրեց.

- How do you do?,- բառացի թարգմանած՝ «Ինչպե՞ս ես դու անում», իսկ թարգմանած՝ «Ո՞նց ես», ինչը ցանկացած լեզվով ոչ մի բան էլ չի նշանակում: Հետո ավելացրեց.

- Դուք վեց հիասքանչ միաեղջյուր ունեք,- և շարունակեց ծխել:

Ամազանը հայտարարեց, որ միաեղջյուրները միլորդի տրամադրության տակ են, որ ինքը եկել է գանգարիդների երկրից և առիթն օգտագործեց խոսելու համար Բաբելոնի արքայադստեր և ճակատագրական համբույրի մասին, որ նա տվել էր Եգիպտոսի փարավոնին: Այս ամենին միլորդը ոչ մի պատասխան չտվեց, քանի որ իր համար միանգամայն միևնույն էր՝ կա՞ն արդյոք երկրի վրա Եգիպտոսի փարավոնը, Բաբելոնի արքայադուստրը: Եվս քառորդ ժամ անցավ լռության մեջ, որից հետո նա նորից հետաքրքրվեց իր ուղեկցից, թե նա «ինչպես է անում» և արդյո՞ք գանգարիդների երկրում ուտում են հյութեղ ռոստբիֆ: Իրեն հատուկ բարեկրթությամբ ճանապարհորդը պատասխանեց, որ Գանգեսի ափերին ընդունված չէ ուտել սեփական եղբայրներին, և շարադրեց մի ուսմունք, որ շատ հարյուրամյակներ հետո դարձավ Պյութագորասի, Պորֆիրիուսի և Յամվլիխի ուսումունք *(Պյութագորասը՝ Ք. ա. 6-5-ր դդ. հույն փիլիսոփա-իդեալիստ և մաթեմատիկ, որ թիվն ընդունում էր որպես աշխարհի հիմք: Պորֆիրիուսը (3-4-րդ դդ) և Յամվլիխը (4-ր դդ.մ.թ.) - հույն փիլիսոփա-նեոպլատոնականներ, ուշ անտիկ մտքի իդեալիստական և միստիկական ուղղությունների ներկայացուցիչներ)*: Այդ ընթացքում միլորդը քնեց և քնած մնաց այնքան ժամանակ, մինչև հասան իր տանը:

Նա ամուսնացած էր մի երիտասարդ, հմայիչ կնոջ հետ, ում բնությունն օժտել էր նույնքան տպավորվող և զգայուն հոգով, որքան ամեն ինչի նկատմամբ անտարբեր էր նրա ամուսնու հոգին: Այդ օրը Ալբիոնի մի քանի բարձրաստիճան անձինք եկել էին նրա մոտ՝ ճաշի: Հավաքվել էին ամենատարբեր բարոյականության տեր մարդիկ, քանի որ երկիրը համարյա միշտ ղեկավարում էին օտարերկրացիները, և այդ տիրակալների հետ եկած ընտանիքները իրենց հետ բերում էին նաև ամենատարբեր սովորույթներ: Հավաքվածների մեջ կային և՛ շատ բարեհամբույր մարդիկ, և՛ մեծ խելք ունեցող մարդիկ, և՛ գիտնականներ:

Տանտիրուհին ո՛չ երկչոտ էր, ո՛չ անվարժ, ո՛չ խստաբարո, ո՛չ սեթևեթ, ինչում այն ժամանակ մեղադրում էին երիտասարդ ալբիոնուհիներին: Նա բոլորովին չէր թաքցնում աշխարհայացքի նեղությունը ձիգ կեցվածքի կամ սառը զսպվածության

տակ, իսկ ամաչկոտ հուզմունքի տակ՝ մտքերն արտահայտելու անկարողությունը: Ավելի գերող կին, քան նա էր, չկար: Նա իրեն հատուկ բարեհամբուրությամբ և բարեկրթությամբ ընդունեց Ամազանին: Այդ օտարականի բացառիկ գեղեցկությունը և ակամա համեմատությունը, որ նա արեց նրա ու իր ամուսնու միջև, միանգամից ալեկոծեցին նրան:

Ճաշը մատուցեցին: Նա Ամազանին նստեցրեց իր կողքին և զանազան պուդինգներ էր մատուցում՝ նրանից իմանալով, որ գանգարիդները չեն ուտում նրանց, ովքեր արարիչից ապրելու սրբազան պարգևն են ստացել:

Ամազանի գեղեցկությունը, նրա առնականությունը, գանգարիդների առաքինությունը, արվեստների ծաղկունքը, կրոնն ու իշխանությունը. ահա թե ինչն էր նրանց հաճելի և բովանդակալից զրույցի թեման ճաշի ժամանակ, որը ձգվեց մինչև գիշեր, որի ընթացքում «Դե, ինչ» միլորդը շատ խմեց և ոչ մի բառ չարտասանեց:

Ճաշից հետո, մինչ տիրուհին թեյ էր լցնում՝ աչքերով ուտելով երիտասարդին, տղան զրուցում էր պառլամենտի մի անդամի հետ, քանի որ յուրաքանչյուրին էլ հայտնի է, որ այն ժամանակ գոյություն ուներ պառլամենտ՝ Վիտտենագեմոտ անունով, որ նշանակում էր «Իմաստունների ժողով»: Ամազանը հարցնում էր սահմանադրության, բարոյականության օրենքների, բանակի, սովորույթների, արվեստների և այն ամենի մասին, ինչն այդ երկիրը դարձնում էր այդքան ընդօրինակելի: Եվ զրուցակիցը նրան ահա թե ինչ պատմեց.

- Մենք երկար ժամանակ մերկ էինք ման գալիս, թեպետ կլիման դրան չի տրամադրում: Տիբրոսի ջրերով ողողվող Սատուրնի *(Հռոմ)* հինավուրց երկրից եկած մարդիկ մեզ վերաբերվում էին որպես ստրուկների: Բայց մենք ինքներս մեզ ավելի շատ վնաս էինք հասցրել, քան մեր առաջին նվաճողները: Մեր արքաներից մեկն այնքան նվաստացավ, որ իրեն հռչակեց Տիբրոսի ափերին ապրող «Յոթ բլուրների իմաստուն» կոչվող հոգևորականի հպատակ *(Անգլիայի թագավոր Հովհան Անհողն ընդունել էԱնգլիայի վասալային կախվածությունը Հռոմի պապից)*: Այդ «Յոթ բլուրներին» վիճակված էր երկար ժամանակ իշխելու Եվրոպայի մեծ մասին, որ այն ժամանակ բնակեցված էր բարբարոսներով:

Անկման ժամանակներից հետո եկան վայրենացման ու անարխիայի դարերը: Մեր հողը, որ ավելի էր ենթարկվում փոթորիկների, քան իրեն ողողող ծովը, ամայացված ու մեզ պառակտողների արյունով էր ողողված: Մի քանի պսակակիրներ մահապատժի ենթարկվեցին, ավելի քան հարյուր ազնվարյուն արքայազներ ավարտեցին իրենց կյանքը կառափնարաններում: Նրանց բոլոր համախոհների սրտերը հանում էին և դրանցով խփում նրանց երեսներին: Մեր կղզու պատմությունը պիտի դահիճը գրեր, որովհետև նա էր վերջացնում բոլոր մեծ գործերը:

Ոչ վաղուց, որպես բոլոր սարսափների ավարտ՝ սև թիկնոցով փաթաթված մի քանի մարդիկ և ուրիշները՝ սպիտակ վերնաշապիկով *(սևերը՝ ավելի չափավոր, սպիտակները՝ ավելի արմատական բողոքականներ)*՝ վրայից կատաղած շներից կրծոտված բաճկոն հագած, ամբողջ երկիրը վարակել են կատաղությամբ: Բոլոր քաղաքացիները կա՛մ մարդասպան դարձան, կամ զո՛հ, կա՛մ դահիճ, կա՛մ մահապատժված, կա՛մ շահագործող, կա՛մ ստրուկ, և այս ամենը՝ հանուն երկնքի և աստծուն որոնելու:

Ո՞վ կարող էր հավատալ, որ այս սարսափելի անդունդից, այս երկպառակության, դաժանության, անկրթության և ֆանատիզմի քաոսից ծնվելու է աշխարհում, միգուցե, ամենակատարյալ իշխանությունը: Թագավորը՝ հարգարժան ու հարուստ, ամենակարող բարի գործերում և անկարող՝ չարերում, ամենաազատ, ամենամարտունակ, առևտրային և լուսավորյալ ժողովրդի գլուխ է կանգնել: Մի կողմից ճանաչված մարդիկ, մյուս կողմից՝ քաղաքային ազնվականության ներկայացուցիչները բաժանում են միապետի հետ օրենսդրական իշխանությունը:

Մենք տեսանք, որ դեպքերի ճակատագրական ընթացքից ելնելով, երբ թագավորները ջանում էին հասնել անսահմանափակ իշխանության, խառնաշփոթը, քաղաքացիական պատերազմները, անարխիան և չքավորությունը մասնատում են երկիրը: Անդորրը, հարստությունը, ընդհանուր բարեկեցությունը մեզ մոտ սկսեցին տիրել միայն այն ժամանակ, երբ արքաները հրաժարվեցին անսահմանափակ իշխանությունից:

Ամեն ինչ գլխիվայր դարձավ, երբ վեճն սկսեց ընթանալ մութ բաների մասին, և ամեն ինչ նորից իր տեղն ընկավ, երբ դրանց վրա սկսեցին ուշադրություն չդարձնել: Մեր ամենահաղթ նավատորմները մեզ հռչակում են բոլոր ծովերում: Օրենքները պաշտպանում են մեր հարստությունը. դատավորը չի կարող ազատ մեկնաբանել օրենքը և դատավճիռ չի արձակի առանց դրա համար անհրաժեշտ հիմքերն ունենալու: Մենք մարդասպանի պես կձաղկեինք այն դատավորներին, ովքեր համարձակվեին մահվան դատապարտել քաղաքացուն, առանց նրան մերկացնող ապացույցներ և այդ հանցանքը դատապարտող օրենքը ներկայացնելու:

Ճիշտ է, մենք հիմա ունենք գրչի ու դավերի միջոցով իրար դեմ պայքարող երկու կուսակցություն *(ֆեոդալականության և բուրժուազիայի կուսակցություններն ի նկատի ունի. ի վերջո ժողովրդի համար հավասարապես թշնամական այս երկուկուսակցությունների մեջ սահմանը լրիվ ջնջվեց)*, բայց դրանք անդավաճան միավորվում են, եթե պետք է լինում զենքը ձեռքին պաշտպանել հայրենիքն ու ազատությունը: Այս երկու կուսակցություններն ուշադիր հետևում են միմյանց: Նրանք միմյանց թույլ չեն տալիս պղծել օրենքների սուրբ գանձարանը: Նրանք ատում են միմյանց, բայց սիրում են հայրենիքը: Դրանք խանդոտ սիրահարվածներ

են, ովքեր հնարավորինս լավ են ծառայում նույն տիրուհուն:

Ելնելով այդ նույն խելամիտ հիմնավորումներից, որոնք մեզ օգնեցին գիտակցել և պաշտպանել մարդկային էության իրավունքները՝ մենք բարձրացրինք գիտությունն այն մակարդակին, որին այն կարող է հասնել մարդկանց մոտ: Ձեր եգիպտացիները, որ անուն են հանել մեծ մեխանիկների միջոցով, ձեր հնդիկները, որոնց հարգում են այնքան իմաստուն փիլիսոփաների համար, ձեր բաբելոնցիները, որ պարծենում են, թե չորս հարյուր երսուն հազար տարի հետևել են երկնային լուսատուների շարժին, հույները, որ այնքան շատ բառ են մտցրել ու այնքան քիչ իմաստ, բոլորը որոշակիորեն ոչինչ չգիտեն մեր ցանկացած դպրոցականի կամ մեր մեծ գիտնականների հայտնագործությունների հետ համեմատած: Մենք մեկ հարյուրամյակում բնությունից քաղել ենք ավելի շատ գաղտնիք, քան ամբողջ մարդկությունը անհաշիվ դարերի վազքի ընթացքում:

Այսպիսին է հիմա իրերի իրական դրությունը: Ես Ձեզնից ոչինչ չթաքցրեցի՝ ո՛չ լավը, ո՛չ վատը, ո՛չ մեր անկումները, ո՛չ մեր փառքը. և ոչինչ չեմ չափազանցրել:

Այս ճառը լսելով՝ Ամազանը անհաղթահարելի ցանկություն ունեցավ ճանաչելու այն բարձր գիտությունները, որոնց մասին իրեն ասում էին: Եվ եթե նրա վիրավոր սրտին այդքան անբաժան չտիրեին Բաբելոնի արքայադստեր սերը, որդիական խոնարհումը իր կողմից լքված մոր նկատմամբ և սերը հայրենիքի նկատմամբ, նա իր ամբողջ կյանքը կապրեր Ալբիոն կղզում: Բայց ճակատագրական համբույրը, որ տվել էր իր արքայադուստրը եգիպտական փարավոնին, այնպես էր մթագնել նրա բանականությունը, որ խանգարում էր մխրճվել գիտության մեջ:

- Խոստովանեմ,- ասաց նա,- որ հաստատ որոշած լինելով աշխարհով մեկ ճամփորդել և փախչել ինքս ինձնից, ես կցանկանայի տեսնել Սատուրնի հին երկիրը և Տիբերիայի ափերին և յոթ բլուրների վրա ապրող ժողովրդին, որին դուք մի ժամանակ ենթարկվել եք: Ենթադրում եմ, որ դա ամենակատարյալ ժողովուրդն է ամբողջ երկրագնդի վրա:

- Խորհուրդ եմ տալիս ձեռնարկել այդ ուղևորությունը,- ասաց ալբիոնցին,- հատկապես եթե սիրում եք երաժշտություն և գեղանկարչություն: Մենք ինքներս էլ շատ հաճախ գնում ենք այնտեղ՝ ցրելու մեր մռայլ տրամադրությունը: Բայց դուք քիչ չեք զարմանա՝ տեսնելով մեր նվաճողների հետնորդներին:

Նրանց զրույցը երկար էր: Թեպետ գեղեցիկ Ամազանի բանականությունը մի քիչ խաթարված էր, նա, միևնույն է, այնքան հաճելի էր խոսում, նրա ձայնն այնքան հուզիչ էր, նա իրեն այնքան բարեկիրթ, մեղմ ու այնքան քնքուշ էր պահում, որ տանտիրուհին իր հերթին ցանկացավ նրա հետ առանձին զրուցել: Զրույցի ժամանակ նա քնքուշ սեղմում էր տղայի ձեռքը, նրան նայում էր խոնավ, փայլուն

աչքերով, որ մատնում էին կնոջ կիրքը: Նա հրավիրեց Ամազանին ընթրիքի և պահեց՝ ամրոցում գիշերելու: Ամեն ակնթարթը, ամեն բառը, ամեն մի հայացք բորբոքում էին նրա կիրքը: Հենց որ բոլորը հեռացան, տիրուհին Ամազանին գրություն ուղարկեց՝ չկասկածելով անգամ, որ տղան կգա իր հետ բաժանելու անկողինը այն ժամին, երբ «Դե, ինչ» միլորդը քնած կլինի իր սենյակում: Բայց Ամազանն այս անգամ էլ իր մեջ ուժ գտավ դիմադրելու: Այսպիսին է խելահեղության հատիկի հրաշագործ ազդեցությունը ուժեղ ու խորապես վիրավորված հոգու վրա:

Սովորականի պես Ամազանն ուղարկեց այդ տիկնոջը հարգալից մի պատասխան, որում բացատրեց իր երդման սրբությունը և իր ուղղակի պարտքը՝ սովորեցնել բաբելոնական արքայադստերը իշխել իր կրքերին: Հետո, կարգադրելով թամբել միաեղջյուրները՝ նա վերադարձավ Բատավիա՝ իր հետևից թողնելով հասարակությանը՝ հիացմունք և տանտիրուհուն՝ հուսալքություն: Զգացմունքների լրիվ խաթարումից տիրուհին մոռացել էր թաքցնել Ամազանի նամակը: Հաջորդ օրը «Դե, ինչ» միլորդը գտավ այն ու կարդաց.

- Ա՛յ քեզ հիմարություն,- ասաց նա՝ ուսերը թոթվելով, և մի քանի հարևան հարբեցողների հետ գնաց աղվեսի որսի:

Այդ ժամանակ Ամազանն արդեն նավարկում էր ծովով՝ իր հետ տանելով աշխարհագրական քարտեզը, որ նրան նվիրել էր իր հետ «Դե, ինչ» միլորդի տանը զրուցող ալբիոնցի գիտնականը: Նա հիացմունքով տեսավ ցամաքի հսկայական տարածքը՝ տեղավորված թղթի կտորի վրա:

Նրա հայացքն ու երևակայությունը թափառում էին այդ փոքրիկ թերթի վրա: Նա տեսնում էր Հռենոսը, Դունայը, Տիրոլական Ալպերը, որ այն ժամանակ ուրիշ անվամբ էին նշված: Տեսնում էր բոլոր երկրները, որ դեռ պետք է անցներ, մինչ կհասներ յոթ բլուրների քաղաքներին: Բայց ամենից ուշադիր նա նայում էր գանգարիդների երկրին, Բաբելոնին, ուր նա հանդիպել էր իր թանկագին արքայադստերը, և ճակատագրական Բասսոր երկրին, ուր աղջիկը համբուրեց փարավոնին: Նա հոգոց հանեց, նա արցունք թափեց, բայց խոստովանեց, որ իրեն փոքրացրած երկրագունդ նվիրած ալբիոնցին չէր սխալվում՝ պնդելով, որ Թեմզայի ափերին ապրող մարդիկ հազար անգամ ավելի կրթված են, քան Նեղոսի, Եփրատի ու Գանգեսի ափերին:

Մինչ նա վերադառնում էր Բատավիա, Ֆարմազանտայի երկու նավերն էլ սլանում էին դեպի Ալբիոն: Ամազանի նավն ու Ֆարմազանտայի նավը հանդիպեցին, համարյա բախվեցին միմյանց: Երկու սիրահարները, իրենք էլ այդ մասին չիմանալով, այնքան մոտ էին միմյանց: Ա՛խ, եթե իմանային… Բայց տիրակալ բախտը դա թույլ չտվեց:

9-րդ գլուխ

Հազիվ էր Ամազանն իջել Բատավիայի ցածր, տղմուտ ափերին, երբ նետի պես սլացավ դեպի յոթ բլուրների քաղաքը: Նա ստիպված էր անցնել Գերմանիայի հարավային մասով: Այստեղ յուրաքանչյուր չորս մղոնի վրա հանդիպում էին արքայազններ ու արքայադուստրեր, պալատական տիկնայք ու աղքատներ: Նրան զարմացրեց, որ ամենուր այդ բարձրաստիճան տիկնայք և նրանց ֆրեյլենները մաքուր գերմանական պարզասրտությամբ սեթևեթում էին իր հետ: Ինքը համեստորեն մերժում էր նրանց սիրահետումները:

Անցնելով Ալպերը՝ նա նավարկեց Դալմատական ծովով և կանգ առավ մի քաղաքի մոտ, որը նման չէր իր՝ մինչև այժմ տեսած քաղաքներից ոչ մեկին *(Վենետիկը)*: Այստեղ ծովը փողոցներ էր ձևավորում, իսկ շենքերը դուրս էին ցցված ջրից: Այդ քաղաքի հազվագյուտ հրապարակները լեփ-լեցուն էին երկդեմ կանանց ու տղամարդկանց ամբոխով: Նրանք ունեին բնությունից ստացած դեմքեր և այդ դեմքը ծածկողերկրորդ դեմքը՝ անճաշակ վառվռուն ներկված ստվարաթղթից: Այդ պատճառով թվում էր, թե բնակչությունը բաղկացած է ուրվականներից:

Այս երկիր ժամանած օտարերկրացիները նախ և առաջ իրենց համար «դեմք» էին գնում, այնպես, ինչպես ուրիշ երկրներում գլխանոցներ ու կոշիկ են գնում: Ամազանը ձեռնպահ մնաց նման հակաբնական նորաձևությունից: Նա ներկայացավ իր բնական կերպարով: Քաղաքում տասներկու հազար աղջիկ կար, որ գրանցված էր հանրապետության մեծ գրքում. հանրապետության համար օգտակար աղջիկներ: Նրանց հանձնարարված էր ամենաձեռնտու և ամենահաճելի առևտուրը, այն առևտուրների մեջ որ երբևէ հարստացրել են որևէ պետություն: Սովորական առևտրականները մեծ ծախսերով և մեծ ռիսկով իրենց կտորն ուղարկում էին արևելք: Իսկ այս չքնաղ գործարարները առանց որևէ ռիսկի աշխուժացնում էին իրենց հմայքների առևտուրը: Նրանք բոլորը կանգնեցին Ամազանի առաջ՝ նրան ընտրելու հնարավորություն ընձեռելով: Նա շտապ թաքնվեց՝ կրկնելով Բաբելոնի անզուգական առքայադստեր անունը և երդվելով անմահ աստվածների անունով, որ նա գեղեցիկ է բոլոր տասներկու հազար վենետիկուհիներից էլ՝ միասին վերցրած:

- Չքնաղ մոլորյալ,- բացականչեց նա հիացած,- ես կսովորեցնեմ ձեզ հավատարիմ լինել:

Վերջապես Տիբերի դեղին ջրերը, գարշահոտ կայմերը, նիհարած, քաղցած մարդիկ՝ ծածկված հին ու քրքրված թիկնոցներով, որի տակից երևում էր նրանց չորացած, սևացած մաշկը, կանգնեցին նրա առաջ՝ նախազգուշացնելով, որ գտնվում է յոթ բլուրների՝ քաջերի ու օրենսդիրների քաղաքի դարպասների մոտ, որը իրեն է ենթարկել ու բարեկրթել երկրագնդի մեծ մասը:

Նա կարծում էր, թե քաղաքի հաղթական դարպասների մոտ կտեսնի հինգ հարյուր բատալիոն՝ հերոսների ղեկավարությամբ, իսկ սենատում՝ կիսաստվածների հավաքում, նրանց, որ աշխարհին օրենքներ են թելադրում: Բայց բանակի փոխարեն նա մի երեսուն պորտաբույծի գտավ, որ պահակ էին կանգնած՝ հովանոցով արևից պաշտպանվելով: Մտնելով տաճար, որ նրան գեղեցիկ թվաց, բայց որ պակաս գեղեցիկ էր, քան Բաբելոնի տաճարները, նա ծայրահեղ ապշած էր՝ լսելով կանացի ձայնով երգող տղամրդկանց:

- Ահա թե ինչ զվարճալի երկիր է Սատուրնի այս հինավուրց երկիրը,- բացականչեց նա,- ես մի քաղաք տեսա, որտեղ ոչ ոք իր դեմքը չունի, հիմա տեսնում եմ մի ուրիշը, ուր տղամարդիկ չունեն ո՛չ արական ձայն, ո՛չ մորուք:

Նրան բացատրեցին, որ այս տղամարդիկ արդեն տղամարդ չեն, քանի որ նրանց զրկել են ամենայն առնականից, որպեսզի նրանք հաճելի ձայնով գովերգեն ազնվական մարդկանց հսկայական բազմությունը: Ամազանը բացարձակ ոչինչ չհասկացավ այդ բացատրություններից: Այդ պարոնները խնդրեցին նրան երգել, և նա իրեն հատուկ նրբագեղությամբ կատարեց մի գանգարիդական երգ: Նա հրաշալի տենոր էր:

- Ախ, սինյոր,- բացականչեցին նրանք,- ինչպիսի հոյակապ սոպրանոյով կերգեիք, եթե…

- Եթե ի՞նչ: Ի՞նչ եք ուզում ասել դրանով:

- Ա՛խ, սինյոր:

- Հետո՞:

- Եթե մորուք չունենայիք…

Եվ նրանք իրենց հատուկ շարժումներով շատ զվարճալի ձևով նրան բացատրեցին, թե բանն ինչ է: Ամազանը շփոթված էր:

- Ես շատ եմ ճամփորդել, բայց այդ բարբաջանքի պես ոչ մի բան ոչ մի տեղ չեմ լսել:

Երբ երգը դադարեց, յոթ բլուրների՝ մեծ շքախմբի գլուխն անցած Իմաստունը ուղղվեց դեպի տաճարի դարպասները, ձեռքով օդը բաժանեց չորս մասի, բարձրացնելով մեծ մատը, մեկնելով մյուս երկուսը, ծալելով մնացած երկուսը և արդեն գործածությունից դուրս եկած մի լեզվով ասաց. «Քաղաքին և տիեզերքին»:

Գանգարիդը չհասկացավ, թե ինչպես երկու մատը կարող էր հասնել այդքան հեռու:

Հետո նրա աչքի առաջ անցան աշխարհի տիրակալի պալատականները: Դրանք կարևոր դեմքեր էին: Ոմանք քրքում թիկնոցով, ուրիշները՝ բաց մանուշակագույն *(կարդինալներն ու եպիսկոպոսները)*, համարյա բոլորը քնքշորեն նայում էին գեղեցկադեմ Ամազանին: Նրանք խոր գլուխ էին տալիս նրան ու միմյանց ասում.

- (իտալերեն) Սուրբ Մարտին, ի՜նչ հրաշալի պատանի է: Սուրբ Պանկրատի, ի՜նչ հրաշալի պատանի է:

Ջանասերները *(վանական կազմակերպության անուն)*, որոնց զբաղմունքն այն էր, որ ցույց տային օտարերկրացիներին քաղաքի տեսարժան վայրերը, շտապեցին նրան ցույց տալ խարխուլ խրճիթները, որոնցում կիրաժարվեր գիշերել անգամ ջորեպանը, բայց որոնք հնում տիրակալ ժողովրդի մեծությանն արժանի հուշարձան էին: Նա տեսավ նաև երկուհարյուրամյա նկարներ և արձաններ, որոնք քանդակված էին քսան դար առաջ: Դրանք Ամազանին արվեստի ստեղծագործության նմուշներ թվացին:

- Այսպիսի ստեղծագործություններ հիմա է՞լ եք անում:

- Ո՛չ, Ձերդ պայծառափայլություն,-պատասխանեց ջանասերներից մեկը,- բայց մենք արհամարհում ենք ամբողջ աշխարհը, որովհետև մեզ մոտ են պահպանվել այս հազվագյուտ գործերը: Մենք հնահավաքի պես փոխ ենք առնում մեր փառքը հին հագուստից, որ մնացել է մեր պահեստներում:

Ամազանը ցակություն հայտնեց տեսնելու աշխարհի տիրակալի պալատը: Նրան ուղեկցեցին այնտեղ: Նա բաց մանուշակագույն հագուստով մարդկանց տեսավ, որ հաշվում էին պետության շահույթը: Այսքանը՝ Դունայի ափին ընկած պետությունից, ասքանը՝ Լուարայի ափից, Գվադալկվիվիրեի կամ Վիսլայի ափերից:

- Օհո՛,- բացականչեց Ամազանը՝ նայելով իր քարտեզին: - Ես տեսնում եմ, որ ձեր տիրակալը իշխում է ամբողջ Եվրոպային, ինչպես յոթ բլուրների քաղաքի հինավուրց հերոսները:

- Նա աստվածային կամքով պետք է իշխի ողջ տիեզերքին,- պատասխանեց նրան բաց մանուշակագույն զգեստով մարդը:- Եվ կար ժամանակ, երբ նրա նախնիները համարյա ավարտել էին համաշխարհային միապետության ստեղծումը: Բայց նրանց հետնորդները, իրենց բարությամբ, հիմա բավարարվում են միայն փողով, որ թագավորները՝ նրանց հպատակները, մուծում են նրանց՝ որպես տուրք:

- Ուրեմն ձեր տիրակալն իրո՞ք արքայից արքա է: Ա՞յդ է նրա տիտղոսը,- հարցրեց Ամազանը:

- Ո՛չ, Ձերդ պայծառափայլություն, նրա տիտղոսը «Ծառայից ծառա» է: Սկզբում նա ձկնորս էր ու դռնապան (*հեղինակությունը բարձրացնելու համար Հռոմի կաթոլիկ եկեղեցին լեգենդ է հորինել, իբր իր առաջին եպիսկոպոսը եղել է Պետրոս Առաքյալը, որիեփո քրիստոնեական եկեղեցու գլխավորությունը փոխանցել է Հռոմի Պապին: Պետրոսը կյանքի ընթացքում ձկնորս է եղել, իսկ մահից հետո՝ դրախտի դռների մոտ՝ պահապան*), ահա թե ինչու են նրա խորհրդանիշները բանալին ու ուռկանը: Բայց նա միշտ իշխում է արքաներին: Վերջերս նա հարյուր մեկ կարգադրություն է հղել կելտական արքային, և նա ենթարկվել է (*խոսքը պապական 101 Unigenitus բուլլայի կարգադրության մասին է, որ ուղղված էր յանսենիզմի դեմ 1713 թվին: Լյուդովիկոս 14-րդարքան հրամայեց ընդունել այդ բուլլան)*:

- Հավանաբար ձեր ձկնորսն ուղարկել է մի 5-6 հարյուր հազար մարդ, որ ստիպեն կատարել այդ 101 կարգադրությունը:

- Օ, ոչ, Ձերդ պայծառափայլություն, մեր սուրբ տիրակալը միջոցներ չունի վճարելու նույնիսկ 10 հազար զինվորի: Բայց նրան են ենթարկվում չորս հարյուրից հինգ հարյուր հազար երկնային մարգարեներ՝ ցրված ուրիշ երկրներով: Այդ մարգարեները տարբեր հայեցակետեր ունեն և, ինքնըստինքյան հասկանալի է, ապրում են ժողովրդի հաշվին: Նրանք աստծո անունով հայտարարում են, որ իմ տիրակալը կարող է իր բանալիներով բացել ու փակել բոլոր նիգերը և հատկապես փողի սնդուկների կողպեքները: Մի նորմանդական հոգևորական, որ ծառայում էր վերոհիշյալ արքայի մոտ՝ որպես քահանա, համոզել էր նրան, որ պետք է անվերապահորեն ենթարկվի իմ տիրակալի 101 կարգադրությանը, քանի որ, թող Ձեզ հայտնի լինի, յոթ բլուրների Իմաստունի առավելություններից մեկը կայանում է նրանում, որ նա միշտ ճիշտ է. և՛ այն ժամանակ, երբ բարեհաճում է ինչ-որ բան ասել, և՛ այն ժամանակ, երբ բարեհաճում էր ինչ-որ բան գրել:

- Աստված վկա՝ դա արտասովոր մարդ է,- ասաց Ամազանը:- Ինձ համար շատ հետաքրքիր կլիներ նրա հետ ճաշելը:

- Ձերդ պայծառափայլություն, նույնիսկ եթե դուք արքա լինեիք, միևնույն է, չէիք կարող նրա հետ մի սեղանի շուրջ նստել: Ամենաշատը, որ նա կարող է անել Ձեզ համար, հրաման տալն է, որ իր սեղանի կողքին Ձեզ համար ավելի փոքր և ավելի ցածր սեղան բացեն: Բայց եթե դուք կամենում եք նրա հետ խոսելու պատվին արժանանալ, ես կմիջնորդեմ, որ Ձեզ ընդունի, իհարկե, լավ նվերի դիմաց, որը դուք կբարեհաճեք մատուցել ինձ:

- Սիրով,- պատասխանեց Ամազանը:

Բաց մանուշակագույն հագած մարդը խոնարհվեց:

- Ես վաղը Ձեզ կտանեմ,- ասաց նա,- դուք պետք է երեք անգամ ծալեք ծնկները և համբուրեք յոթ բլուրների Մեծավորի ոտքերը:

Այս բառերը լսելիս Ամազանը համակվեց խլացուցիչ քրքիջով: Նա դուրս եկավ կողը բռնած, այնքան էր ծիծաղը նրան թուլացրել, մինչև հասավ հյուրանոց, ուր դեռ երկար շարունակում էր ծիծաղել:

Ճաշի ժամին նրան ներկայացան քսան անմորուս տղամարդ և քսան ջութակահար, որ նրա համար համերգ էին տալիս, օրվա մնացած մասը նրան խնամում էին քաղաքի ամենաճանաչված բարձրաստիճան մարդիկ: Նրանք ավելի տարօրինակ առաջարկ արին, քան յոթ բլուրների քաղաքի Մեծավորի ոտքերը համբուրելն է: Քանի որ Ամազանը շատ բարեկիրթ էր, նախ ենթադրեց, որ այդ պարոնայք իրեն կնոջ տեղ են դրել, ու ամենանրբամիտ միջոցներով նրանց բացատրեց, որ մոլորվում են: Բայց, նեղվելով երկու-երեք ավելի համառ ու ձեռներեց բաց մանուշակագույն զգեստավորներից, նա, ի վերջո, դուրս շպրտեց նրանց պատուհանից, համոզված, որ դրանով ոչինչ չի զոհաբերի չքնաղ ֆարմազանտային:

Նա հնարավորինս շուտ լքեց այդ աշխարհի տիրակալ քաղաքը, ուր առաջարկում են համբուրել Մեծավորի ոտքերը, կարծես ոտքերին է նրա երեսը, և որտեղ պատանիներին ձանձրացնում են ավելի տարօրինակ առաջարկով:

10-րդ գլուխ

Գավառից գավառ տեղափոխվելով, անընդհատ մերժելով ամեն տեսակ սեթևեթություններ, աներեր հավատարիմ Բաբելոնի արքայադստերը, աներեր չարացած եգիպտական փարավոնի դեմ՝ Ամազանը՝ հավատարմության այդ օրինակը, վերջապես ժամանեց գալլերի նոր մայրաքաղաքը: Քաղաքը, ինչպես շատ այլ քաղաքներ, անցել էր բարբարոսության, անգրագիտության, հիմարության ու աստվածանարգության բոլոր աստիճաններով: Նրա առաջին անվանումը նշանակում էր «կեղտ ու թրիք»*(Փարիզի հին անվանումը՝ Լյուտեցիա, որ սրացել էին հռոմեացիներից, նշանակում է ցեխ)*: Հետո կնքեցին Իզիդի անունով, որի պաշտամունքը հասել էր մինչև այնտեղ:

Այդ քաղաքի առաջին սենատը կայացավ նավագործների ժողովից: Քաղաքը երկար ժամանակ յոթ բլուրների քաղաքի հերոս-գիշատիչների գերության տակ էր, իսկ մի քանի հարյուրամյակ անց Ռեյնի դիմացի ափից ժամանած ուրիշ հերոս-ավազակներ տիրացան նրա ոչ մեծ տարածքներին *(Ֆրանկների գերմանական տոհմը, որ գրավել էր Գալլիան 5-րդ դարում)*:

Ամեն ինչ փոխող ժամանակը այդ քաղաքը բաժանեց երկու կեսի: Մեկը՝ շատ տպավորիչ ու գրավիչ, մյուսը՝ մի քիչ ծանր ու անվարժ: Ամեն մեկը իրենից ներկայացնում էր որպես իր բնակչության մի տեսակ նախատիպը: Քաղաքում ապրում էր առնվազն հարյուր հազար մարդ, որոնք ուրիշ զբաղմունք չունեին, քան կատակելն ու զվարճանալն է: Եվ հենց այդ պարապ մարդիկ որոշում էին արվեստի բախտը, որով զբաղվում էին ուրիշները: Նրանք ոչինչ չգիտեին այն մասին, թե ինչ է կատարվում պալատում. թեպետ պալատն ընդամենը նրանցից չորս մղոնի վրա էր, թվում էր՝ վաթսուն մղոնի վրա է: Հաճելի ընկերախումբը, զվարճանքները, թեթևամտությունն էին միայն, որ նրանց գրավում էին: Նրանց ղեկավարում էին ինչպես երեխաների, որոնց խաղալիք են նվիրում, մենակ թե նրանք կամակորություն չանեն: Երբ նրանց պատմում էին իրենց երկիրը երկու դար առաջ ամայացրած թշվառության մասին, այն սարսափելի ժամանակների մասին, երբ բնակչության մի կեսը մորթում էր մյուսին դատարկ բաների համար, նրանք համաձայնում էին, որ դա, իրոք, վատ է, բայց անմիջապես շարունակում էին ծիծաղել ու քառյակներ երգել:

Որքան ավելի բարեհամբույր, ավելի պատրաստակամ, ավելի բարեկիրթ էին այդ պարապ մարդիկ, այնքան հստակ էր երևում նրանց ու զբաղված մարդկանց տարբերությունը:

Այդ զբաղվածների կամ իբր զբաղվածների մեջ կար մռայլ ֆանատիկոսների մի ամբոխ՝ մասամբ կռվարար, մասամբ՝ խաբեբա, որոնց միայն տեսքը թախիծ էր առաջացնում ամբողջ աշխարհի վրա, և որոնք, եթե իրենց մնար, առանց մտածելու կավիրեին աշխարհը միայն ինչ-որ ազդեցություն ունենալու համար: Բայց երգելով ու պարելով՝ պարապ ժողովուրդը ստիպում էր աշխատավոր մարդկանց թաքնվել քարանձավներում, ինչպես թռչուններն են ստիպում գորշ բուերին թաքնվել ավերակներում:

Մյուս զբաղված մարդիկ՝ թվով ավելի քիչ, հին բարբարոսական սովորությունների պահապանն էին, որոնց դեմ մարդկային էությունը բարձրաձայն աղաղակում էր: նրանք ղեկավարվում էին միայն իրենց փոշեկոլոլ տարեգրություններով: Եթե նրանք այնտեղ գտնում էին որևէ գարշելի կամ անիմաստ սովորություն, վերաբերվում էին դրան որպես սուրբ օրենքի: Ոչ ինքնուրույն մտածելու և հայեցողությունը հին տրամաբանությունից զուրկ ժամանակների վրա սպառելու հիմար սովորության հետևանքով այդ զվարճությունների քաղաքում դեռ պահպանվել էին դաժան բարոյական օրենքներ: Հենց այդ պատճառով այնտեղ համապատասխանություն չկար հանցագործության ու պատժի մեջ: Պատահում էր, որ նույնիսկ անմեղ մարդուց լլկանքների միջոցով խոստովանություն էին կորզում մի հանցանքի համար, որը նա չէր կատարել: Ինչ-որ պատանու թեթև զանցանքը պատժում էին նույնպիսի խստությամբ, ինչպես թունավորումն ու հայրասպանությունը: Պարապ մարդիկ

սկսում էին բարձրաձայն ողբալ, իսկ հաջորդ օրը բոլորն ամեն ինչ մոռանում էին ու շատախոսում միայն բարձր նորաձևությունից:

Այս ժողովուրդը վկա է եղել, թե ինչպես ամբողջ հարյուրամյակի ընթացքում գեղեցիկ արվեստները բարձրացան մինչև կատարելության այնպիսի գագաթի, որ դրա մասին երազելն անգամ անկարելի էր: Այն ժամանակ օտարերկրացիները ժամանում էին այս քաղաքը, ինչպես Բաբելոն՝ հիանալու ճարտարապետական հոյակապ հուշարձաններով, կախարդական այգիներով, գեղանկարչության ու քանդակի հրաշալի ձեռքբերումներով: Նրանց հմայում էր հոգին թափանցող և ականջը չհոգնեցնող երաժշտությունը:

Ճշմարիտ պոեզիան, այսինքն՝ բնականն ու ներդաշնակը, որը սրտին նույնքան է ասում, որքան մտքին, ժողովրդին դարձել էր մատչելի միայն այդ երջանիկ դարում: Պերճախոսության նոր օրինակները ներկայանում էին իրենց ամբողջ շքեղությամբ: Այն ժամանակ թատրոնները հռչակվում էին այնքան կատարյալ պիեսների բեմադրմամբ, որ ի վերջո ոչ մի ժողովրդի այլևս չի հաջողվել նույնիսկ ոտենալ նրանց մակարդակին: Վերջապես նրբագեղության զգացումը հատուկ դարձավ բոլոր մասնագիտություններին, այնպես որ, նույնիսկ դրուիդների մեջ հայտնվեցին լավ գրողներ:

Որքան դափնիներ, որի կույտը հասնում էր մինչև երկինք, շուտով չորացան այս հյուծված հողին: Մնացին շատ քչերը՝ վտիտ ու թոռոմած:

Անկումն առաջ եկավ այն թեթևությունից, որը խանգարում էր հանգամանալից աշխատելուն, ինչպես նաև գեղեցիկից հագեցածությունից ու այլասերվածությանը հակվածությունից: Փառասիրությունը պաշտպանում էր արվեստը հետ՝ բարբարոսական ժամանակներին վերադարձրած նկարիչներին, և այդ նույն փառասիրությունը հալածելով ճշմարիտ տաղանդներին, ստիպում էր նրանց լքել հայրենիքը: Բոռերը քշում էին մեղուներին:

Համարյա վերացան իսկական արվեստները, համարյա վերացավ հանճարը: Վաստակ էր համարվում անցած դարի ավանդը ծուռ ու շեղ մեկնաբանելը: Գինետան պատերը սվաղողը գիտունի տեսքով քննադատում էր մեծ վարպետների կտավները: Թուղթ մրոտողները աղավաղում էին մեծ գրողների ստեղծագործությունները: Անկրթությունն ու վատ ճաշակը որպես ծառա ունեին ուրիշ մրոտողների: Տարբեր վերնագրերով հարյուր հատորով կրկնվում էր նույն բանը: Ամեն ինչ կամ բառարան էր, կամ բրոշյուր: Մի լրագրող-դրուիդ շաբաթը երկու անգամ մշուշոտ գրում էր ժողովրդին անհայտ ինչ-որ բոցաշունչ ֆանատների մասին ու ինչ-որ երկնային հրաշքների, որ ձեղնահարկում կատարել են ինչ-ինչ աննշան քնձռոտներ ու տնանկներ: Ուրիշ դրուիդներ՝ սև շորերով, սովից ու չարությունից մեռնելով, հարյուրավոր հոդվածներով գանգատվում էին, որ իրենց

այլևս թույլ չեն տալիս խաբել մարդկանց, և որ այդ իրավունքը տրվում է մոխրագույն հագած թշվառներին: Մի քանի արխիդրուիդ հորնում էին ձանձրալի ոտանավորներ:

Ամազանն այս ամենը չգիտեր, բայց եթե նույնիսկ իմանար, միևնույն է դրանով չէր հետաքրքրվի, որովհետև ամբողջովին համակված էր բաբելոնական արքայադստեր, եգիպտական փարավոնի մասին մտքերով ու իր անխախտ երդման մասին արհամարհելու կանանց հմայքները՝ ուր էլ որ իր ոտքերը տանեին իրեն:

Մարդկային ցեղին հատուկ հետաքրքրասիրության բարձրագույն աստիճանին տիրապետող թեթևամիտ ու անկիրթ հորանջողները երկար հավաքվում էին միաեղջյուրների շուրջը: Կանայք, որպես ավելի տրամաբանողներ, նրա հյուրանոցի դռներն էին ծեծում, որ տեսնեն նրան:

Սկզբում նա հյուրանոցի տիրոջը ցանկություն հայտնեց գնալու պալատ, բայց բարձրաշխարհիկ հասարակության երիտասարդները, որ պատահաբար խցկվել էին ամբոխի մեջ, բացատրեցին նրան, որ դա հիմա մոդա չէ, որ ժամանակները փոխվել են, և ժամանակը ուրախ անցկացնել հնարավոր է միայն քաղաքում:

Եվ հենց նույն երեկոյան Ամազանը հրավիրվեց ընթրիքի մի տիկնոջ մոտ, որի խելքի ու տաղանդի հռչակը տարածվել էր իր հայրենիքի սահմաններից դուրս, և ով եղել էր այն երկրներից մի քանիսում, որոնցում եղել էր Ամազանը: Այդ տիկինն ու նրա հավաքած հասարակությունը դուր եկան Ամազանին: Անբռնազբոսիկությունն այստեղ պատշաճ էր, ուրախությունն անաղմուկ, գիտակությունը՝ ոչ վանող, իսկ սրամտությունը՝ ոչ չար: Նա համոզվեց, որ «լավ հասարակություն» ասվածը դատարկ բան չէ, թեպետ այդ բնորոշումը հաճախ չարաշահում են: Հաջորդ օրը նա ճաշեց ոչ պակաս հաճելի, բայց պակաս հարգարժան ընկերախմբում: Որքան ավելի էին նրան դուր գալիս իր սեղանակիցները, այնքան ավելի էր Ամազանը դուր գալիս նրանց: Նա զգում էր, թե իր սիրտն ինչպես է փափկում ու հալչում, ինչպես հալչում են իր երկրի անուշահոտությունները՝ մեղմ կրակի վրա՝ տարածելով քաղցր բուրմունք:

Ճաշից հետո նրան տարան մի հիանալի ներկայացման, որ դրուիդները դատափետել էին, որովհետև դա իրենցից հանդիսատես էր խլում: Իսկ նրանք շատ էին ուզում պահպանել իրենց հանդիսատեսներին: Այդ ներկայացումը հոգեկան ապրումները ներկայացնող հաճելի բանաստեղծության, ինչեղ երգի ու պարերի և դյութիչ, բնականության լրիվ տպավորություն ստեղծող դեկորացիայի համակցում էր: Ներկայացման այս տեսակը, որ իր մեջ ներառում է արվեստի այդքան շատ տեսակներ, անվանվում էր օտար «օպերա» բառով, որ ինչ-որ ժամանակ յոթ բլուրների լեզվով նշանակում էր ջանք, հոգատարություն, զբաղմունք, հորինվածք, ձեռնարկություն, աշխատանք, գործ:

Այդ գործը կախարդեց նրան: Հատկապես ուժեղ ազդեցություն ունեցավ նրա վրա մի աղջիկ՝ իր մելոդիկ ձայնով ու նրբագեղ շարժումներով: Այդ, այսպես ասած, դերակատարը նրան հանդեսից հետո ներկայացվեց նոր ընկերների կողմից: Տղան մի բուռ ալմաստ մատուցեց նրան: Աղջիկն այնքան երախտապարտ էր, որ օրվա մնացած մասը չլքեց նրան: Ամազանն ընթրեց աղջկա հետ և ընթրիքի ժամանակ մոռացավ զսպվածության մասին: Իսկ ընթրիքից հետո մոռացավ իր երդումը՝ անխախտ անզգա լինել գեղեցիկի և անտարբեր՝ քնքուշ սեթևեթանքների նկատմամբ: Այ՛ քեզ մարդկային թուլության լավ օրինակ:

Այդ ժամանակ ժամանեց Բաբելոնի չքնաղ արքայադուստրը Փյունիկի, իր աղախին Իրլայի և իր՝ միաեղջյուրներ հեծած երկու հարյուր գանգարիդ զինվորների հետ: Նրանք ստիպված էին բավականին երկար սպասել, մինչ կբացեին դարպասները: Նախ և առաջ արքայադուստրը տեղեկացավ, թե քաղաքո ւմ է արդյոք ամենագեղեցիկ, ամենախիզախ, ամենախելացի և ամենահավատարիմ տղամարդը: Քաղաքային իշխանությունն անմիջապես գլխի ընկավ, որ նա ի նկատի ունի Ամազանին: Աղջիկը հրամայեց իրեն ուղեկցել դեպի նրա հյուրանոցը: Նա սիրուց բաբախող սրտով ներս մտավ. ամբողջ հոգին համակված էր անարտահայտելի երջանկությամբ: Ոչինչ չէր խանգարում նրան մտնելու Ամազանի ննջարանը: Վարագույրները իջեցված էին: Նա տեսավ գեղեցիկ Ամազանին՝ քնած թխահեր մի գեղեցկուհու հետ գիրկընդխառը: Նրանք երկուսն էլ խիստ կարիք ունեին հանգստի:

Ֆարմազանտան այնպիսի մի ողբալի աղաղակ բարձրացրեց, որ տարածվեց ամբողջ շենքով մեկ, բայց չարթնացրեց ո՛չ իր զարմիկին, ո՛չ «դերակատարուհուն»: Արքայադուստրն ուշակորույս ընկավ Իրլայի ձեռքերին: Հենց որ ուշքի եկավ, հոգում ցավի ու զայրույթի զգացումով անմիջապես լքեց այդ ճակատագրական սենյակը: Իրլան հետաքրքրվեց, թե ով էր գեղեցիկ Ամազանի հետ այդքան քաղցր ժամեր անցկացրած այդ երիտասարդ անձնավորությունը: Նրան ասացին, որ նա դերասանուհի է, շատ սիրալիր անձնավորություն, ով իր այլ տաղանդների շարքում տիրապետում է նաև բավականին հաճելի երգելու տաղանդին:

- Ո՛վ երկինք, ո՛վ մեծն Արամազդ,- արցունքով ողողված բացականչեց Բաբելոնի արքայադուստրը,- ո՛վ ինձ դավաճանեց և հանուն ո՛ւմ: Ուրեմն նա, ով հանուն ինձ մերժում էր արքայադուստրերի, հիմա լքում է ինձ՝ հանուն ինչ-որ գալլական կոմեդիանտի՞: Ո՛չ այս ստորացմանը ես չեմ դիմանա:

- Ձերդ մեծություն,- ասաց Իրլան,- այդպիսին են երիտասարդներն ամբողջ աշխարհում: Եթե նույնիսկ սիրահարված լինեն գեղեցկության աստվածուհուն, լինում են պահեր, երբ ընդունակ են դավաճանելու նրան ցանկացած պանդոկային սպասուհու հետ:

- Ամեն ինչ վերջացած է,- բացականչեց արքայադուստրը,- ես այլևս երբեք չեմ տեսնի նրան: Հեռանանք այստեղից: Թող թամբեն իմ միաեղջյուրները:

Փյունիկը խնդրեց նրան հետաձգել մեկնումը և սպասել գոնե այնքան, մինչև արթնանա Ամազանը, որ ինքը կարողանա խոսել նրա հետ:

- Նա դրան արժանի չէ: Դուք ինձ անասելի վիրավորում եք: Նա կմտածի, թե ես եմ Ձեզ խնդրել իրեն նախատել և որ ես իր հետ հաշտեցում եմ փնտրում: Եթե դուք ինձ սիրում եք, մի ավելացրեք ադ վիրավորանքը այն վիրավորանքին, որ ինձ հասցրեց Ամազանը:

Փյունիկը, որ պարտական էր արքայադստերը կյանքով, չէր կարող չհնազանդվել:

Նա մեկնեց իր ամբողջ շքախմբով:

- Հիմա ո՞ւր ենք գնալու, Ձերդ մեծություն,- հարցրեց Իրման:

- Չգիտեմ,-պատասխանեց արքայադուստրը: Կգնանք՝ ուր աչքներս կտրի, միայն թե կարողանամ մեկընդմիշտ թաքնվել Ամազանից և արդեն բավարարված կլինեմ:

Փյունիկը, որ ավելի խելամիտ էր, քան Ֆարմազանտան, քանի որ համակված չէր կրքով, ճանապարհին նրան մխիթարում էր: Թռչունը քնքշորեն ապացուցում էր նրան, որ ցավալի է ինքնիրեն ձաղկելը ուրիշի սխալների համար: Որ Ամազանը հանուն նրա ցուցաբերել է հավատարմության ապշեցուցիչ ու բազմաթիվ օրինակներ, և արքայադուստրը կարող է ներել նրան րոպեական գայթակղության համար: Որ նա սրբակյաց է, ինչի համար քիչ էր մնում հասներ Արամազդին, և որ այսուհետ նա ավելի հավատարիմ կլինի սիրո ու բարեգործության մեջ, որ մեղքը քավելու ձգտումը կստիպի նրան գերազանցել ինքն իրեն, և այդ ամենից աղջիկը միայն ավելի երջանիկ կլինի, որ շատ հռչակավոր արքայադուստրեր նրանից առաջ ներել են նման մեղքերը, բայց իրենց գերազանց են զգացել: Նա նոր օրինակներ էր բերում և այնքան ուժեղ էր տիրապետում համեզելու արվեստին, որ Ֆարմազանտայի սիրտը աստիճանաբար փափկում ու հանգստանում էր:

Նա հիմա զղջում էր, որ այդքան շտապ հեռացել է: Համարում էր, որ իր միաեղջյուրները չափազանց արագ են սլանում, բայց չէր համարձակվում վերադառնալ: Ներելու և զայրույթն արտահայտելու ցանկությունների, սիրո ու հպարտության մեջ տատանվելով՝ նա չէր կանգնեցնում միաեղջյուրներին և շարունակում էր իր թափառումը, ինչպես կանխատեսել էր գուշակը:

Ամազանը արթնանալով իմանում է Ֆարմազանտայի և Փյունիկի ժամանման ու հեռանալու մասին: Նա իմանում է արքայադստեր հուսալքության ու զայրույթի մասին: Նրան ասացին, որ աղջիկը երդվել է երբեք չներել նրան:

-Ինձ միայն մի բան է մնում,- բացականչեց նա,- հետևել նրան ու զրկել ինձ կյանքից նրա ոտքերի տակ:

Նրա ազնվական ընկերները, լսելով պատահածի մասին, եկան ու սկսեցին նրան ապացուցել, որ ավելի խելամիտ է մնալ իրենց հետ և ոչինչ չի կարող համեմատվել այն հաճելի կյանքի հետ, որ վարում են իրենք արվեստների, հանգիստ, քաղցր առատության մեջ, որ շատ օտարականներ ու նույնիսկ արքաներ գերադասել են այնքան հաճելի, տեղը տեղին ու հմայող այս անդորրը իրենց երկրից ու գահից, որ դրանից բացի, Ամազանի կառքը ջարդված է, և կառապանը ուրիշն է պատրաստում՝ վերջին նորաձևությանը համապատասխան, որ քաղաքի լավագույն դերձակներն արդեն մի դյուժին կոստյում են ձևել նրա համար, որ քաղաքի ամենախելացի և ամենաբարեհաճ կանայք, ում տանը ներկայացվում են այնքան անուշ կոմեդիաներ, յուրաքանչյուրը նրա պատվին կազմակերպվող ընդունելության իր օրն է նշանակել: Իսկ այդ ընթացքում դերասանուհին զարդասեղանի առաջ նստած շոկոլադ էր խմում, ծիծաղում էր, երգում և սեթևեթում էր գեղեցիկ Ամազանի հետ, ով վերջիվերջո հասկացավ, որ այդ աղջիկը սագի ճտից էլ հիմար է: Քանի որ անկեղծությունը սրտակցությունը, ուղղամտությունը նույնքան հատուկ էին այդ մեծ արքայազնի բնավորությանն ինչպես մծահոգությունն ու առնականությունը, նա ընկերներին պատմեց իր դժբախտությունների ու ճանապարհորդությունների մասին: Ընկերներն իմացան, որ նա արքայադստեր հեռու զարմիկն է, տղան տեղեկացրեց նաև կործանիչ համբույրի մասին, որ աղջիկը նվիրել էր եգիպտական փարավոնին:

-Այդ տեսակ չարաճճիություններ,- ասացին նրանք,- հարազատներն իրար ներում են, թե չէ կյանքը կընթանար մշտական վեճերի մեջ:

Ոչինչ չէր կարող խանգարել նրան իրականացնելու իր՝ Ֆարմազանտային հետևելու որոշումը: Բայց քանի որ կառքը դեռ պատրաստ չէր, նա ստիպված էր երեք օր անցկացնել իր ընկերների շրջապատում, տոնախմբությունների ու ուրախությունների մեջ: Վերջապես նա հրաժեշտ տվեց բոլորին, գրկեց նրանց և ստիպեց ընծա ընդունել իր երկրի՝ գերագույն ճաշակով շրջանակված ալմաստներ՝ խորհուրդ տալով ընկերներին միշտ մնալ թեթևամիտ և անհոգ, քանի որ դա նրանց դարձնում էր ավելի հաճելի և ավելի երջանիկ:

-Գերմանիայի ժողովուրդը,- ասում էր նա,- Եվրոպայի իմաստուններն են: Ալբիոնի ժողովուրդը՝ միանգամայն կազմակերպված մարդիկ են, իսկ Գալլիայի բնակիչները երեխաներ են, և ես սիրում եմ նրանց հետ խաղալ:

11-րդ գլուխ

Նրա ուղեկցողների համար շատ հեշտ էր արքայադստերը հետևելը. ամենուր միայն նրա մասին էին խոսում ու նրա հսկայական թռչունի: Բոլոր բնակիչները նաև համակված էին բարձր էնտուզիազմով: Դալմացիայի ժողովուրդները և Անկոնայի տարածաշրջանները դրա հետևանքով ավելի պակաս հաճելի ապշանք ապրեցին,

երբ օդում թռչող տուն տեսան *(նկատի ունի օդապարիկը)*: Լուարայի, Դորդոնայի, Գարոննայի և Ժիրոնդայի ափերին դեռ չեն լռել հրճվալից բացականչությունները:

Երբ Ամազանը հասավ Պիրենեյների ստորոտին, երկրի աստիճանավորներն ու դրուիդները ստիպեցին նրան հիանալու տամբուրաներով պարով: Հենց թեքվեց Պիրենեյներից, անհետացան և ուրախություններն ու զվարճանքները: Եթե նույնիսկ նրան հասնում էին երգի ձայներ, ապա դրանք տխուր հնչյուններ էին: Բնակիչները քայլում էին ծանրաբարո, գոտկատեղերին տերողորմյաներ և դաշույններ էին կրում: Ժողովուրդը սև էր հագած, ինչպես սգավորները: Եթե Ամազանի ծառաները ինչ-որ բան էին հարցնում անցորդներին, նրանք նշաններով էին պատասխանում: Եթե հյուրանոց էին մտնում, տերը նրանց մի-երկու բառով բացատրում էր, որ տունը դատարկ է, բայց կարելի է մարդ ուղարկել մի քանի մղոն հեռու գտնվող այն իրերի հետևից, որոնց կարիքը անվերապահորեն կա:

Երբ այդ լռակյացներին հարցնում էին, թե չեն տեսել արդյոք Բաբելոնի չքնաղ արքայադստերը, նրանք պատասխանում էին պակաս լակոնիկ.

- Այո՛, նրան տեսել ենք, նա բոլորովին էլ այդ աստիճանի գեղեցիկ չէ: Միայն թխադեմներն են գեղեցիկ: Նա բոլորին ցույց է տալիս ծեփի պես սպիտակ կուրծքը: Իսկ դա ամենավատ բանն է աշխարհում, և մեր կողմերում համարյա չի հանդիպում:

Ամազանը մոտենում էր Բետիսով *(Գվադալկվիվիրի հին անունը)* ոռոգվող ավանին: Տասներկու հազար տարուց ավելի չէր անցել այն ժամանակներից, ինչ այս երկիրը հայտնաբերվել է Տիրի բնակիչների կողմից, մի քանի դար հետո սուզված հսկայական Ատլանտիդա կղզու հատնաբերման հետ գրեթե միաժամանակ: Տիրի բնակիչները մշակում էին Բետիկայի *(Անդալուզիայի հին անունը)* հողերը, որ այդ երկրացիները թողել էին անմշակ՝ հաստատելով, որ իրենք ոչ մի բանի չպիտի խառնվեն, և որ գալլերի՝ նրանց հարևանների գործն է իրենց հողը մշակելը:

Տիրի բնակիչներն իրենց հետ պաղեստինցիներ էին բերել, ովքեր այն ժամանակից ի վեր սփռվեցին բոլոր այն երկրներով, որտեղ հնարավոր էր փող աշխատել: Այս պաղեստինցիները, փողը հիսունից հարյուր տոկոսով պարտք տալով, երկրի գրեթե ամբողջ հարստությունը կենտրոնացրել էին իրենց ձեռքում: Սա Բետիկայի բնակիչներին ստիպել էր մտածել, թե պաղեստինցիները կախարդ են, և բոլոր նրանք, ում մեղադրել էին կախարդության մեջ, անխնա այրվել են դրուիդների ամբոխի կողմից, որ կոչվում էին «խուզարկու շներ» կամ «անտրոպոկայներ» (*Վոլտերն այսպես է անվանում ինկվիզիտորներին)*: Այս հոգևորականներն ամենից առաջ դատապարտյալներին հագցնում էին դիմակահանդեսային տարազ, յուրացնում էին նրանց ունեցվածքը, հետո բարեպաշտորեն իրենց՝ պաղեստինցիների աղոթքներն էին կարդում՝ նրանց այրելով մեղմ կրակի վրա՝ «Հանուն Աստծո սիրո»:

Ֆարմազանտան եկավ մի քաղաք, որը հետագայում կոչեցին Սևիլիա: Նա մտածում էր նավարկել Բետիսով, հետո Տիր գետով վերադառնալ Բաբելոն, նորից տեսնել հորը և, եթե ուժ ունենար, մոռանալ իր դավադիր սիրեկանին կամ դառնալ նրա կինը: Նա հրամայեց իր մոտ ուղարկել երկու պաղեստինցու, որ պալատական բոլոր գործերով էլ զբաղվում էին: Նրանք պետք է երեք նավ պատրաստեին իր համար: Փյունիկը նրանց հետ պայմանավորվեց բոլոր մանրամասների մասին և, մի քիչ սակարկելով, համաձայնության եկավ գնի շուրջ:

Հյուրանոցի տիրուհին շատ բարեպաշտ էր, և նրա ամուսինը պակաս բարեպաշտ չէր: Դրուիդների մոտ նա «մեր մարդն» էր, այլ կերպ ասած՝ դրուիդ-շուն-անտրոպոկայների խուզարկուն: Նա չհապաղեց մատնել, թե իր տանը հսկայական ոսկեզօծ թռչունի վերափոխված սատանայի հետ պայման կապած մի վհուկ կա և երկու պաղեստինցի: Խուզարկու շներն իմանալով, որ տիկնոջ մոտ հսկայական քանակությամբ ալմաստ կա, նրան վհուկ հռչակեցին: Միանգամայն վախկոտ լինելով՝ նրանք սպասեցին մինչև գիշեր, որ ընդարձակ ձիանոցում գիշերող երկու հարյուր զինվորների և միաեղջյուրների վրա դուռը կողպեին:

Հիմնովին պատնեշելով բոլոր ելքերը՝ նրանք բռնեցին արքայադստերն ու Իրլային, բայց չկարողացան բռնել նետի արագությամբ դուրս թռած Փյունիկին: Նա համոզված էր, որ Գալլիայից Սևիլիա ճանապարհին կհանդիպի Ամազանին:
Նա իրոք հանդիպեց տղային Բետիկի սահմանին և տեղեկացրեց դժբախտության մասին, որ հասել էր արքայադստերը: Ամազանը բառ անգամ չկարողացավ արտասանել, այնքան հուզված ու մոլեգնած էր: Հագնելով ոսկենախշ զրահը, վերցնելով տասներկու ֆուտ երկարության տեգը, երկու նիզակ և «Ահեղ» կոչվող սուր թուրը, որ մի հարվածով երկու կես էր անում ծառերը, ժայռերն ու դրուիդներին, նա պսակեց իր գեղեցիկ գլուխը ձկնկուլի ու ջայլամի փետուրներով զարդարված ոսկե սաղավարտով: Դրանք Մագոգի հին ձեռքբերումներն էին, որ նվիրել էր քույրը՝ Ալդեան, Սկյութիայում եղած ժամանակ: Նրան ուղեկցող ոչ մեծաքանակ շքախումբը, ինչպես նա, հեծնել էր միաեղջյուրների:

Համբուրելով իր թանկագին Փյունիկին՝ Ամազանը նրան տխուր ասաց.
- Սա իմ մեղքն է: Եթե ես պարապ մարդկանց քաղաքում չգիշերեի դերասանուհու հետ, Բաբելոնի չքնաղ արքայադուստրը չէր հայտնվի այսքան սարսափելի վիճակում: Օ՛ն առաջ, ընդդեմ անտրոպոկայների:

Շուտով նա ոտք դրեց Սևիլիա: Մեկուկես հազար ալգվազիլներ պաշտպանում էին այն շենքի մուտքը, որտեղ հացուջրից զրկված բանտարկված էին երկու հարյուր գանգարիդներ իրենց միաեղջյուրներով: Արդեն ամեն ինչ պատրաստ էր զոհաբերությանը, ինչին դատապարտված էին Բաբելոնի արքայադուստրը, նրա աղախին Իրլան և երկու հարուստ պաղեստինցիներ:

Մեծն անտրոպոկայը, զինված կրտսեր անտրոպոկայներով, սուրբ սինկլիտում նիստ էր անում: Սևիլիացիների ամբոխը՝ գոտկատեղերից կախած տերողորմեաներով, անբարբառ կանգնած էր: Ահա բերեցին չքնաղ արքայադստերը, Իրլային և երկու պաղեստինցիներին՝ մեջքներին ոլորած ձեռքերով և ծածկված դիմակահանդեսային տարազներով:

Փյունիկը ականջ դնելու պատուհանից մտավ բանտը, ուր փակված էին արդեն դռները կոտորող գանգարիդները: Անհաղթ Ամազանը օգնում էր նրանց դրսից: Նրանք զինված, իրենց միաեղջյուրներին հեծած՝ դուրս եկան: Ամազանն անցավ ջոկատի գլուխը: Նա առանց դժվարության հաղթեց ալգվազիլներին, խուզարկուներին, հոգևորական-անտրոպոկայներին. յուրաքանչյուր միաեղջյուր դրանցից դյուժիններով էր խողխողում: Ամազանի Աիեղ սուրը երկատում էր բոլորին, ովքեր հանդիպում էին իր ճանապարհին: Սև թիկնոցներով ու կեղտոտ բրիժներով ամբոխը, ձեռքից «հանուն աստծո սիրո» սրբացած տերողորմեաները չգցելով, ցիրուցան եղավ:

Ամազանը դատավորի աթոռից քարշ տվեց «մեծն շանը» և նետեց նրան քառասուն քայլ հեռու խարույկի վրա: Նրա հետևից գնացին նաև կրտսեր շները, և դրանից հետո Ամազանը փռվեց Ֆարմազանտայի ոտքերի առաջ:
- Օ, որքան Դուք բարի եք,- բացականչեց աղջիկը,- ինչպես ես Ձեզ կպաշտեի, եթե ինձ դավաճանած չլինեիք դերասանուհու հետ:

Մինչ Ամազանը հաշտվում էր արքայադստեր հետ, մինչ գանգարիդները խարույկն էին նետում բոլոր անտրոպոկայների մարմինները, և բոցի լեզուները հասնում էին ամպերին, Ամազանին թվաց, որ իրենց հեռվից մոտենում է ինչ-որ զորք: Մի ծեր միապետ՝ գլխին թագ, նստել էր պարանով իրար կապված ութ ջորիներ լծած երկանիվը: Հարյուր ուրիշ երկանիվներ գալիս էին հետևից: Նրանց ուղեկցում էին սև թիկնոցներով ու բրիժներով մռայլ հեծյալներ՝ հրաշալի ձիեր հեծած: Յուղոտված մազերով հետիոտն մարդկանց բազմությունը լուռ հետևում էր սրանց:

Ամենից առաջ Ամազանն իր շուրջը կանգնեցրեց իր գանգարիդներին և նիզակով նետվեց առաջ: Հենց թագավորը նկատեց նրան, հանեց թագը, իջավ կառքից, երեք անգամ համբուրեց նրան և ասաց.

- Աստծո՛ առաքյալ, դուք մարդկային ցեղի համար վրեժ լուծողներն եք, իմ հայրենիքի ազատարարը, իմ հովանավորը: Այդ անիծյալ հրեշները, որոնցից դուք մաքրեցիք երկիրը, յոթ բլուրների իմաստունի կամքով իմ տիրակալներն էին: Ես ստիպված էի տանել նրանց հանցավոր տիրակալությունը: Իմ ժողովուրդն ինձ կլքեր, եթե ես ընդամենը փորձեի սանձել նրանց սարսափելի դաժանությունը: Այսուհետ ես շնչում եմ, ես թագավորում եմ և դրա համար պարտական եմ Ձեզ:
Հետո նա հարգալից համբուրեց Ֆարմազանտայի ձեռքը՝ աղերսելով նրան Իրլայի, Ամազանի և Փյունիկի հետ նստել իր կառքը, որ ութ ջորիներն էին քաշում: Երկու

պաղեստինցիներն էլ՝ պալատական բանկիրներ, վախից ու երախտագիտությունից դեռ երեսնիվար փռված, կանգնեցին, և միաեղջյուրավոր զինվորները Բետիկայի թագավորի ետևից շարժվեցին դեպի նրա պալատը:

Քանի որ այդ լուրջ ժողովրդի թագավորի արժանապատվությունը պահանջում էր, որ նրա ջորիները կառքը դանդաղ տանեն, Ամազանն ու Ֆարմազանտան հասցրին նրան պատմել իրենց ցավալի արկածների մասին: Թագավորը խոսում էր նաև Փյունիկի հետ, հիանում էր նրանով և նորից ու նորից համբուրում նրան: Նա հասկանում էր, թե Եվրոպայի՝ կենդանիներին ուտող ու նրանց հասկանալու ընդունակությունը կորցրած ժողովուրդները մինչև ինչ աստիճանի անկիրթ են, կոպիտ ու վայրենի: Միայն գանգարիդներն են, որ չեն կորցրել նախնական բնական ու մարդկային արժանիքները, բայց, ամենագլխավորը, նա համաձայնեց, որ բոլոր մահկանացուներից ամենաբարբարոսները խուզարկու-շուն անտրոպոկայներն են, որոնցից Ամազանը հենց նոր ազատագրեց մարդկությունը: Թագավորը չէր դադարում նրան իր շնորհապարտությունը հաղորդել ու օրհնել: Չքնաղ Ֆարմազանտան արդեն հասցրել էր մոռանալ դերասանուհու հետ կապված միջադեպը, նրա ամբողջ հոգին լցված էր հերոսի փառքի արձագանքով, որ փրկեց իր կյանքը: Ամազանը, իմանալով, թե որքան անմեղ է եղել համբույրը, որ տրվել էր եգիպտական փարավոնին, և այն մասին, թե ինչպես է հառնել Փյունիկը, մաքուր երջանկություն էր վայելում և հարբած էր ամենավառ սիրով:

Ճաշեցին պալատում, և ճաշը շատ վատն էր: Բետիկայի խոհարարները ամենաանշնորհքն էին Եվրոպայում: Ամազանը խորհուրդ տվեց կանչել գալլական խոհարարների: Պալատական նվագախումբը կատարում էր հանրահայտ մի արիա, որը ավելի ուշ կնքեցին որպես «Իսպանական կապրիչիո»:

Ճաշից հետո խոսեցին գործերի մասին: Թագավորը հարցրեց գեղեցիկ Ամազանին, չքնաղ Ֆարմազանտային և հրաշալի Փյունիկին, թե նրանք ինչ են մտադիր ձեռնարկել:

- Ես ծրագրում եմ վերադառնալ Բաբելոն՝ որպես գահի ժառանգորդ և իմ հորեղբայր Բելից խնդրել անզուգական Ֆարմազանտայի՝ իմ հեռավոր ազգականուհու ձեռքը, եթե միայն նա չի գերադասում ապրել ինձ հետ գանգարիդների մոտ:

- Ես որոշել եմ,- ասաց արքայադուստրը,- երբեք չբաժանվել իմ հեռավոր ազգականից, բայց կարծում եմ, ավելի արժանապատիվ կլինի, որ ես վերադառնամ իմ հոր մոտ, մանավանդ որ նա ինձ թույլատրել էր միայն ուխտագնացության գնալ դեպի Բասսոր, իսկ ես ուղևորվեցի՝ թափառելու աշխարհով մեկ:

- Ինչ վերաբերում է ինձ,- ասաց Փյունիկը,- ես ամենուր կհետևեմ այս քնքուշ ու մեծահոգի սիրահարներին:

- Դուք ճիշտ եք,- ասաց Բետիկայի թագավորը,- բայց դեպի Բաբելոն ետդարձի ճանապարհն այնքան էլ հեշտ չէ, որքան դուք ենթադրում եք: Ես ամեն օր նորություններ եմ ստանում այնտեղից Տիրի նավերի և Պաղեստինի բանկիրների շնորհիվ, որոնք առնչվում են աշխարհի բոլոր երկրների հետ: Եփրատի ու Նեղոսի ափերին պատերազմ է:

Սկյութների արքան, գլխավորելով երեքհարյուրհազարանոց հեծելազորը, պահանջում է իր կնոջը վերադարձնել ժառանգությունը: Եգիպտոսի փարավոնն ու Հնդկաստանի թագավորը՝ ամեն մեկը մի երեքհարյուրհազարանոց բանակի գլուխն անցած, նույնպես ամայացնում են Տիգրիսի ու Եփրատի ափերը՝ ցանկանալով վրեժ լուծել իրենց հասցված վիրավորանքի համար: Մինչ Եգիպտոսի փարավոնը կռվում է օտար ափերում, նրա թշնամին՝ Եթովպիայի արքան, առաջնորդում է երեք հարյուր հազար մարդուց բաղկացած բանակը՝ սնանկացնելու Եգիպտոսը: Բաբելոնի արքան իր երկրի պաշտպանության համար ունի միայն վեց հարյուր հազար մարդ: Խոստովանեմ,- շարունակեց թագավորը,- երբ ես լսում եմ այդ մեծաքանակ բանակների մասին, որոնց Արևելքը դուրս է ժայթքում իր որովայնից, և դրանց ապշեցուցիչ հոյակապության մասին, երբ համեմատում եմ դրանք մեր քսան-երեսուն հազարանոց համեստ ջոկատների հետ, որոնց այնքան դժվար է կերակրել ու հագցնել, սկսում եմ մտածել, որ Արևելքը առաջացել է Արևմուտքից զգալիորեն շուտ: Մենք կարծես երեկ-առաջին օրն ենք ծնվել քաոսից ու միայն երեկ ենք դուրս եկել բարբարոսությունից:

- Ձերդ մեծություն,- նկատեց Ամազանը,- երբեմն պատահում է, որ ավելի ուշ հայտնվածներն իշխում են նրանց, ովքեր առաջինն են ոտք դրել կյանքի ասպարեզ: Իմ երկրում ենթադրում են, որ մարդկության օրրանը Հնդկաստանն է, բայց ես դրանում համոզված չեմ:

- Իսկ Դուք,- դիմեց Բետիկայի թագավորը Փյունիկին,- Դուք ի՞նչ եք այդ մասին մտածում:

- Տիրակա՛լ,- պատասխանեց Փյունիկը,- ես դեռ շատ երիտասարդ եմ, որ իմանամ հին պատմությունը: Ես ապրել եմ շուրջ քսանյոթ հազար տարի, բայց իմ հայրը, որ ապրել է հինգ անգամ ավելի, ասում էր ինձ, որ իր հորից լսել է, իբր արևելքի երկրները միշտ ավելի հարուստ և ավելի խիտ բնակեցված են եղել, քան որիշ երկրներ: Նա իր նախնիներից լսել էր, թե բոլոր կենդանիներն իրենց ծագումով Գանգեսի ափերից են: Ես այդքան փառասեր չեմ, որ դա հաստատեմ: Ինձ համար դժվար է հավատալ, որ Ալբիոնի աղվեսները ալպիական արջամկները, Գալլիայի գայլերը՝ բոլորը ծագումով իմ հայրենիքից են, ինչպես չեմ հավատում նաև նրան, որ Ձեր հայրենիքի կաղնիները ծագել են Հնդկաստանի կոկոսի արմավենիներից:

- Այդ դեպքում որտեղի՞ց ենք մենք ծագում,- հարցրեց թագավորը:

- Ես դա չգիտեմ,- պատասխանեց Փյունիկը,- ես միայն մի բան կցանկանայի իմանալ՝ ո՞ւր պետք է ուղևորվեն Բաբելոնի չքնաղ արքայադուստրն ու իմ թանկագին Ամազանը:

- Ես խիստ կասկածում եմ,- շարունակեց արքան,- թե իր երկու հարյուր միաեղջյուրներով նա կարող է ճեղքել այդ քանակությամբ բանակները՝ բոլորը՝ երեք հարյուր հազարական:

- Իսկ ինչո՞ւ ոչ,- առարկեց Ամազանը:

Բետիկայի թագավորը գնահատեց խոսքի ուժը. «Իսկ ինչո՞ւ ոչ»: Բայց նա կարծում էր, որ թշնամու անհամար զորքի դեմ հաղթանակի համար միայն խոսքի ուժը հերիք չէ:

- Ես խորհուրդ կտայի,- ասաց նա,- դաշինք կնքել Եթովպիայի թագավորի հետ: Ես առնչվում եմ այդ սևամորթ տիրակալի հետ իմ պաղեստինցիների միջոցով: Ես հավատարմագիր կտամ ձեզ: Քանի որ նա փարավոնի թշնամին է, շատ երջանիկ կլինի մեծացնելու իր ուժերը ձեզ հետ դաշինքով: Նաև կարող եմ ձեզ օգնություն տալ երկու հազար զինվոր՝ շատ սակավապետ ու քաջ: Եթե ցանկանում եք, կարող եք այդքան էլ հավաքել այն ցեղերից, որոնք բնակվում, ավելի շուտ՝ կառչած են Պիրինեյների լեռնաճյուղերին: Նրանց կոչում են բասկեր կամ գասկոնացիներ: Ձեր միաեղջյուրավոր զինվորներից մեկին ուղարկեք նրանց մոտ, և թող նա հետը մի քանի ալմաստ տանի: Ցանկացած գասկոնացի կլքի ամրոցը, ավելի ճիշտ՝ խրճիթը, իր հորը, որ ծառայի Ձեզ: Նրանք անհաղթելի են, քաջ և ուրախ: Դուք նրանցից շատ գոհ կմնաք: Մինչ սպասում ենք նրանց, Ձեր պատվին տոնախմություն կկազմակերպենք և կսարքավորենք նավը: Ես Ձեզ միշտ պարտական կմնամ Ձեր ծառայության համար:

Ամազանն ուրախացել էր, որ նորից գտել է Ֆարմազանտային և խաղաղ վայելում էր նրա հետ զրույցը ամեն տեսակ հմայքներով հաստատուն դարձած սիրով, այնպիսի հմայքներով, որ հավասար են ծնունդ առնող սիրո հմայքներին:

Շուտով հայտնվեց ուրախ, հպարտ գասկոնացիների մի ջոկատ, որ պարում էր տամբուրեի հնչյունների տակ: Մի ուրիշ ջոկատ՝ խստադեմ ու հպարտ բետիկացիներից կազմված, պատրաստ էր: Ծեր թխամորթ արքան քնքշորեն գրկեց երկու սիրահարներին: Նա հրամայեց զենք, անկողին, սև հագուստ, սպիտակ բրիժ, շախմատ, սոխ, ոչխարի միս, հավ, ալյուր, սխտորի մեծ պաշար բարձել մեկնողների նավը և նրանց մաղթեց բարի նավարկում, հավերժական սեր և հաղթանակ: Նավատորմը մոտեցավ ափին այնտեղ, ուր, ինչպես ասում են, հարյուրամյակներ հետո փյունիկուհի Դիդոնան՝ Պիգմալիոնի քույրը, Սիխեայի կինը, Տիր քաղաքը լքելով, հիմնադրեց Կարթագեն հրաշալի քաղաքը՝ շերտերի բաժանելով ցլի կաշին,

համաձայն հնադարի ամենամեծ հեղինակների վկայության, ովքեր երբեք հեքիաթներ չէին հորինում, և ուսուցիչների վկայության, ովքեր գրում էին փոքրիկ տղաների համար: Եվ այս ամենը ասվում է՝ չնայած Տիրում երբեք Պիգմալիոն կամ Դիդոնա կամ Սիխեա անունով, այսինքն մաքուր հունական անուններով մարդ չի ապրել, չնայած որ Տիրում այն ժամանակ արքա չի եղել:

Հոյակապ Կարթագենն այն ժամանակ չի եղել ծովափնյա նավահանգիստ: Այնտեղ ապրում էր միայն մի քանի նումիդացիներ, որ ձուկ էին արևին տալիս: Հետո ճանապարհորդները նավարկեցին Բիզանցեի և Սիրտի ափերով (դրանք բերրի տարածքներ են), որտեղ հետագայում առաջացան Կիրինեան և Մեծ Խերսոնեսը: Վերջապես մոտեցան Սուրբ Նեղոսի առաջին ակունքին: Վերջապես այստեղ՝ այդ բերքառատ հողի Կանոպ նավահանգիստն արդեն այն ժամանակ ընդունում էր բոլոր առևտրական ժողովուրդների նավերը, թեպետ ոչ ոք չգիտեր՝ արդյո՞ք Կանոպ աստվածն է հիմնել այս քաղաքը, թե Կանոպի բնակիչներն են հորինել աստծուն: Արդյո՞ք Կանոպ աստղն է տվել իր անունը այս քաղաքին, թե քաղաքն է տվել իր անունն աստղին: Միայն մի բան գիտեին. և՛ քաղաքը, և՛ աստղը շատ հին ծագում ունեին: Եվ դա ամենն էր, ինչ հնարավոր էր իմանալ առարկաների ծագման մասին, որտեղից էլ որ նրանք ծագեին: Հատկապես այնտեղ Եթովպիայի թագավորը, ամայացնելով ամբողջ Եգիպտոսը, տեսավ անհաղթելի Ամազանի և չքնաղ Ֆարմազանտայի կառանող նավերը:Նա Ամազանին ընդունեց որպես ռազմի աստված, իսկ Ֆարմազանտային՝ գեղեցկության աստվածուհի: Ամազանը նրան ներկայացրեց իսպանական թագավորի տված հավատարմագրերը:Եթովպիայի թագավորը, այդ հերոսական ժամանակների սովորության համաձայն, նախ և առաջ կազմակերպեց հոյակապ տոնախմբություն:Հետո սկսեցին քննարկել, թե ինչպես ոչնչացնել Եգիպտոսի փարավոնի 300000-անոց բանակը, հետո Հնդկաստանի թագավորի 300000-անոց բանակը և սկյութների խանի 300000-անոց բանակը, որոնք շրջապատել են մեծ, ինքնագոհ, ամբարտավան Բաբելոնը:

Երկու հազար իսպանացիները, որոնց Ամազանը բերել էր հետը, հայտարարեցին, որ Բաբելոնը փրկելու համար իրենց Եթովպիայի արքան պետք չէ, որ հերիք է իրենց թագավորի հրամանը՝ քաղաքն ազատագրելու, և իրենք դրանից մենակ գլուխ կհանեն:

Գասկոնացիները հայտարարեցին, որ սա ոչինչ է իրենց տեսած ճակատամարտերի դեմ, որ իրենք մենակ կհաղթեն եգիպտացիներին, հնդիկներին ու սկյութներին, և որ իրենք համաձայն են իսպանացիների հետ արշավելու միայն այն պայմանով, եթե նրանք վերջապահ դառնան:

Երկու հարյուր գանգարիդները ծիծաղեցին իրենց դաշնակիցների ինքնավստահության վրա, հավատացնելով, որ մի հարյուրյակ միաեղջյուրով նրանք փախուստի կմատնեն երկրագնդի բոլոր թագավորներին:

Չքնաղ Ֆարմազանտան բոլորին հաշտեցնում էր խելամիտ խոսքերով: Ամազանը սևամորթ տիրակալին ներկայացրեց իր գանգարիդներին, միաեղջյուրներին, իսպանացիներին, գասկոնացիներին և իր հրաշալի թռչունը:

Շուտով ամեն բան պատրաստ էր և զորքն սկսեց արշավել Մեմֆիսի, Գելիոպոլիսի, Արսինոյի վրայով, Սորայի, Ապանեայի վրայով, որ գրոհեն երեք արքաների վրա, և որ սկսեն այն հիշարժան պատերազմը, որի համեմատ բոլոր պատերազմները, որ մարդիկ հետագայում վարել են, աքլորակռվի էին նման:

Բոլորը գիտեն, թե ինչպես էր Եթովպիայի թագավորը սիրահարվել չքնաղ Ֆարմազանտային և թե ինչպես նրա գլխին կանգնեց այն պահին, երբ քունը փակել էր աղջկա կոպերը: Բոլորը հիշում են, որ Ամազանին այդ տեսարանից հետո թվացել էր, թե նրանք գիշեր-ցերեկ միասին են: Բայց հայտնի չէ միայն, որ Ամազանը, վիրավորանքից վրդովված, հանկարծ հանեց իր թուրն ու կտրեց ամբարտավան սևամորթի մոլորյալ գլուխը և որ նա Եգիպտոսից քշեց բոլոր եթովպացիներին: Մի՞թե այս բոլոր քաջագործությունները գրանցված չեն Եգիպտոսի պատմության մեջ: Բազմաբերան ավետիսը հաղորդում էր աշխարհին հաղթանակների մասին, որ նրանք տանում էին երեք արքաների դեմ իսպանացիների, գասկոնացիների և միաեղջյուրների օգնությամբ:

Նա չքնաղ Ֆարմազանտային վերադարձրեց հորը: Ազատեց իր սիրելիի ամբողջ շքախումբը, որին փարավոնը ստրկացրել էր: Սկյութների մեծ խանն իրեն հայտարարեց նրա վասսալը, իսկ ամուսնությունը Ալդեայի հետ օրնականացվեց: Բաբելոնի գահի ժառանգորդ ճանաչված անհաղթ ու մեծահոգի Ամազանը, իրեն ենթակա հարյուր արքաների ներկայությամբ հաղթականորեն մտավ Բաբելոնի արքայություն՝ իր Փյունիկի ուղեկցությամբ:

Նրա հարսանեկան արարողությունը գերազանցում էր բոլոր այն տոնախմբությունները, որ երբևէ կազմակերպել էր Բելը: Սեղանին դրեցին Ապիս ցուլին՝ խորոված: Եգիպտոսի փարավոնն ու Հնդկաստանի թագավորը նորապսակներին գինի էին մատուցում: Այս հարսանիքը գորվերգվում էր բաբելոնական հինգ հարյուր պոետների կողմից:

Օ՛, մուսաներ, ում միշտ կանչում են աշխատանքի սկզբից: Ես ձեզ դիմում եմ իմ աշխատանքի վերջում միայն: Իզուր են ինձ մեղադրում, թե ես զատկից հետո եմ ներկած ձու մատուցում: Մուսաներ, դուք ինձ այնուամենայնիվ չեք զրկի ձեր հովանավորությունից: Թույլ չեք տա հանդուգն շարունակողներին իրենց առակներով աղճատել իրականությունը, որին ես հաղորդակից դարձրի մահկանացուներին այս ճշմարտացի պատմության մեջ, այնպես, ինչպես համարձակվեցին աղավաղել Կանդիտին, Պարզամիտին և խելամիտ Ժաննայի խելամիտ արշավանքները, որոնք ինչ-որ մի նախկին կապուցին աղճատել է կապուցինին արժանի բատավական հրատարակության բանաստեղծություններով:

Հո նրանք իմ հրատարակիչին չեն ենթարկի նման կորստի. նա բազմանդամ ընտանիքի հայր է և հազիվ է միջոցներ գտնում շրիֆտի, թղթի ու թանաքի համար:

Օ՛, մուսաներ, ստիպեք լռել գարշելի Կոժեին՝ Մազարինի վարժարանի զավզակության պրոֆեսորին, ով դժգոհ էր մնացել Յուստինիանոս կայսեր և Վելիզարի՝ բարոյականության մասին մտորումներից և հանդգնել էր զրախոսական պասկվալներ գրել այդ երկու մեծ այրերի դեմ:

Բերանը խցանեք պեդանտ Լարշեի (բանասեր թարգմանիչ, ով քննադատել է Վոլտերի պատմական հայացքները), ով հին բաբելոներեն ոչ մի բառ չիմանալով, ինձ պես չանցնելով Եփրատի ու Տիգրիսի ափերով՝ անամոթություն ունեցավ հաստատելու, թե չքնաղ Ֆարմազանտան՝ աշխարհի հզորագույն արքայի դուստրը և Ալդեա արքայադուստրը, և այդ հարգարժան պալատի բոլոր կանայք փողով անկողին էին կիսում Ասիայի բոլոր ձիապանների հետ բաբելոնական մեծ տաճարում՝ համաձայն իրենց կրոնական համոզմունքների: Այդ գիտնական-ցոփակյացը՝ ձեր և բղջախոհության թշնամին, մեղադրում է Մենդեսի գեղեցիկ եգիպտուհիներին, թե սրանք սիրել են միայն այծերին, և գաղտնի ծրագրում է գնալ Եգիպտոս՝ սիրային արկածների հետևից:

Քանի որ նոր ժամանակները նրան նույնքան քիչ են հայտնի, որքան հին դարերը, նա, հույս ունենալով ինչ-որ պառավի բարեհաճությունը գրավելու, ակնարկում է, թե մեր անզուգական Նիոնը (կուրտիզանուհի Նինոն դե Լանկլոն) ութսուն տարեկան հասակում քնել է Ֆրանսիայի ակադեմիայի անդամ Ժելուան աբբատի հետ: Նա երբեք չի լսել Շատոնեֆ աբբատի մասին (Նինոնի սիրեկանը)որին ինքը խառնում է Ժելուան աբբատի հետ: Նա նույնքան քիչ բան գիտի Նինոնի մասին, որքան քիչ գիտի Բաբելոնի օրիորդների մասին:

Մուսանե՛ր, երկնքի՛ դուստրեր, ձեր թշնամի Լարշեն ավելի վատ է վարվում: Նա գովերգում է արվամոլությունը: Նա համարձակվում է պնդել, որ իմ հայրենիքից սերված յուրաքանչյուր ոք մասնակից է այդ նողկանքին: Նա հույս ունիմեղավորների թիվն ավելացնելով փրկել իրեն:

Բարեկիրթ ու անմե՛ղ մուսաներ, դուք, որ հավասարապես ատում եք ինչպես պեդանտիզմը, այնպես էլ արվամոլությունը պաշտպանե՛ք ինձ տեար Լարշեից:

Ձեզ՝ մետր Ալիբորոն, որ կոչվում եք Ֆրերոն (հետադիմական քննադատ և հրապարակախոս, Վոլտերի թշնամին) և թոշակի անցած ճիզվիտ եք, ում Պառնասը մեկ Բիսսետրեում է, մեկ՝ մոտակա պանդոկում, ձեզ՝ ում այնքան շատ են ըստ արժանվույն սեղմել եվրոպական բոլոր բեմերում «Շոտլանդուհին» բարեպաշտ կատակերգության մեջ, Ձեզ՝ հայր դե Ֆոնտենի (գրականագետ, որ զրպարտագիր էր գրել Վոլտերի հասցեին, ինչը նրան փրկեց տաժանակրությունից) արժանի որդուն, որ ծնվել է նրա սիրային կապից այն գեղեցիկ տղաներից մեկի հետ, ով

զինված է, Վեներայի որդու պես, փայտիկով ու թևկապով, որոնք, նրանի նման, թռչում են երկինք, բայց ոչ ավելի բարձր, քան ծխատարն է, Ձեզ, իմ թանկագին Ալիբարոն, ում հանդեպ ես միշտ մեծ քնքշանք եմ տածել և ով ինձ ստիպել է ծիծաղել մի ամբողջ ամիս շարունակ, երբ ներկայացվում էր «Շոտլանդուհին» կատակերգությունը, հանձնում եմ իմ «Բաբելոնի արքայադուստր»-ը: Հնարավորինս շատ վատ բան ասեք նրա մասին, որ կարդան:

Ես Ձեզ չեմ մոռանա, լրագրող-աստվածաբան, ջղաձգականների հանրահայտ ճարտասան, աբբատ Բեշերանի և Աբրահամ Շոմեյի կողմից հիմնած եկեղեցու հայր: Մի՛ մոռացեք ձեր որքան բարեպաշտ, նույնքան պերճախոս ու տրամաբանող թերթերում հիշատակել, որ «Բաբելոնի արքայադուստրը» հերետիկոսական, դեիստական և աթեիստական է: Գլխավորը, համոզեք խնդրեմ սիր Ռիբալյեին պնդել, որ Սորբոնը դատափետի «Բաբելոնի արքայադուստրը»: Դուք դրանով մեծ հաճույք կպատճառեք իմ հրատարակչին, **ում ես այս պատմությունը մատուցեցի որպես ամանորի նվեր:**